սիրած ըլլային կամ լինէին :

Աներեւոյրով, Սիրած ըլլալ կամ լինիլ :

Խ Զ. Գ Ա Մ

ՀԱՐՑԱԿԱՆ ԶԵՒ ԲԱՅԻ

173. Հ. Հարցում ցուցնելու համար ի՞նչ ընել
պէտք է :

Պ. Հարցում կը ցուցուի ձայնիւ, այսինքն՝
բային վերջին ձայնաւորը երկարելով, և իրեւ
նշան հարցման կը դրուի այն ձայնաւորին վրայ
սա (՝) նշանախեցը որ կը կոչուի ուստին. զոր օրի-
նակ .

Կը սիրե՞ս. գնաց. պիտի գա՞ն. չե՞ս գիտեր, և:

ԲԱՇԱԾԱԿԱՆ ԶԵՒ ԲԱՅԻ

174. Հ. Հայերէն ի՞նչ ընել պէտք է բայի մը
գործողութիւնը բացասելու կամ ժխտելու համար :

Պ. Հայերէն բայի մը գործողութիւնը կը
ժխտուի և գ ժխտական մակրայներով :

175. Հ. Ո՞ւր կը դրուի ։

Պ. Զ, կը կցուի բային սկիզբը. զոր օրինակ,
սիրեցի, չիրեմ :

176. Հ. Ո՞ւր կը դրուի ՞ :

Պ. Մէ կը դրուի նոյնպէս բայէն առաջ,
բայց առանց կցուելու, և հրամայականի համար
միայն. զոր օրինակ, կըսենք, ՞ սիրեր, ՞ սի-
րէք :

177. Հ. ի՞նչ մասնաւոր գիտելիք կայ արդի հայերէնի ժխտական ձեւին վրայ :

Պ. Սրդի հայերէնի մէջ բայերուն սահմանական ներկան և անկատարը ժխտական ձեւ կ'առնուն էմ և էտ էական բայով, և գլխաւոր բային աներեւութով որոյ և գիրը փոխուած է թի, միշտ և մակրայը կցելով բային սկիզբը . զոր օրինակ .

Սահմանական ներկայ

Ջէմ սիրեր, չեմ սիրեր, չսիրեր (փոխանակ, չեմ կամ չէ սիրեր) . չեն+ սիրեր, չէ+ սիրեր, չեն սիրեր :

Անկատար

Ջէմ սիրեր, չեմ սիրեր, չէր սիրեր . չեն+ սիրեր, չէ+ սիրեր, չեն սիրեր :

178. Հ. Բային ո՞ր մասին կը կցի և մակրայը բազագրեալ ժամանակներու մէջ :

Պ. Բազագրեալ ժամանակներու մէջ և մակրայը կը կցուի գիմանար բային, և ոչ անցելոյն . զոր օրինակ, Սիրած չեմ, սիրած չես, սիրած չէին, սիրած չեմ ըլլար, սիրած չէին ըլլար, որ սիրած չըլլանք, ևա :

Խ է. Դ Ա Ս

Աշակերտը ցուցեն յաջորդ նրանանգներուն մէջ բաղադրեալ ժամանակներ, եւ հարցական եւ ժխտական ձեւներ :

20. Հրահանգ

Յակոր Արտուրէլ, գարեջրոյ վաճառական ի կանդ (կանդ քաղաքը), շատ աւելի հանճարել քան որչափ կը պահանջէր արուեստը, մեծ ազդեցութիւն ստացած էր ի Ֆլանտրա, և ապստամբեցուցած էր գլխաւոր քաղաքներն իրենց կոմին դէմ: Կոմին ապաւինած էր ի Գաղիա, և Փիլիպոս (Գաղիոյ թագաւորը) խոստացած էր նմա հաստատել զնա իւր իշխանութեան մէջ: Գաղիացիներէն յազթուելու երկիւզն ստիպեց զֆլամանս և անոնց առաջնորդը կոել դաշն Գաղիոյ մեծ թշնամւոյն, Անգղիոյ թագաւորին հետ: Ֆլանտրա յարմարագոյն տեղ էր այս վերջնոյն գումարելու հոն իւր զօրութիւնը, և այնպէս գիւրացունել իւր մուտն ի Գաղիա: Բայց խղճի վերաբերեալ կէտ մը կը սպառնար եղծանել այս միութիւնը զոր երկու երկրին եւս (Ֆլանտրայի և Անգղիոյ) օգուտը կը պահանջէր: Ֆլանտրացիք երդուած էին չաւնուլ երբէք զէնք Գաղիոյ թագաւորին դէմ, և հատուցանել Գաղիոյ երկու միւլոն ֆլորին, եթէ երբէք գրժէին այս երդման: Արտուրէլ գտաւ հնար հանդարտեցունելու Ֆլամանց Խիղճը: Առաջարկեց Եղուարդայ (Անգղիոյ թագաւորին) առնուլ Գաղիոյ թագաւորի տիտղոս: Անգղիոյ թագաւորն ի սկզբան մերժեց այս միջոցն իրբեւ ծաղրելի, բայց խորհրդականք թագաւորին, յետ խնամուլքնելց խնդիրը, որոշեցին թէ այս էր լաւագոյն միւլուածութեալ առաջնորդը:

Հոց : Եղուարդ , ինչպէս կ'ըսէ պատմիչ մը , Մեսիայի տիտղոս անգամ կ'առնուր , եթէ Նըհից հետ լինէր գործը :

21. Հրահանգ

Շինական ոմն համետեց ձին երթալ ի քաղաք : Գիտէր թէ բեւեռ մի ինկած էր ձիուն տմբակներէն միոյն երկաթէն , բայց որովհետեւ կ'աճապարէր երթալ , ըստաւ . « Թող բեւեռ մի պակասի , չէ փոյթ . ես կ'երթամ յառաջ » : Ըստ և անկաւ յուղի (ճամբայ ելաւ) . Զանապարհայն (ճամբան) միւս բեւեռներն եւս ելան , և ինկաւ երկաթը : « Եթէ գտնուէր հոս պայտառ , » ըստ մարդը , « Կրնայի գամել տալ երկաթը , բայց որովհետեւ չկայ , ձին կրնայ երեք երկաթով երթալ մինչեւ քաղաք : » Մարդն յառաջ տարաւ ճանապարհը (ճամբան) , բայց ձին վիրաւորեցաւ քարերէն , և սկսաւ կաղալ : Երբ գացին սակաւ մի յառաջ , երկու աւազակք ելան յանկարծ թուփերէն , և կուգային դէսլ ի շինականն , որ , թէպէտ ջանաց խոյս տալ , բայց չկրցաւ ի պատճառս կաղութեան ձիոյն : Աւազակներն հասան մեր ճանապարհորդին վրայ , և յետ կողղովտելոյ զնա , առին ձին սանձաւ թամբաւ և գացին : Շինականն ստիպուելով հետի գառնալ տուն , ամէն բանէ թափուր , կ'ըսէր լալով . « Կրնայի՞ զիտնալ թէ առ ի չեղոյէ մի միայն բեւեռի պիտի կորուսանէի ձիս և քսակս :

22. Հրահանգ

Տիւրաս , սպայ Օվէռնեի բանակը , ծնած էր գիւղ մը , և հայրն էր պարզամիտ շինական : Իւր արժանաւորութեամբ և քաջութեամբ հասած էր Տիւրաս յաստիճան մեծ , և եղած էր նշանաւոր իւր հաւասարակ-

ցաց մէջ : Օր մը հայրը գնաց բանակը , սանդալ յոտս ի ձեւ շինականի , տեսնել զորդին : Տիւրաս յանդիման կացոյց զնա հազարապետին . չխորհեցաւ ամենեւին թաքուցանել իւր ազգատոհմին խոնարհութիւնը : Տիւրասի այս գործին համբաւն հասաւ յունկն (ականջը) թագաւորին , որ զարմանալով թէ ինչպէս Տիւրաս , որ կը կարծուէր ազնուական տոհմէ , չհամարեցաւ ամօթձանաչել իւր հայրը , այլ այնպէս պատուով ընկալաւ զնա առանց նայելու անոր գծուծ և աննշան կերպարանաց , կոչեց զջիւրաս պալատը , պատուեց զնա տալով նմա իւր աջը և ըստ քալզրութեամբ . « Տիւրաս , տէրութեանս մէջ պատուականագոյն մարդն ես գու . կը սահմանեմ քեզ ահա թոշակ հազար սկուդ . ամուսնացիր , ես պիտի խնամեմ քու որդիներդ . արժանի ես ունենալ զսւակ , որոց թողուս անունդ և առաքինութիւններդ :

23. Հրահանգ

Երեք Ամսդերտամցի մարդիկ յուղի անկան երթալ մօտաւոր գիւղ մի , և մինչ կ'երթային , տեսան գիւղացի մի որ կու գար ի հեռուստ շտապաւ , և զոր երեք ճանապարհորդք մեր համարեցան , նայելով անոր կերպարանաց , աշխարհիս տղիտագոյն և տիսմարագոյն մարդը , և կամելով զուարճանալ ծաղրելով զնա , զատուեցան , և կեցան ճանապարհին վրայ իրարմէ հեռու՝ որոշելով ողջունել զնա ընդ խալ յանուն Նըհից երեք նահապետներուն , Արքահամու , Խոսհակայ և Յակոբայ : Մինչ այս մինչ այն (այս միջոցին) գիւղացին կը հասնի . կը մօտենայ առաջնոյն որ ողջոյն կու տայ նմա սցսպէս . « Ողջ լեր , հայր Արքահամու : » Գիւղացին ծանրութեամբ ըսելով միայն , « Ողջոյն , » կ'անցնի : Յառաջ երթալով կը հանդիսի երկրորդին որ կ'ըսէ , « Ող-

Հոյն, հայր իսահակ: » Այս անգամ եւս գիւղացին կուտայ նոյն պատասխանը: Եթբ աւելի յառաջանալով կուդայ երրորդին, և կը լսէ, «Ողջոյն, հայր Յակոբ, » դառնալով կ'ըսէ ծալրածուին. « Բարեկամ, կը սխալք, ես Արքահամ չեմ, և ոչ իսահակ և ոչ Յակոբ, այլ Սաւուղ եմ ես, որդին կիսեայ, և ելած եմ ի ինդիր հօրս էշերուն, բայց կը տեսնեմ արու էշեր, մինչ մերքն մատակ էին: »

24. Հրահանգ

Մեր մտերմագոյն բարեկամութիւնք անգամ կը թուին ունենալ պէտս արծարծուելու սիրոյ արտաքին նշաններով, որպիսի են գդուանք, համբոյր: Գդուանք կը ծնուցանեն գդուանս: Գդուող մանուկն աւելի կը սիրուի և աւելի կը սիրէ, քանզի կ'արծարծէ գութիւր և իւր ծնողաց սրտին մէջ: Բայց, եղուկ, տարիք կը մարեն յանզգայս սիրոյ այս բորբոքումը: Եթբ կը հասնինք յարբունս (չափահաս կ'ըլլանք), կ'ամաչեմք մեր սէրը թափել դուրս միամուռութեամբ, և չենք խորհիր թէ այս խորշումը որ արտաքուստ է՝ տակաւ կը հազորդի ներս, և կ'ուժացունէ (կը պաղեցունէ) զմեզ: Այսաէս շատ անգամ օտարութիւն կը գտնէ մուտ ազգականաց մէջ անգամ, և սիրոյ երկուստեք նուազութիւն, որ կը բաժնէ յաւիտեան, և կ'ընէ զնուսա օտարագոյն քան զօտարս, նաեւ թշնամի իսկ: Եթէ հաւաստեաւ քննենք, կը տեսնենք որ առաջին օրէն որ մոռցանք համբուրել մեր հայրը կամ մայրը կամ քոյրը, յելանել մեր յանկողնոյ (անկողինէն ելած ատեննիս), էինք պակասեալ ի սիրոյ: Տղայութեան գդուանաց և համբոյրներուն կորուստը ողբալի է, քանզի է բուն պատճառներէն մին որ կը ջնջեն ընտանեկան սէրը, որ բոլոր բարեկամութեանց քաղցրագոյնը, անդագոյնը և օդտակարագոյնն է:

25. Հրահանգ

Ամենայն ինչ ի մարդն, արտաքինն անգամ, կը ցուցընէ անորնառաւելութիւնն ուրիշ բոլոր չնչաւորաց վրայ: Մարդն է որ կը կենայ և կը գնայ (կը քալէ) կանգուն և ուղղորդ: Կշխանութեան ձեւ է այս: Ունի գլուխ որ կը նայի ի վեր կոյս: փառաւոր կերպարան՝ ուր գրոշմուած է մեծութիւն: դէմք՝ ուր նկարուած է պատկեր հոգւոյն: բոլոր մարմինն հայելի է նորա բնութեան առաւելութեանը, և երկնային իմն հուր կը լուսաւորէ անոր երեսին վրայ ամէն ծիր և խորշ: Պատկառելի կեցուած, հզօր և պերճ գնացք (քալուածք) կը ցուցնեն ազնուականութիւն և աւագութիւն: մարմնոյն հեռաւոր ծայրերովը միայն կից է երկիր: բարձուէն կը նայի ի գետին և կ'արհամարհէ: Բազուկներուն վրայ չէ որ կը յենու մարմնոյն ծանրութիւնը, ձեռքը չեն շօշափեր հողը, և ոչ ստէպ շրիմաք ընդ գետին կը փալարին մինչեւ կորուսանել շօշափման նուրբ նուրբ ազգումներն որ մեծագոյն առաւելութիւնք են մարդուն: Բազուկը և ձեռքը տըրուած են մանաւանդ ի պէտս ազնուագոյն գործոց, այն է՝ կատարել կամաց հրամանները, հեռացունել արդելներ, չժողովու որ ընդհարմունք կամ հարուածք մնասեն մարմնոյն, բոնել և առնուլ ինչ որ հաճոյական է, և տալ վայելել զայնս միւս զգայնոց (զգայարանաց):

Խ Ը Ա Դ Ա Ս

6. Մ Ա Կ Բ Ա Յ

179. Հ. Ի՞նչ է Մակրայ :

Պ. Մակրայ կը կոչուին այն բառերը որ կը ցուցնեն բային գործողութեան որպիսութիւնը, տեղը, ժամանակը . զոր օրինակ, Յստու կը խօսիմ . Ներս մտաւ . Այսօր պիտի երթայ . այս օրինակներուն մէջ յարակ, ներս, այսօր, մակրայ են . առաջինը կը ցուցնէ թէ Էնցիս կը խօսիմ, երկրորդը՝ թէ ուր մտաւ, երրորդը՝ թէ Ե՞րբ պիտի երթայ :

180. Հ. Մակրայը ի՞նչպէս կը ճանչցուի :

Պ. Մակրայը կը ճանչցուի Է՞նցիս, ՞՞ուր, Ե՞րբ հարցմամբ :

181. Հ. Մակրայը բային գործողութեան որպիսութիւնը միայն կը ցուցնէ :

Պ. Մակրայը կրնայ ցուցնել նոեւ Ածականի և ուրիշ Մակրայի մը որպիսութիւնը . զոր օրինակ, շատ կամ յայծ մեծ, յայծ բարւոք : Առաջին օրինակին մէջ յայծ մակրայը մէծ ածականին, երկրորդ օրինակին մէջ նոյն յայծ մակրայը բարւոք մակրային սաստկութիւնը կը ցուցնէ :

182. Հ. Զկայ ուրիշ տեսակ Մակրայ :

Պ. Կան Մակրայներ որ կը ցուցնեն թիւ կամ Չափ, ինչպէս Երկեց, մշտ, յայծ . կան եւս որ հարցման համար կը գործածուին, զոր օրինակ, Է՞նցիս, ՞՞ուր, Ե՞րբ, Շնորհը (Էնց համար), ՞՞ըստ :

183. Հ. Այս այլեւայլ տեսակ մակրայներն ի՞նչպէս կը կոչուին :

Պ. Որպիսութիւն ցուցնող մակրայները կը կոչուին Որակական, տեղ ցուցնողները՝ Տեղական, ժամանակական, թիւ կամ չափ ցուցնողները՝ Քանակական, հարցում ցուցնողներն՝ Հարցական :

184. Հ. Յիշէ քանի մը որակական մակրայ :

Պ. Որակական են, աղջի, գէշ, ուսուաղջի, արտէ, Հղուալ (կամաց), առեւս (երթալով), ճշրիւ, սուսադիւ, ևա :

185. Հ. Յիշէ քանի մը տեղական մակրայ :

Պ. Տեղական են, ասոր կամ հոս, անոր կամ հոս, Երը, Հարը, ուսուրաց, ներսը, մէջը, ևա :

186. Հ. Յիշէ քանի մը ժամանակական մակրայ :

Պ. Ժամանակական են, այժմ կամ հիմա, յայնժամ կամ անապես, այսօր, վաղիւ, երած կամ յերս, յաւած, Երբեմ, ևա :

187. Հ. Յիշէ քանի մը քանակական մակրայ :

Պ. Քանակական են, շատ, առավանց, շատ անշատ կամ յանձնի, յայլափ, այլափ, ևա :

188. Հ. Յիշէ գլխաւոր հարցական մակրայներ :

Պ. Հարցական են, Շնորհը կամ ինչո՞ւ համար, վերարտ կամ Է՞նցիս, ՞՞ուրտ, ՞՞ունէ, որպէսէ կամ Է՞նչպէսէ, ևա :

189. Հ. Մակրայ շինող ի՞նչ մասնաւոր մասնիկ կայ Հայերէն :

Պ. Հայերէն մակրայ շինող մասնիկ են, ոէս և բար որ անուան մը վերջը կցուելով կ'ընեն զայն մակրայ . զոր օրինակ . Քանակական կուուցաւ . Թագադարաբար կ'ապրի :

JOSEPH QUINN

7. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

190. Հ. Ի՞նչ է Նախադրութիւն :

Պ. Խնչ որ մակրայները կը ցուցնեն մնան,
այսինքն գործի մը որպիսութիւնը, տեղը և ժա-
մանակը, նոյնը կը ցուցնեն նախադրութիւնը ուրիշ
բառով մը, որ կը կոչուի նախադրութեան խորհրդ :

191. Հ. Կրնան նախադրութեան օրինակ մը տալ:
Պ. Յիսուս ծնաւ է Բենվանեա (Բեթղեհեմի մէջ), առ Հերովուն (Հերովլեսի ժամանակ) :
Այս օրինակին մէջ է նախադրութիւնը Բենվանեա խնդրով կը ցուցնէ ծննդեան տեղը . առ ծնաւ , է Բենվանեա : առ նախադրութիւնը Հերովուն (խնդրով կը ցուցնէ ծննդեան ժամանակը . ե՞րբ ծնաւ . առ Հերովուն (*) :

193. Հ. Աւրիշ ի նչ տեսակ նախադրութիւն կայ
Պ. կան տեսակ մը նախադրութիւններ ող
հին հայերէնի յատուկ են և կը կոչուին նախադիք
ինչպէս, է, առ, ընդ, ըստ, թէպէտ արդի լեզուին
մէջ եւս կը գործածուին երբեմն. ինչպէս, կը-
սուի, չըեշտակ է արժի, մարմնի մէջ հրեշտակ.
Ընդ հովանեաց նորա, նորա հովանւոյն տակ. լուր կար-
ծեաց բարեկան. մարդոց կարծիքին համեմատ:

$\sigma \cdot \eta_{U,U}$

8. ՏԱՂԿԱՊ

194. Հ. Ի՞նչ է Շաղկապ :

¶. Շաղիապ կը կոչուին այն բառերը որ կը կապեն իրարու հետ երկու կամ աւելի անուն, և կամ, երկու կամ աւելի իմաստ : Ես և եղբայրս . ես կ'ուզեմ , բայց եղբայրս չուզեր : Այս օրինակ-ներուն մէջ , և . բայց , շաղիապ են . առաջինը , և , կը կապէ ես և Եղիայր անունները . երկրորդը , բայց , կը կապէ ես Կ'ուզեմ , Եղիայր շաղէր իմաստները :

195. Հ. Որո՞նք են գլխաւոր շաղկապք :

Պ. Գլխաւոր շաղկապներ են, և բայց, ենք,
մենք, սակայն, մեռէքո, վասն զի կամ ժանդէ, որովհետեւ,
երբ, եւ:

ση. Την

9. Ա Ի Զ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ

196. Հ. Ի՞նչ է Միջարկութիւն

Պ. Միջարկութիւն կամ Զայնարկութիւն կը կոչ-
ուին այն բառերը որ կը ցուցնեն կիբը, այսինքն,
զարմանք, ուրախութիւն, տրտութիւն, արհա-
մարհանք, եւ, ինչպէս ո՛վ, ո՞հ, բա՛բէ, ուսո՞վ, վա՞վ, է՞վ:

(*) Սյսօրինակին մէջ է եւ ու Նախադրութիւնները ղրինք ըստ հին լեզուին, զրաբրի, բանզի արդի լեզուն, աշխարհաբարը, աղքատ է Նախադրութեամբ :

Ծ Բ. Դ Ա Ա

Յաջորդ նրանանգերուն մեջ աշակերտք ըսեն իւրաքանչյալք բառի քերականական բնուրինց , զոր օրինակ թէ բառը գոյակա՞ն է թէ ածական , բայ թէ մակրայ , եւայլն , հանդերձ իւր սարօր :

26. Հրահանգ

Սակայն սովոր կը տեւէր ամենայն սաստկութեամբ բոլոր երկրի վրայ : Յակոր ըսաւ իւր որդիներուն . «Գացէք միւսանդամ յԵղիպտոս բերել մեղ պաշար և Յուդա պատասխան տուաւ իւր հօրը . «Եթէ կամիս որ երթանք , զրկէ մեր հետ զիենիամին . ես երաշխաւոր եմ այդ պատանեկին համար . ինչ պահանջէ զնա : » «Եթէ այդպէս է , ըրէք ինչ որ հաճոյ է ձեր առջեւ» , ըսաւ Յակոր : «Բայց , » ըսաւ , « առէք երկրիս ընտիր ընտիր պտուղներէն , տանել ընծայ այն մարդուն որ իշխան է Եգիպտոսի : Առէք նաեւ երկիցս այնչափ արծաթ որչանի առաջին անդամ , տարէք նաեւ զայն զոր բերիք ձեր քուրձերուն մէջ , գուցէ դաւ էր այն : » Եւ թողուց զնոսս մեկնել , աղաչելով զամենակալն Աստուած տալ նոցա զիւր պաշտպանութիւն : Յովսէփ լսելով թէ դարձած էին եղբարք իւր , և թէ իննիամին էր անոնց հետ , հրամայեց իւր տան հազարապետին պատրաստել սեղան : Երբ Յովսեփիայ եղբայրներն ելան անոր առջեւ , մատուցին նմա իրենց ընծաներն՝ խոնարհելով անոր առջեւ գետին , և Յովսէփ ողջոյն տուաւ նոցա և հարցուց . «Ձեր հայրն , այն բարի ծերունին , որոյ վրայ խօսեցաք , կ'ապրի՞ գեռ , և առո՞ղջ է : » Եւ տեսնելով զիենիամին , իւր համամայր եղբայրն , ըսաւ . «Այդ է ձեր կրտսեր եղբայրն . Աստուած ողորմի քեզ , որդեակ , և պահէ գքեղ միշտ » :

Եւ աճապարեց (փութաց) ելաւ գուրս , քանզի խորովեցան աղիքը (գութը շարժեցաւ) իւր եղբօր վրայ , և չկրցաւ բունել արտօսրը : Երեսը լուանալէ ետքը մտալ դարձեալ ներս՝ բուռն ընելով իւր անձին , և որովհետեւ ճաշը պատրաստ էր , բազմեցաւ սեղան իւր եղբայրներուն հետ :

27. Հրահանգ

Ճաշէն ետքը Յովսէփ պատուիրեց իւր հազարապետին լնուլ իւր հիւրերուն քուրձերը ցորենով , դնեւ իւրաքանչիւրին արծաթը իւր քրձին մէջ , նաեւ իւր բաժակը դնել ի քրձին (քուրձին մէջ) իննիամինի : Այն ինչ մեկնած էին նոքա (անոնք երթալուն պէս քաղաքէն , հազարապետն հասաւ վրայ , և պահանջեց իւր տիրոջ բաժակը : Խսկոյն բացուեցան քուրձերը , և բաժակը գտնուեցաւ իննիամինի քրձին մէջ : Զայս տեսնելով ամէնքը բունուեցան ահիւ (վախով) , պատառեցին իրենց հանդերձները և դարձան ի քաղաք : Յովսէփ ըսաւ անոնց , « Ընդէ՞ր ըրիք այս բանը , չըի՞ք գիտեր որ չկայ ոք հաւասար ինձ հմայելու արուեստին մէջ : Թող ուրեմն այն որոյ քրձին մէջ գտնուեցաւ բաժակը՝ գերի լինի ինձ . դուք գացէք ձեր երկիրը : » Յառաջ մատեաւ Յուդա և ըսաւ . « Տէր իմ , ձեր ծառան , մեր հայրը , պիտի մեռնի ցաւէն , եթէ ելնեմ անոր առջեւ առանց այս պատանեկին , քանզի երաշխաւոր եղած եմ սորա համար մեր հօրը . թող ուրեմն ես լինիմ ձեր գերին , և պատանեակդ երթայի իւր եղբայրներուն հետ : » Յովսէփ այլ եւս չկրնալով բունել զինք . հրամայեց բոլոր Եգիպտացւոց ելնել գուրս , և լալով բարձրաձայն՝ ըսաւ իւր եղբայրներուն . « Աս եմ Յովսէփ , ձեր եղբայրը . ըսէք ինձ , ո՞ղջ է հայրս : » Սարսափեցան եղբայրները և կեցան

լուռ , և Յովսէփի երկրորդ անգամ ըստ անոնց քաղցրութեամբ , « Մօտ եկէք , ես եմ Յովսէփի , ձեր եղբայրը , զոր վաճառեցիք . բայց մի վախնաք , Աստուած զրկեց զիս յԵղիպտոս ձեր փրկութեան համար : Գացէք , պատմեցէք հօրս ինչ որ տեսաք , և փութով բերէք զնա հոս : Կու տամ ձեղ Գեսեմի երկիրն ի բնակութիւն , և կը կերակրեմ զձեզ , քանզի տակաւին հինգ տարի պիտի տեւէ սովոր : » Եւ իյնալով Տենիամինի պարանոցն՝ համբուրեց զնա : Համբուրեց նաեւ միւս եղբայրները , որ ոդի առին և քաջալերուեցան :

28. Հրահանգ

Յովսէփի պատուիրեց իւր մարդոց տալ իւր եղբայրներէն իւրաքանչիւրին կրկին հանդերձ , իսկ Տենիամինի՝ հինգ հանդերձ գեղեցիկ յոյժ , և երեք հարիւր դաշեկան արծաթ : Դրկեց նոյնչափ դաշեկան և ուրիշ չափ բաներ իւր հօրը : Եւ Փարաւոն տուաւ բազմութիւն կառաց բերել զջակոր բոլոր ընտանեօք և ստացուածով հանդերձ : Երբ լսեց պատուական ծերունին իւր որդւոց բերնէն ինչ որ պատահած էր նոցա յԵղիպտոս , և տեսաւ Փարաւոնի կառաց և երիվարաց քազմութիւնը , և ընծաներն զորս զրկած էր Յովսէփի , գոչեց . « Երանելի՝ եմ , վասն զի որդին իմ Յովսէփի կենդանի է . երթամ տեսնել զնա մինչգեռ (քանի որ) կենդանի եմ : » Յակոր մեկնեցաւ բոլոր ընտանեօք և բոլոր աղխիւ (ունեցածով) երթալ յԵղիպտոս : Յովսէփի գնաց ընդ առաջ կանչ հօրն (հօրը դիմացը) և լացաւ անոր պարանոցին վրայ : Յետոյ հանեց զնա Փարաւոնի առջեւ , որ հարցուց նմա թէ քանի տարուան էր : Յակոր պատասխանեց , « Հարիւր և երեսուն տարի է որ կը պանդխամբ երկրիս երեսը , և այս տարիները որ պակաս են քան իմ հօրս և հաւերուս տարիները՝ լի

եղան ցաւօք և հեծութեամբ : » Յովսէփի , ըստ հրամանին Փարաւոնի , տուաւ իւր հօրը և եղբայրներուն ժառանգութիւն զիւամսէս , Եղիպտոսի երկիրներուն պտղաբերագոյնը :

29. Հրահանգ

Յակոր ապրեցաւ եօթնեւտասն ամ եւս (տասնը եօթը տարի ալ) յԵղիպտոս : Երբ զգաց թէ պիտի մեռնէր , երդմնեցուց զջովսէփի տանել թաղել զնա իւր հարց գերեզմանը , յետոյ օրհնեց Յովսէփայ երկու որդիքը , զԵփրեմ և զՄանամէ : Ապա կոչելով իւր բոլոր որդիներն անկողնին քով խօսեցաւ անոնց իւրաքանչիւրին ծանրութեամբ մարդարէական պատգամներ : Իւր անդրանկան , Ռուբենի , յիշեցուց մեծ ոճիրը զոր գործած էր նա . Շմաւոնի և Ղեւեայ՝ անդութ վրէժը զոր առած էին նոքա Սիւքեմացիներէն : Գալով Յուդայի , իւր չորրորդ որդւոյն որմէ պիտի գար Մեսիան՝ ըստ . « Յուդա , քու եղբայրներդ գովեն զքեզ , քու ձեռքդ դնէ ընդ լծով (լուծի տակ) քու թշնամիներդ : Քու հօրդ որդիքը երկրպագեն քեզ : Գաւազանը չակեսի Յուդայէ մինչեւ դայ այն որ պիտի լինի իշխան , և հեթանոսք պիտի յուսան ի նա : » Երբ Յակոր դաշտեցաւ խօսելէ , կցեց իւր ոտուըներն անկողնին վրայ և մեռաւ : Յովսէփ տեսնելով որ այլ եւս չկար իւր հայրը , ինկաւ անոր վրայ և լացաւ : Յետոյ պատել (մոնեա ընել) տուաւ անոր մարմինն ըստ օրինի Եղիպտացուց , տարաւ զնա անձամբ իւր եղբայրներուն հետ Փանանացուց երկիրը , և թաղեց մեծ պատուով Մակելայի այրը , մօտ ի Քերրոն :

Հետ մահուան Յակոբայ՝ Յովսեփայ եղբայրներն ա-
ղաջեցին զՅովսէփի ըսելով, «Ոհ, տէր, կ'աղաջենք, մի
յիշեր յանցանքը զոր գործեցինք քեզի դէմ. անյիշա-
չար եղիր մեզ, աղէ՛» Յովսէփի հանդարտեցուց զնո-
սա քաղցրութեամբ և գթով։ Այն ատեն էր նա յի-
սուն և վեցամեայ, և ապրեցաւ այլ եւս յիսուն և չորս
տարի, միշտ սիրելի և մեծարոյ յաշս Եղիպտացուց,
որոց փրկիչն եղած էր նա : Յովսէփի յառաջ քան զիւր
մահն ըստ եղբայրներուն. «Աստուած այցելութիւն
պիտի ընէ ձեզ օր մը, և տանի զձեզ այս երկրէն յայն
զոր խոստացաւ մեր հայրերուն։ Երդուէք ինձ տանել
իմ մարմինս ձեր հետ Եղիպտոսէ։» Անոնք երդուան
նմա : Յովսէփի մեռաւ հարիւրեւտասնամեայ, անոր
մարմինը զմիւսուելով դրուեցաւ դագաղ, և մնաց
այնպէս, մինչեւ համեցաւ Աստուած դարձունել իւր
ժողովուրդը Քանանու երկիրը։

ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

Ծ Գ. Դ Ա. Ա

197. Հ. Ի՞նչ է Համաձայնութիւն :

Պ. Համաձայնութիւն կը կոչուի քերականու-
թեան այն մասը ուր կը ցուցուի թէ ի՞նչ պաշտօն-
ներ կը կատարեն բառք խօսքի մէջ։

198. Հ. Ի՞նչ պաշտօններ են զորս կը կատարեն
բառք խօսքի մէջ :

Պ. Բառերը խօսքի մէջ կը կատարեն 1. Տէր
բայիի, և 2. Լրացոցի պաշտօն։

1. Տ Է Բ Բ Ա Ց Ի

199. Հ. Ի՞նչ է Տէր բայի :

Պ. Տէր բայի կը կոչուի խօսքի մէջ այն բառը
որ կը ցուցնէ բային գործը կատարողը կամ կըու-
ղը. Դոր օրինակ. Ես կը կարդամ. Եվայս կը գրէ.
Մարտէն կը ծնանին և կը մեռնին։ Այս օրինակնե-
րուն մէջ, Ես, Եղբայր, Տարտէն, տէր բայի են. ա-
ռաջին երկուքը կարդալու և գրելու գործն իբրեւ
կատարողը, և երրորդը՝ ծնանելու և մեռնելու
գործերն իբրեւ կըողք։

200. Հ. Տէր բային և բայն Բնչ կամ ունին իւրաքու հետ :

Պ. Բայը պիտի համաձայնի , դէմքով և թուով Տէր բայիին հետ , որ միշտ ուղղական հուլով է :

Այսինքն , Եթէ Տէր բային առաջին , Երկրորդ , Երրորդ դէմքի անուն կամ դերանուն է , Եղակի կամ յոքնակի , բայն եւս պիտի դրուի առաջին , Երկրորդ , Երրորդ դէմք , Եղակի կամ յոքնակի :

201. Հ. Եթէ տէր բային Բաղադրեալ , այսինքն Երկու կամ աւելի անուն է , բայն Բնչ թիւ կ'առնու :

Պ. Եթէ տէր բային Բաղադրեալ , այսինքն Երկու կամ աւելի անուն է , բայը կը դրուի յոքնակի , ինչպէս , Մարդիկ և անսասան + կը մւռնին . Մեր հայրը , հայր և դաստիարակներն կը հոգն և կը հրնեն զմեզ :

202. Հ. Եթէ տէր բայինները տարբեր դէմքի բառեր են , բայն Բնչ դէմք և թիւ կը դրուի :

Պ. Եթէ տէր բայիններն են տարբեր դէմքի բառեր , այսինքն մին՝ առաջին , և միւսն՝ Երկրորդ կամ Երրորդ դէմքի բառ , և , բայը կը դրուի յոքնակի և կը համաձայնի պատուաւոր դէմքին հետ , զոր օրինակ , Ես և հայր պիտի ժան + :

Այս օրինակին մէջ Ես առաջին դէմքի դերանուն է , հայր (ինչպէս ամէն դոյցական անուն) Երրորդ դէմքի անուն . և որովհետեւ առաջին դէմքը պատուաւոր է քան Երրորդը , բայն յոքնակի առաջին դէմք դրուած է :

203. Հ. Տէր բային ճանչնալու Բնչ դիւրին կանոն կայ :

Պ. Տէր բային կը ճանչցուի ՞լ կամ ՞նշ հարցմամբ , զոր օրինակ , Ես կը կարդամ . Ես է

տէր բայի , վասն զի կը պատասխանէ ՞լ հարցման . ՞լ կը կարդայ . — Ես : Երկիրը շարժեցաւ . Երեւէ Ետէր բայի , վասն զի կը պատասխանէ ՞նշ կամ ՞նշ նահանական . Բնչ բան շարժեցաւ . — Երեւէ : Ապա Ես տէր բայի է և իւրբոք բացին , իսկ Երեւէ շարժեցաւ բային :

ԾՐԱՀԻԱՆՈՒՅՆ

31. ՀՐԱՀԻԱՆՈՒՅՆ

Ուսանող ոմն Երիտասարդ հայոց օր մը Տիւհամէլ անուն փիլիսոփային այնպիսի բան մը , որոյ վրայ Տիւհամէլ վէր կարող որոշ պատասխան տալ , վասնզի գիտութիւնը գեռ լուսաւորած վէր այն խնդիրն . ուստի , առանց վարանելու (տարակուսելու) , բրաւ ինչ օր ամէտ էր ընել այնպիսի պարագայներու մէջ , այսինքն համեստութեամբ Խոսքովնեցաւ իւր տղիտութիւնն ըսելով , « Զեմ քիաթէր : » Երիտասարդը չինելով գոհ այս պատասխանէն՝ լուս հեգնութեամբ (ծաղրելով) . « Ի՞նչ օգուտ է ուրեմն լինել անդամ ճեմարանին : » (Քանզի Տիւհամէլ անուանուած էր մշտնջենաւոր քարտուղար գիտութեանց ճեմարանին Բարիզու , Երբ ճեմարանն հաստատուեցաւ :) Քիչ Եաքը հարցում Ելաւ Երիտասարդին ուրիշ անորոշ խնդրոյ վրայ : Երիտասարդ ուստանողն չուրանեցաւ , ակաւ կակազել (գէկէլմէր) , բայց չկամելով Երեւել տղէտ , որուաւ այնպիսի պատասխաններ որ վէն հնար գոհ ընել ունկնդիրներն , և յայտնի Ելաւ Երիտասարդին տղիտութիւնը : Յայնժամ (անատեն) Տիւհամէլ հանդարտութեամբ լուս Երիտասարդին . « Հիմա իւ ուեսնես , սիրելի , թէ ինչ օգուտ ունի լինել

անդամ ճեմարանին . մարդ կ'ուստանէ չմխել (չմտնել)
այնպիսի խնդիրներու մէջ որոց վրայ լսնէ քաջ տեղե-
կութիւն : »

Այս հրահանգին մէջ աշակերտք ցուցնեն նօտր զրով
նշանակուած բայերուն տէր բայիները : Պէտք է զիտ-
նալ որ հայերն դիրանուն տէր բայիները զանց կ'առ-
նուին , երբ իմաստին յայտնի է քէ ո'վ կամ ի'նչ բան է
բային զործը կատարող :

32. Հրահանգ

Երկու բարեկամ , թէպէտ տարբեր խառնուածով ,
իօնել (անկ.) օր մը իրենց զրազմանց և նպատակներուն
վրայ : Մին , ջերմ (կրակոտ) և փառասէր , պատմել
(կատ.) մեծարանութեամբ (պարծենալով) երեւելի գոր-
ծեր զորս կ'առարիւ (գերակտ.) մեծ իմաստութեամբ ,
դժուարին ճանապարհորդութիւններ զորս Շնել (գե-
րակտ.) մեծամեծ վուանդներով , միջոցները զորս ի՞որ-
հել (գերակտ.) անդուլ անդադար (միշտ) հասնելու հա-
մար իւր փափաքանաց , և վերջուանել (կատ.) պատ-
մութիւնը սա ախուր բանիւք . « Աւանդ , բարեկամ ,
ի'նչ գժուարին էմ (ներկ . եղ . Գ. դէմք) լինել երջա-
նիկ : » Միւսը , որ էմ (անկ.) հանդարտաբարոյ և հա-
մեստ , սկսիլ (կատ.) պատմել նման թէ ինչպէս սովոր էմ
(անկ.) շատանալ (գոհ ըլլալ) , սակաւուք , սկսիլ (անկ.)
մշակել իւր պարտէզը , ֆունալ (անկ.) միշտ խնամ տա-
նել իւր ընտանեաց , լանալ (անկ.) չափ դնել (զսպել)
իւր լեզուին և ախորժակներուն , և ի վախճանի շնել
(կատ.) կարելցութեամբ նայելով ընկերին . « Բարէ ,
սկրելի , ինչ գիւրին էմ (ներկ . եղ . Գ. դէմք) լինել եր-
ջանիկ : »

33. Հրահանգ

Երկու մարդիկ որ չվեցուանել (անկ.) իրենց հետ արջ
մի քաղաքէ քաղաք , հանձել (կատ.) օր մը երեկոյին ա-
նագան (ուշ) յոյժ գիւղի մը պանդոկը , ուր կ'ամբել (կտ.)
ագանել (օթեւանել) այն գիշեր : Պանդոկապետն որ
այն ինչ վաճառել (գերակտ.) խոճկոր (մատաղ խող) մի
զոր մասանել (գերակտ.) երկու տարի , դնել (կատ.) ար-
ջը գոմ (եղան ախոռ) մի ուր պանձել (անկ.) առաջ խո-
զը : Կէս գիշերին գրացիներէն մին ժալ (կատ.) դիտա-
ւորութեամբ գողնալու պարարեալ (գիրցած) խոզը ,
քանզի ժիբնաւ (անկ.) թէ խոզը հրանուանել (գերակտ.) ,
բայց չէ դնաւ (անկ.) թէ վաճառաւ (գերակտ.) նոյն օրը :
Ռւստի առանց կասկածանաց բանաւ (կատ.) մեղմով (կա-
մաց մը) գոմին դուռը , ժնենել (կատ.) ներս , և ի մթան
(մութ տեղը) բնաւ (կատ.) արջը փոխանակ խոզին զոր
կաթել (անկ.) հոն : Արջը ենել կաթել (կատ.) ահագին
գոչիմամբ . և գերլով (երկնցունել) երկու առաջոյ թա-
թերը գողին վրայ , պնդել (կատ.) զնա այնպէս ուժգին
(ուժով) , որ անհնարին էմ (կատ.) գողին շարժել , և
չգտնելով հնար պրծելու արջուն ճիրաններէն , սկսիլ
(կատ.) ահէն և ցաւէն ձչել (պոռալ) մեծաձայն , մին-
չել արնանաւ (կատ.) պանդոկին բոլոր մարդիկը , և դի-
մելով դէպ ի գոմին ուստի ժալ (անկ.) գոչիւնը , ժնենել
(կատ.) ներս , և հազիւ հրան (կատ.) արջուն տեարքն
ազատել գողը գաղանին թաթերէն : Գողն աշոտել (կտ.)
արդարեւ այս վտանգէն , բայց իրեւ յանցուոր ժար-
նաւ (կատ.) սատիկանութեան ձեռքը :

Այս հրահանգներուն մէջ բայերը զրուած են անե-
րենոյք . աշակերտք բող փոխեն աներենոյքներն դիմա-
ռոր բայի , նշանակեալ ժամանակներուն համեմատ :

Օ Ե · Դ Ա Ա

Հ . Լ Ի Ա Յ Ո Ւ Ց Ւ Զ

204. Հ Ի Ն Հ Է Լ Ր Ա Գ Ո Ւ Ժ Ի Հ :

Պ. Լ Ր Ա Գ Ո Ւ Ժ Ի Հ : Կը կոչուի խօսքին այն մասը որ
խօսքին խմասով կ'ամբողջացունէ . զոր օրինակ, երբ
կ'ըսեմ , Ուրեն պատկ է , կատարեալ խմաստ չեմ
տար . բայց երբ կ'ըսեմ , Հնաշնորդ որդին պսակ է
էւր հօրը . կու տամ կատարեալ խմաստ . հնապանդ ա-
ծականը և էւր հօրը բառերը կ'ամբողջացունեն , կը
լրացունեն խօսքը : Նոյնպէս երբ կ'ըսեմ , Հայր իւ
սկէ , անկատար խօսք է . խօսքը կ'ամբողջանայ ,
երբ կ'ըսեմ , Հայրը կը սիրէ արդին . Հայցական ա-
նունը , արդին , կ'ամբողջացունէ խօսքը . ապա , հնա-
շնորդ , էւր հօրը , արդին , լրացուցիչ են :

Յաջորդ հրահանգին մեջ նօտր զրոյ նշանակուած
բառերը լրացնեցիւ են :

34. Հ Ր Ա Հ Ա Ն Ա Գ

Յաջողութիւնը չկրցաւ գույշունել (ուռեցունել) Ա-
ժանակնեսէ սրբը , և ոչ փոփել անոր մբարք : Եղաւ նա մշտ
պարը , և թէպէտ բազմացաւ անոր հարստութիւնը ,
չփոխեց նա էւր բարքը : Բբարք արդէ էր , և ելաւ մնաց-
անու նաժառարսունեան , բայց և այնպէս չմեծամուցաւ
(հպարտանալ) երբէտ : Կ'ուտէր իւեցնէն (հողէ) ահանեթքու-
մեջ , և երբ պատճառը կը հարցուէր , կ'ըսէր . « Կ'ու-
ղեմ պահել իմ սկզբանու յէլապահէր , որպէս զի ցածուցանեմ

(իջեցունեմ) ամբարդանունել զոր նախաւորութեան մասուի
փառքը կրնայ ձնաւոյնել յիս : » Մեծութիւնը զբացմանց
մեջ է , և զգացմունքը սրբին մեջ : Մարդ կրնայ նշանա-
տանեան և գերանեան մեջ լինել աղնուական : Ընդունայն է
աղնուականութիւնը , երբ մարդ կը նուաստացունէ
պին + անորդ հուսաներով և յած դործերով : Աղնուականը
որ պատրաստ և հարստութեան հետ ունի նաեւ գաղանդը և ա-
ռատիւննեան , կը նմանի արուեստաբէտի մը հարդարախոյն ժոր-
շառածին , որոյ նիւթը և արուեստը միանգամայն ժողվ-
ցին են . մինչ աղնուականը որ անմասն է առատիւննեան՝
դիմէ է շաղիներով զբարարատած : Բնութիւնը և Աստուած
գիտեն զարդին հաստատը . Հշարիս վաստակով (արժանեօք)
միայն կը տարրերին մարդիկ էրարմէ :

Վարժապետը թող հասկցունէ տղայոց թէ ո՛ր բառը
ո՛ր բառին լրացնեցիւ է :

Յաջորդ հրահանգին մեջ աշակերտը ինքնին ցուցնեն
լրացնեցիւ ներն :

35 Հ Ր Ա Հ Ա Ն Ա Գ

Մինչ Սուլթան Սիւլէյման , Թրքաց կայսրը , կ'եր-
թար առնուլ Պէկրատ յամի Տեառն 1521 , | մօտեցաւ
առ նա կին մի | և կը գանգատէր գառնապէս | թէ
զինուորներէն ոմանք մտնելով գիշերայն գաղտ իւր
տունը՝ գողցած էին ոչխար մը և հաւեր | որ անոր
բոլոր ստացուածն էին | : Կ'երեւի | թէ ընկլիմած էիր
ի խոր քուն , | որ չիմացար | թէ գող մտաւ տունդ , »
ըսաւ նմա Սուլթանը ժամելով | : « Այս , տէր , » պա-
տասխանեց կինը , | « կը ննջէի անհոգ , գիտնալով | թէ
ձեր մեծամիառութիւնը կը հսկէր հասարակաց անդոր-
րութեան համար | : » Սուլթանը չզայրացաւ կնոջ այս

Խօսքէն | որ արդարեւ յանդուգն էր , | և պատուի-
րեց իւր ֆաշտօնէին առատ հատուցում ընել կնոջը
փոխանակ՝ այն կորստեան , | զոր կանխել (յառաջել)
արգելուլ պաշտօնէին պարտքն էր | :

Աշակերտաց դիւրուքեան համար կ'ըսենք թէ , ա-
շակերտն իւրաքանչիւր նախադասուքեան մէջ ուր բայցն
եւ դէմաւր բայց իտնելի ետքը՝ կրնայ զիտնալ թէ նա-
խադասուքեան մնացեալ մասը կը բաղկանայ լրացոցից-
ներէ : Իսկ նախադասուքեան համար առ այժմ բաւա-
կան է սաշափ միայն ըսել թէ իւրաքանչիւր դէմաւր բայց
իւր մասերովը նախադասուքիւն է : Զոր օրինակ , վերի
նրահանգին մէջ ուղղանայեաց զիմերով բամենած մա-
սունք են մէն մի նախադասուքիւն : Վարժապէտը լաւ
հասկցունեն աշակերտաց այս ընդհանուր կանոնը :

Ծ Զ . Դ Ա Ս

205. Հ . Քանի տեսակ Լրացուցի կայ :

Պ . Երեք տեսակ , 1. Վերադիր , 2. Ստորոգելի
և 3. Խնդիր :

Ա . ՎԵՐԱԴԻՐ

206. Հ . Ի՞նչ է Վերադիր :

Պ . Վերադիր են ածականք և մակրայք : Զոր
օրինակ սա օրինակին մէջ , Որդի հնալունու ուրախու-
թիւն է հօր , հնալունու ածականը վերադիր է որդի
բառին , Նոյնպէս սա օրինակներուն մէջ , Տառը
մարդ , իմ տունս , Այս քաղաքը , Խորտակներ աշա-
կերտ , թուական , ստացական , ցուցական և անո-
րոշ ածականներն , առաք , էմ , այս , Խորտակներ , վե-

րադիր են հարդ , դուն , +աղաւ , +լոկերուն :
Դուրս ելնելով լացաւ դառնանգիւն . Պիտի գայ հոս ,
Հաղիւ , ընդ երեկո : Այս օրինակներուն մէջ , դառնա-
պէս , հոս , վաղիւ , ընդ երեկո , մակրայները վերադիր
են , առաջինը լացաւ բային , վերջին երեքը՝ պէտի
հայ բային :

2. ՍՏՈՐՈԳԵԼԻ

207. Հ . Ի՞նչ է Ստորոգելի :

Պ . Ստորոգելի կը կոչուի այն ուղղական կամ
հայցական անունը կամ գերանունը որ ուրիշ ան-
ուան կամ գերանուան էրծու , պաշտօն կամ վիճակ
ցուցնելու համար կը գրուի . զոր օրինակ , Ասո-
ուած է արտէւ : Իմ է երկիրս . Յովսէփ կարգեցաւ
էնիւն եգիպտասի . կոչես անոր անունը Յէսուս . Այս
տղան ըրի ինձ որդեռէր : Այս օրինակներուն մէջ ,
արտէւն , էմ , էնիւն , Յէսուս , որդեռէր , ստորոգելի են ,
Ասուած , երեկո , Յովսէփ , անուն , ողայ բառերուն :

208. Հ . Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի ստորոգե-
լին :

Պ . Ստորոգելին կը ճանչցուի , Էնչ հարց-
մամբ . զոր օրինակ , վերի օրինակներուն մէջ , Ասո-
ուած է . Էնչ . — Արարիչ . Յովսէփ կարգեցաւ ,
Էնչ . — Իշխան . Այս տղան ըրի , Էնչ . — Արդե-
գիր . ապա՝ արտէւն , էնիւն , որդեռէր , ստորոգելի են :

Ծ է. Դ Ա Ա

Յաջորդ հրահանգին մեջ հօտք գրով նշանակուած բառք են վերադիր, այսինքն՝ ածական կամ մակրայ, եւ ստորոգելիք: Աշակերտք թող որոշեն թէ ո՞ր բառը վերադիր է, եւ վերադիրն՝ ածակա՞ն է թէ մակրայ, եւ ո՞ր բառն՝ ստորոգելիք:

36. Հրահանգ

Սուէտի թագաւորն՝ կուսովաւ Ատոլֆ, Երևանուայ պատերազմին դիւցազներէն մին, կը համարէր մենամարտութիւնը զինուորական կարգի և կանոնի Եղջուան (հակառակ), ուստի և կարճելու (ջնջելու) համար այս խոսժառած (բարբարոս) սովորութիւնը՝ սահմանեց մահու պատիժ ընդդէմ մենամարտելոց: Այս օրինաց հաստատութենէն քիչ ժամանակ ետքը Երևան առաջ (մեծ) սպայք որ ունէին թշնամութիւն իրարու դէմ, խնդրեցին թագաւորէն հրաման իրենց վէճը լուծել սուր ի ձեռին: Ի սկզբան զայրացաւ թագաւորն ընդդէմ յանդուժն համարձակութեան Երևան սպաներուն, բայց յետոյ զիջաւ. ըստ միայն թէ ինք պիտի լինէր Քայ կոռուոյն, որոյ ժամը և տեղը որոշեց: Երբ եկաւ օրը, գնաց հոն թագաւորն հետեւակ զօրաց գնդաւ, որ պաշարեցին շուրջ Երևան ախոյեաններն (հառակորդ). յետոյ թագաւորը կոչեց դաշիճն և ըստ նման. «Այս Երևան մարդիկ պիտի կռուին: Երբ անոնց մին կը տեսնես մեռած, իսկո՞յն կտրէ իմ առջեւս միւսին գլուխը:» Զայս լսելով Երևան սպայք խոռվեցան վայր մի, բայց յետոյ ճանչցան իրենց սիսալը, և իյնալով յոտս թագաւորին՝ խնդրեցին ներումն, խոստանալով լինել բարեկամ իրաւուցան:

Յաջորդ հրահանգին մեջ աշակերտն ինքնին գտնէ վերադիրը եւ ստորոգելին:

37. Հրահանգ

Ֆրօնսաքի դուքսը, Ռիշիոյ մարաշախտին որդին, կ'ելնէր օր մը թատրոնէն փառաւոր հանդերձիւ: Երկու հատուք (Ետք Քեւանք) կտրեցին դքսին վերարկուին քղանցը (փէն) մեղմով (կամաց մը) և այնպէս արագ, որ դուքսը չխմացաւ, և գնաց դէպ ուղիղ (շիպ շիտակ) տուն մը ուր նշանաւոր անձինք խմբեալ (ժողոված) էին: Ամէնքն սկսան ժպտել, երբ տեսան դուքսը, որ զարմանալով հարցուց պատճառը, և իմանալով թէ վերարկուն առանց քղանցի էր, ելաւ դուրս: Ի վաղիւն առաւօտուն կանուխ մաքուր հագուած մարդ մը եկաւ դքսին պանդոկը, և խնդրեց ստիպաւ (փութով) խօսել դքսին հետ անձամբ: Աենեկապետն արթնցուց դուքսը, և անձանօթը մտնելով ներս՝ ըստաւ. «Տէր, կու գամ յանուն սատիկանութեան տեղակալին իմացունել ձեզ թէ երէկ երեկոյին ձեր վերարկուին քղանցը կտրող չարագործը բռնուեցաւ. ուստի տեղակալը կը խնդրէ վերարկուն, որպէս զի կտրուած քղանցը կցելով անոր՝ խայտառակէ չարագործը որ յամառութեամբ կ'ուրանայ յանցուածը, պնդելով թէ քղանցը վերարկուի մաս չէ:» Դուքսն ուրախ եղաւ, և գովելով սատիկանութեան արթնութիւնը, յանձնեց յապաւեալ (կտրուած) վերարկուն մարդուն, առանց կասկածելու թէ դաւ (խաղ, նենդութիւն) էր այս ի կողմանէ քղանցահատին, որ այս միջոցաւ խորհած էր լինել տէր ամբողջ վերարկուին:

Ծ Հ · Դ Ա Ս

Յ Ն Գ Ի Ր

209. Հ. Ի՞նչ է խնդիր :

Պ. Խնդիր կը կոչուի որեւիցէ հոլով գոյական անուն կամ գերանուն որ ուրիշ անուան, բայի կամ նախաղըռութեան իմաստը կը լրացունէ. զոր օրինակ, սա օրինակներուն մէջ, Թագավորքն պաշտօնեաները. կը սիրեմ հայրս. Առի յնէ . Մարդոց առջեւ, սա բառերը, Առաջարքն, հայրս, յնէ, Տարդոց, խնդիր են. առաջինը, Առաջարքն, խնդիր է պաշտօնեաներ բառին. Երկրորդն, հայրս, խնդիր է և ուրեմն բային. Երրորդը, յնէ, խնդիր է ուրեմն բային. չորրորդը, Տարդոց, խնդիր է ուրեմն նախաղըռութեան :

210. Հ. Ի՞նչ կը կոչուի բառ մը որ խնդիր ունի :

Պ. Բառ մը որ խնդիր ունի՝ կը կոչուի խընդարձառու. վերի օրինակներուն մէջ, պաշտօնեաներ, և ուրեմն, առեւ, առջեւ, խնդրառու են :

211. Հ. Խնդիրը քանի՞ տեսակ է :

Պ. Խնդիրն է երեք, Յատկացողին, Սեռի խընդիր և Բնութեան խնդիր :

212. Հ. Ի՞նչ է Յատկացողի :

Պ. Յատկացողի կը կոչուի սեռական անուն կամ գերանուն մը որ կը ցուցնէ թէ բան մը որուէ. զոր օրինակ, սա օրինակներուն մէջ, Աստուծոյ իմաստութիւնը, կամ, իմաստութիւնն Աստուծոյ, Քողանչն առւները, սեռականներն, Աստուծոյ, + աղջին, յատկացուցիչ են. առաջինը, Աստուծոյ, իմաս-

տութիւն բառին. Երկրորդը, + աղջին, տուներ բառին :

213. Հ. Ի՞նչ կը կոչուի այն բառն առ որ կը վերաբերի յատկացուցիչը :

Պ. Այն բառն առ որ կը վերաբերի յատկացուցիչը՝ կը կոչուի Յատկացնալ. վերի օրինակներուն մէջ, Էտուգութիւն, Գուներ, յատկացեալ են :

214. Հ. Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի Յատկացուցիչը :

Պ. Յատկացուցիչը կը ճանչցուի, որո՞ւ, կամ, ի՞նչ բան, հարցմամբ. զոր օրինակ, վերի օրինակներուն մէջ, իմաստութիւնը, որո՞ւ. — Աստուծոյ ծուները, ի՞նչ բանն. — Քաղաքին. ապա, Աստուծոյ, + աղջին, յատկացուցիչ են :

215. Հ. Ի՞նչ է Սեռի խնդիր :

Պ. Սեռի խնդիր կը կոչուի այն հայցական անուն կամ գերանունը որ ընդհանրապէս կու գայներգործական բայէ մը եաքը. զոր օրինակ, կը սիրեմ հայրս, Դարմանէ վառ, Բացաւ դուռը. Այս օրինակներուն մէջ, հայրս, վառ, դուռը, հայցականներն, սեռի խնդիր են, և ուրեմն, դուռներ, բացաւ, սերգործական բայերուն :

216. Հ. Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի սեռի խընդիրը :

Պ. Սեռի խնդիրը կը ճանչցուի, վո՞ւ, ի՞նչ բան, հարցմամբ, զոր օրինակ, վերի օրինակներուն մէջ, կը սիրեմ, վո՞ւ. — Հայրս. Բացաւ, ի՞նչ բանը. — դուռը. ապա՝ հայրս, դուռը, սեռի խընդիր են :

217. Հ. Ի՞նչ է Բնութեան խնդիր :

Պ. Բնութեան խնդիր կը կոչուի տրական, բա-

ցառական , գործիական հոլով անուն կամ դերանուն մը , կամ նախադրութիւն մը իւր ինդրով , զոր օրինակ , Տուի Եղբօր , Առի Ռատառութէն , Գայինք Նասով , Եկաւ Բարեկամին հետ : Այս օրինակներուն մէջ , տրական հոլովը , Եղբօր , բացառական հոլովը , Ռատառութէն , գործիական հոլովը , Նասով , և հետ նախադրութիւնը Բարեկամին իսնդրով , բնութեան իսնդիրներ են . առաջինը , Եղբօր , պոտէ բային . Երկրորդը , Ռատառութէն , առէ բային . Երրորդը , Նասով , Հացին+ բային , և չորրորդը , Բարեկամին հետ , Եկաւ բային :

218. Հ. Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի բնութեան իսնդիրը :

Պ. Իւրաքանչիւր հոլով իրեն յարմար հարցմամբ , զոր օրինակ , վերի օրինակներուն մէջ իսրնդիրներուն հարցումներն են , որո՞ւ , որմէ՞ , ի՞նչ բանով , որո՞ւ հետ : Տուի , որո՞ւ . — Եղբօրս . տրական բնութեան իսնդիր պոտէ Բային . Առի , որմէ՞ . — Թագաւորէն . բացառական բնութեան իսնդիր առէ բային . Գայինք , ի՞նչ Բանով . — Նաւով . գործիական բնութեան իսնդիր Հացին+ բային . Եկաւ , որո՞ւ հետ . — Բարեկամին հետ . նախադրութեամբ իսրնդիր Եկաւ բային :

Օ Թ. Դ. Ա. Ա.

Յաջորդ հրահանգին մէջ յատկացուցիչը , սեռի Են բնուրեան խնդիրներն նշանակուած են նօտր գրով :

38. Հրահանգ

Դերձակ ոմն կյանալ ծանր հիւանդ , տեսաւ Երաղ զարմանալի : Կը թուէր նմա թէ ելած էր Աստուծոյ դատապաննեւ առջեւ , և մահուան հրեշտակը կը պարզէր (կը բանար) անոր առջեւ անառին (մեծ) որոշ մէ , յօրինեալ ժողովի ժողովակ կերպառներուն կորոներէն շըր գողցած էր դերձակն եւր յահանորդներէն : Ի նմին վայրէնի (այն միջոցին) կարծեց նա զանյա ընկլիւալ է որժուին , և արթնցաւ ընդուստ (ցատկելով)` պաղ պաղ +իրան թափելով : Հիւանդն համարեցաւ այս Երաղ յատուածուստ իրեն ազդ , և ուխտեց կատարել էւր պարտին ամենայն հաստատր-ժողովեամբ , եթէ դիմէր նմա առողջանալ : Դերձակն առողջացաւ արդարեւ յետ առիստ մէս (քիչ ետքը) , և որոշեաւեւ չէր վատահ էւր անյին , պատուիրեց էւր օդ-նուիտներէն միջն յիշեցունել նմա որոշ ամէն անդամ որ կտրէր նոր հանդերէն : Դերձակը մնաց բառառիան ժամանակ հաւատարիմ էւր ռախուին . բայց օր մը մինչ կը կտրէր հանդերէն ըն մեծագին առաւէ (չուխայէ) , միորձուելով իսրել (գողնալ) կերպառնեն՝ կը վարանէր . ի վախճանի յաղթուելով ուտէն նելուրունենէն կտրեց առաւ կերպառնեն մաս մէ : Ազգարարն ի զուր կը յիշեցունէր նմա ստէլ որոշ : « Հերիքք » գոչեց դերձակը , « Ճանձրացուցիր մէս որոշ առջեւ . այս գոյն կերպաս չկար որոշ մէլ լոր տեսայ յերանք : »

Յաջորդ հրահանգներուն մէջ աշակերտը ջանա ինք-
նին գոնել յատկացուցիչը , սեռի եւ բնութեան խըն-
դիրներն :

39. Հրահանգ

Առաջին ճանապարհորդութեան մէջ զոր ըրաւ Յով-
սէփ Բ. կայսր ի Գաղիա յանձանօթս , հասնելով օթե-
ւան մի՝ կեցաւ , և կամէր փոխել ձիերը , բայց չգըտ-
նուեցաւ ձի , քանզի օթեւանին տէրը զրկած էր բոլոր
ձիերը բերել մօտակայ գիւղերէն ազդականներ և բա-
րեկամներ որ հրաւիրած էին ի կնիք (կնունք) որդ-
ւոյն , ուստի աղաչեց օտարականին որ անծանօթ էր
նմա՝ համբերել սակաւիկ մի (քիչ մը) : Կայսրը խօսելով
մարդուն հետ , գտաւ զնա բարի և հայրենասէր , և ըստ
նմա թէ կամէր լինել կնքահայր երախային : Օթեւանին
տէրը զարմացաւ այս առաջարկութեան վրայ , բայց
հաւանեցաւ , լաւ համարելով ունենալ կնքահայր մար-
դասէր օտարականը քան իւր հօրեղբօրորդին որ հո-
ղագործ էր և կանխաւ որոշուած ի կնքահայրութիւն :
Հիւրերն եկան , բազմութիւնը գնաց եկեղեցին , և հան-
դէսն սկսաւ : Կնքատու (մկրտող) երէցն հարցուց կնքա-
հօր թէ ինչ էր անունը . «Յովսէփ» , զատասխաննեց կայս-
րը : «Մականունդ» , կրկնեց երէցը : «Ինչ» , ըստ կայս-
րը , «Ես կը կարծէի թէ Յովսէփ միայն բաւական էր : »
«Ոչ , տէր» , ըստ երէցը . » կնքահարց անունը կար-
ձանագրենք հանդերձ մականուամբ : » «Ուրեմն» , ըստ
օտարականը , «Գրէ . Յովսէփ երկրորդ , կայսր Գերմա-
նիոյ : » Երէցը և բոլոր հանդիսատեսք մեացին ապշած ,
և օթեւանին տէրը , մանկան հայրն , ինկաւ յոտս իշ-
խանին , որ վերցուց զնա քաղցրութեամբ , խոստանա-
լով չմոռնալ երբէք իւր սանը :

40. Հրահանգ

Պարսից շահ մը բարկանալով իւր եպարքոսին ընկէց
(ձգեց) զնա , և կարգեց (գրաւ) փոխանակ նորա զայլ
ոք . ի միջթարութիւն նորա թոյլ տուաւ նմա միայն
ընտրել առանձնութեան տեղ մը , ուր ապրէին խաղա-
ղութեամբ , ինք և ընտանիք նորա , առաս ոռնձկէն զոր կը
սահմանէր նոցա թագաւորը : « Չունիմ ալէտս , տէր , »
ըստ եպարքոսը , « ոռնձկին զոր կը կարգէք ինձ և ի-
մոցս ձեր արքայական առատաճեռնութեամբ : Կ'աղա-
չեմ , առէք զայն ետ , միայն կը խնդրեմ խոնարհութեամբ
ցուցնել ինձ ձեր տէրութեան մէջ ագարակ մի անբեր ,
զոր փութով և աշխատութեամբ ընեմ շահեկան : » Յա-
գաւորն հրամայեց կատարել խնդրուածը , բայց մար-
դիկը որոց արուեցան այս հրամանը՝ բերին համբաւ
թագաւորին , թէ բոլոր թագաւորութեան մէջ չկար
ափ մի հող անմշակ , « Գիտէի , տէր » ըստ եպարքոսը
թագաւորին , « թէ անգործ տեղ չկայ բոլոր երկրին
մէջ որոյ մատակարարութեան հոգն յանձնուած էր
ինձ : Խնդրոյս նպատակն էր իմացունել թէ ի՞նչպէս
չէն և ծալիկեալ կը յանձնեմ ձեզ՝ երկիրը : Եցիւ (երանի
թէ) գտնէր արքայ պաշտօնեայ մի որ կարող լինէր
տալ ի՞վախճանի սոյն վկայութիւնը : »

Ծ Թ. Դ Ա Ա

ԲԱՑԱՅԱՏԻԶ ԵՒ ԲԱՑԱՅԱՅԵԱԼ

219. Հ. Ի՞նչ է թացայացտին :

Պ. թացայացտին կը կոչուին այն բառը կամ բառերը որ խօսքի մէջ կը դրուին ուրիշ բառի մը քով, և անոր հետ մի և նոյն բանը կը նշանակեն, միայն կը ծառայեն աւելի բացայայտ ընելու զայն. զոր օրինակ, Յովսէփ, այն Մարտին. Փախուստն Անակայ, հօր արքոյն Գրիգորի :

Այս օրինակներուն մէջ, Այն Մարտին, մի և նոյն է Յովսէփայ հետ, կը յայտնէ սակայն թէ որ Յովսէփայ վրայ կը խօսուի, ուստի և է անոր բացայատիչը. նոյնպէս, Հօր արքոյն Գրիգորի, նոյն է Անակայ հետ, և կը ցուցնէ թէ ով էր Անակ, ապա է անոր բացայայտիչը :

220. Հ. Ի՞նչ կը կոչուի բառ մը որ բացայայտիչ ունի :

Պ. բառ մը որ բացայայտիչ ունի՝ կը կոչուի բացայայտեալ. վերի օրինակներուն մէջ, Յովսէփ, Անակ, բացայայտեալ են :

221. Հ. Ի՞նչ է թացայայտչին յարաբերութիւնը բացայայտելոյն հետ :

Պ. թացայայտիչը պիտի ունենայ միեւնոյն հոլովը կամ ձեւը բացայայտելոյն հետ, ինչպէս կը տեսնուի վերի երկրորդ օրինակէն :

Կ Ո Չ Ա Կ Ա Ն

ԿՈՉԱԿԱՆ

222. Հ. Ի՞նչ է կոչական :

Պ. կոչական կ'ըսուի բառ մը որ կը ցուցնէ անձ կամ անձնաւորեալ իր առ որ ուղղուած է խօսք մը. զոր օրինակ, ԱՌէ, մեր վրայ Բնչ զարմացած էք. Անենացնէ՛, շատ բարեպաշտ կը տեսնեմ զձեզ: Այս օրինակներուն մէջ, աՌէ, Անենացնէ՛, կոչական են:

223. Հ. Ի՞նչ կ'աւելնայ կոչականին վրայ շատ անգամ :

Պ. կոչականէն անմիջապէս առաջ շատ անգամ կը դրուի, 'Վ բառը. երբեմն եւս, եթէ կոչականը եղակի է, վերջը կը յարի Դա դերանունը. զոր օրինակ, ԱՌ ազգ անհաւատ և թիւր. Աղջիկ Դա՛, եւ :

224. Հ. Ուրիշ Բնչ գիտելիք կայ կոչականին վրայ :

Պ. Եթէ կոչականէն առաջ ածական մը, կամ եազը յատկացուցիչ մը կայ, ածականին և յատկացելոյն վրայ Դ գիրը կրնայ աւելնալ վայելչութեան համար. զոր օրինակ, Քաջր ֆեստոս. Սուրբ Աստուծոյ. Արքայի՛ Խորայելի (*):

(*) Ասոնք հին հայերէնի ծեւեր են, բայց կրնան զօրել նաև նորոյն մէջ :

Յաջորդ նրահանգներուն մէջ աշակերտը միտ դնեն
բացայալոցի եւ կոչականի :

41. Հրահանգ

Նայելով Պօղոս ատենին՝ ըսաւ, « Ա՛րք եղբարք, ես ուղիղ մոռք քալած եմ միշտ առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր : » Քահանայապետն Անանիա հրամայեց սպասաւորներուն զարնել անոր բերնին ։ Ցայնժամ ըսաւ անոր Պօղոս. « Հարկանելոց (զարնել) է զեեզ Աստուծ, ո՞րմ բռեալ . կը նստիս գատել զիս ըստ օրինաց, և առանց օրինաց կը հրամայես հարկանել : » Անոնք որ կը կենային շուրջ ըսին : « Աստուծոյ քահանայապետը ուր կը հայհոյես : » Պօղոս ըսաւ. « Զէի գիտեր, եղբարք, թէ քահանայապետ է : » Երբ գիտցաւ Պօղոս թէ մի կողմը Սադուկեցւոց էր, և միւսը՝ Փարիսեցւոց, սկսաւ աղաղակել ատենին մէջ. « Ա՛րք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց կը գատուիմ ահաւասիկ, » Երբ ըստ զայս, եղաւ հերձուած (երկպառակութիւն) Փարիսեցւոց և Սադուկեցւոց մէջ, և պատառեցաւ բազմութիւնը : . . . Ի վազիւ գիշերի երեւեցաւ նմա Տէր և ըսաւ. « Քաջալերուէ, Պօղէ, ինչպէս վկայեցիր վասն իմ յԵրուսաղէմ, նոյնպէս պարտ է քեզ և ի Հոռմ վկայել : »

Հինգ օր ետքը եկաւ քահանայապետն Անանիա ի Կեսարիա հանդերձ ծերովք և Տերտիւլոս անուն ճարտարախօսաւ, և իմացուցին դատաւորին Պօղոսի համար : Երբ կոչուեցաւ Պօղոս, Տերտիւլոս սկսաւ ամբաստանել և ըսել. « Բազում խաղաղութիւն դատած է քենէ և իրաց ուղղութիւն քո խնամով այս ազգը, ուստի և ամենայն ուրեք շնորհակալ ենք քենէ, քաջդ Փելիքս, ամենայն գոհութեամբ » : . . . Երբ օրեր անցան, Ագրիպաս արքայ Յերենիկէ եկան Կեսարիա

յողջայն Փեստոսի . . . Փեստոս հրամայեց բերել զՊօղոս և ըսաւ. « Արքայ՝ Ագրիպաս և ամենեքին որ աստ (հոս) էք, կը տեսնէք զսա բողոր Հրէից ժողովն ամբաստան է ասոր դէմ » : . . . Եւ Ագրիպաս ըսաւ Պօղոսի. « Հրամայեալ է քեզ խօսել վասն քո » և Պօղոս ձգելով ձեռքը՝ պատասխանեց այսպէս. « Հրէից բողոր ամբաստանութիւններուն համար ինծի դէմ, արքայ՝ Ագրիպաս, կը համարիմ զանձն իմ երանելի, վասն զի քու առջեւդ պիտի տամ պատասխանի » : . . . Երբ Պօղոս այս պատասխանը տուաւ, Փեստոս ըսաւ մեծ ձայնիւ, « Կը մոլիս (կը ցնորիս), Պօղէ, բազում ուսմունք զեեզի ի մոլութիւն (խենդութիւն) կը դարձունեն . » Խոկ Պօղոս ըսաւ. « Զեմ մոլիս, քաջդ Փեստոս, այլ կը խօսմիմ բանս զգաստութեան (իմաստութեան) և ճշմարտութեան : »

42. Հրահանգ

Յիսուս ելաւ Կափառնայում, Գալիլեացւոց քաղաքը և կ'ուսուցանէր զնոսա շաբաթ օրերը. Եւ մարդիկը կը զարմանային անոր վարդապետութեան վրայ, վասն զի իշխանութեամբ կը խօսէր, և ոչ որպէս դպիրքն. Եւ ժողովրդեան մէջ կար մարդ մը որ ունէր այս պիղծ, և աղաղակեց մեծ ձայնով և ըսաւ, « Թոյլ տուր, զի կայ մեր և քո, Յիսուս նազովրեցի, Եկար կորուսաննէլ զմեզ, զիտենք զեեզ ովք ես, ուուրբդ Աստուծոյ » : Օր մը Յիսուս կ'ուսուցանէր, և փարիսեցիք և օրինաց վարդապետք կը նստէն : Եւ մարդիկը բերին մահճօք մարդ մը որ էր անդամալոյծ, և կը խնդրէին մուծանել զնաներս և դնել անոր առջեւ. և չկրցան մուծանել բազմութենէն : Ելան տանիքը և ի ցուց (թաւանէն) կախեցին զնա, և իջուցին հանդերձ մահճօք Յիսուսի առջեւ. և Յիսուս տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ մարդուն, « Այր դու, թողեալ լիցին քեզ մեզք քո » :

Սինչ կ'երթար Յիսուս , ժողովուրդը կը նեղեր զնա : Կին ոմն տեռատես , գալով յետուստ՝ մերձեցաւ (դպաւ) անոր հանդերձին քղանցին , և նոյն ժամայն (անմիջապէս) կեցաւ անոր արեան հոսումը : Եւ Յիսուս ըստ , « Ո՞վ էր որ մերձեցաւ ինձ : » Աշակերտներն ըսին . « Վարդապէ՛տ , ժողովուրդը կը պնդէ (կը որլոմէ) և կը նեղէ գքեղ : » Կինը տեսնելով թէ չծածկուեցաւ , եկաւ դողալով , ինկաւ անոր առջև և պատմեց մերձենալուն ապատճառը . և Յիսուս ըստ անոր . « Քաջալերեաց , դո՛ւստր , հաւատքդ ապրեցուց զքեղ , երթի խաղաղութիւն : »

Եւ ըստ ոմն ժողովրդենէն , « Վարդապէ՛տ , ըսէ եղբօրս որ բաժնէ ժառանդութիւնն ինծի հետ : » Եւ Յիսուս ըստ անոր , « Ա՛յր դու , ո՞վ կացոյց զիո դատաւոր կամ բաժանարար ձեր վրայ : » Եւ ըստ առակ մի . « Հարուսա մարդու մը արտերը տուին առատ բերք , և խորհելով մարդն ի միտս իւր (ինքնիրեն)՝ ըստ . « Ի՞նչ ընեմ , չունիմ տեղուր դնեմ արդիւնքս . քակեմ շտեմարաններս , և շինեմ աւելի մեծեր , և հոն ժողովելով ցորեան և բոլոր բարութիւններս , ըսեմ ցանձն իմ (անձին) , Ա՛նձն , ունիս բազում բարութիւնս որ բաւական են քեզ շատ տարիներ . հանգիր , կեր , արբ և ուրախ եղիր : » Ըստ անոր Աստուած , « Անմի՛տ , այս գիշեր ոգիսդ պիտի պահանջուի քենէ , ինչ որ պատրաստեցիր որո՞ւ պիտի լինի : »

Յիսուս ելլելով անկէ գնաց Տիւրոսի և Ալիոնի կողմերը , և ահա կին ոմն (մը) Քանանցի , Տիւրոսի սահմաններէն , եկաւ , կ'աղաղակէր և կ'ըսէր , « Ողորմեա ինձ , Տէր , որդի Դաւթի , դուստր իմ չարաչար կ'այսահարի : » և Յիսուս չտուաւ նմա պատասխանի : Աշակերտները կ'աղաջէին և կ'ըսէին , « Արձակէ զսա , վասն զի կ'աղաղակէ զիետ մեր : » Եւ Յիսուս ըստ . « Ես զրկուեցայ Խրայելի տան կորուսեալ ոչխարինե-

րուն միայն : » Իսկ կինը մօտենալով կ'երկրպագէր և կ'ըսէր , « Տէր , օգնէ ինձ : » Յիսուս ըստ . « Զէ բարւոք առնուլ մանկանց հացը և նետել շանց : » « Այս , Տէր , » ըստ կինը , « բայց և շունք կը կերակրին ի փըշը բանաց որ կ'ինան իրենց տիրոջը սեղանէն : » Յայնժամ ըստ Յիսուս , « Ո՞վ կին դու , մեծ են հաւատքը քո , մինի քեզ ինչպէս որ կը կամփս : » Եւ բժշկուեցաւ , անոր դուստրը :

43. Հրահանգ

Յաղկերտի որդին Շապուհ և Ատոմ Մոկացի ելան անդամ մը յորս ցոռոց , և կ'արշաւէին յանդգնարար խորտաքորտ և վիմուտ տեղեր : Շապուհ սկսաւ կասել (կենալ) , իսկ Ատոմ եպերելով (պարսաւելով) զնա՝ ըստ , « Գնա , գնա , աստուածորդիդ Պարսից , եթէ այր ես : » Եւ նա ըստ , « Դու գնա , ի քարինս դիւաց է շահատակել (ծիավարել) : » Դարձեալ ուրիշ անդամ գացին երկոքին շամբերու (ժամբալլա) մէջ կինձ (խոզ) որսալ հրով , և Շապուհ չհամարձակելով վարել (քշել) ձին , վասն զի կարի թաւ էր շամբը , պաշարեցաւ կրակէն , և յաջ և յաշեալ (ձախ) դարձունելով հայեցուածը կը դիմէր յայսկոյս և յայնկոյս երիվարաւն : Այս անդամ եւս Ատոմ հեգնելով կ'ըսէ . « Աստուածորդիդ Պարսից , ահա հայր քո և Աստուած , ընդէ՞ր զանդիտես (կը վախնաս) : » Շապուհ ըստ , « Թող կատակը , և յառաջելով անցիր կրակէն որ ետեւէդ գամ , քանզի ձիս յառաջել կը խրտչի : » Իսկ Ատոմ այսանեց զնա ըսելով , « Միթէ և այդ քարի՞նք են որ ես յառաջեմ : Եթէ դու զՄոկացիս կը կոչես դիւազգիս , ես զՄասանեանսդ կը կոչեմ կնամարդիս : » Եւ մորակելով ձին անցաւ կրակէն իրեւ ծաղկալց հովտէ , աղատելով զՇապուհ :

44. Հրահանգ

Յողթատարութեան գիւտը կ'ընծայուի կիւրոսի, Պարսից թագաւորին։ Կիւրոս աեսնելով որ իւր տէրութեան ընդարձակութեան պատճառաւ հազորդակցութիւնը երկայն և գժուարին էր հեռաւոր գաւառաց սատրապներու հետ, ստուգել տուաւ թէ ձի մը ո՞ր չափ մզոն տեղ կրնար երթալ օրը։ Յետ ստուգելոյ զայս՝ տուաւ շինել այն հեռաւորութեամբ ախոռներ մայրաքաղաքէն յիւրաքանչիւր նահանգ։ ախոռներուն մէջ դնել տուաւ ձիեր և ձիադարմաններ, և կարգեց մայրաքաղաքին մէջ պաշտօնեայ մը որ նամակները կամ հրովարտակները կը յանձնէր սուրհանդակներու տանել սատրապին առ որ ուղղեալ էին այն գրուածք։ Այս եղաւ կ'ըսեն, թղթատարութեան սկիզբը։ Այսպէս սուրհանդակներ կ'երթային քաղաքէ ի քաղաք առանց գաղաքելոյ տիւ և գիշեր։ Օդոյ սովորական փոփոխութիւններն անգամ, ինչպէս անձրեւ և բուք (նիտի), փոթորիկ և ամպրոպ (որոսում), չէին արգել երթեւեկութեան սուրհանդակաց։ Նամակատան տեսչութիւնը եղաւ տէրութեան երեւելի պաշտօններէն մին։ Դարեհ Վշտասպեայ, կիւրոսի յաջորդներէն, վարածէր այս պաշտօնն յառաջ քան բարձրանալն յաթոռ տէրութեանն Պարսից։

45. Հրահանգ

Յուստիանոս Բ., կայսր Յունաց, կամելով հաստատել միւսանգամ արդարութիւնը և տալ այնմ իշխել բոլվանդակ կայսրութեան մէջ, ընտրեց Կոստանդնուպոլսոյ համար գաւառոր մի անաշառ և կաշառառութիւնէ ազատ։ Տուաւ այս մարդուն կատարեալ իշխանութիւն պատժել յանցաւորներն առանց ակնառու-

թեան, և ոչ արձակել պատժապարտ մի ի չնորհուկս (խաթեր համար) ումեք։ Ըստ որշման կայսեր, այն դատաւորին վիխներն պիտի գրուէին ի գործ առանց բողոքոյ, և ինքն իսկ կայսրը կը հրաժարէր յիրաւանց չնորհ ընելու ումեք։ Ամէն անիրաւ դողաց, երբ լսեց այս ահաւոր հրամանը։ Մարդ մը միայն, կարի յանդուգն, իշխեց անարգել կայսեր հրամանը, որպէս թէ գեր ի վերոյ էր քան զօրէնս։ Այս մարդն ունէր մեծ պաշտօն բանակին մէջ, և անոր կինն էր կայսերական տանէ։ Այրի կին մը գալով դատաւորին, գանգատեցաւ այն մարդէն, ցուցնելով թէ յանիրաւի զրկած էր նա զնա իւր բոլոր ստացուածէն։ Դատաւորը, պահելու համար այն մարդուն պատիւը, զրկեց առ նա յանուն ամրաստանող կնոջ նամակ մի, ուր կը խնդրուէր այն մարդէն հատուցումն փոխանակ զրկանաց։ Բայց թշուառ այրին թշնամանք և սպառնալիք միայն լսեց իւր հրաստահարչէն։ Յայնժամ գատաւորը կոչեց մարդը յատեան, բայց նա արհամարհեց հրամանը, և փոխանակ երեւելու ատենին առջեւ, գնաց կայսեր պալատն ուր հրաւիրուած էր ուրիշ աւագանույն հետ ի ձաշ։ Դատաւորը բարկանալով գնաց պալատը, և բոլոր բաղմականաց առջեւ ըստ կայսեր, « Տէր, դու տուիր ինձ իշխանութիւն կարձել (ջնջել) անիրաւութիւնը և պատուհասել ամէն անիրաւ, բայց որովհետեւ սեղանակից կ'ընես քեզ անզգամ և անօրէն մարդիկ, ահա կը հրաժարիմ իշխանութենէն զոր տուիր ինձ, և որմէ պիտի չգայ օգուտ քու հպատակներուդ։ » « Իմ դիտաւորութիւնս, » ըստ կայսրը, « միշտ նոյն է։ անիրաւութիւնն, ուր և գտնուի, իմ գահու վրայ անգամ, մատնուած է քու ձեռքդ յամօթ և ի կշտամբանս անիրաւին։ » Յանցաւորը լսելով զայս՝ վհատեցաւ, և բռնուելով իսկոյն նոյն իսկ բաղմականին մէջ՝ ձգուեցաւ (տարուեցաւ) յատեան։ Հոն չկրնալով

պաշտպանել զանձն , և խայտառակուելով իբրեւ արդարեւ անիրաւ յափշտակիչ ստացուածոց այրւոյն , ընկալաւ (առաւ) իւր արժանաւոր պատիթը , Մերկացուցին դահիճք անոր պատուոյ հանդերձները , և յետձաղկեց (ծեծել) զնա ըստ օրինաց ժամանակին , նըստուցին յէշ երես յետս , և շրջեցուցին զնա այնպէս կոստանդնուպոլսոյ փողոցներուն և հրապարակներուն մէջ : Բարեկամք զորս ունիր նա , և յորոց շատք մասնակից էին անոր յափշտակութիւններուն , և անիրաւութիւններուն , բռնուեցան և եղան հաղորդ պատժոյն : Արդարութեան այս օրինակը զարհութեցուց անոնց ամէնը որ վարակեալ (պլէկած) էին դարուն ապականութենէն , և ցորչափ ապրեցաւ այս անաշառ դատաւորն , անդգամութիւն և ոճիր (յանցանք) չկըրցան դտնել մուտ կայսրութեան մայրաքաղաքին պարիսպներէն ներս :

Ա Ա : Դ Ա Ա

ՈՒԹ ՄԸՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

Գ Ո Յ Ա Կ Ա Ն

225. Հ. ի՞նչ մասնաւոր դիտելիք կայ Գոյականի վրայ :

Պ. Գոյական անունը կը ցուցնէ այս կամ իք . բայց երբեմն , իբրեւ ածական , կը գործածուի յատկութիւն կամ պաշտօն ցուցնելու , և անատեն դոյականը կըսուի ածականար կամ իրուն ածականուած :

Զոր օրինակ , երբ կ'ըսեմ Հովել կ'արածէ ոչխարներ . Թափառութը ժողովրդեան հայրն է . Նարու և ծաղիւը բոյս են , հովել , նափառու , ծառ , ծաղին , գոյական են . բայց երբ կ'ըսեմ , Դաւիթ էր հովել , և եղաւ նափառու . Կաղնին ծառ է , վարդը ծաղին . նոյն բառերը , հովել , նափառու , ծառ , ծաղին , առնուած են ածականաբար :

Ա Մ Ա Կ Ա Ն

226. Հ. ի՞նչ մասնաւոր դիտելիք կան Ածականի վրայ :

Պ. Ինչպէս գոյականը կ'առնուի ածականաբար , նոյնպէս ածականը կ'առնուի շատ անդամ գոյականաբար .

Զոր օրինակ , երբ կ'ըսեմ , իմաստուն մարդը սիրելի է . Քաջ զինուորն արժանի է պատուոյ . Բարէ և լոր գործեր . իմաստուն , +աջ , բարէ , լոր , ածական են . բայց երբ կ'ըսեմ , իմաստունը կ'անսայ իրատու . Անմահ է +աջբուն անունը . Բարէն սիրելի է և լոր՝ ատելի . նոյն ածականներն , իմաստուն , +աջ , բարէ , լոր , առնուած են գոյականաբար . իմաստուն հոս կը նշանակէ իմաստուն մարդ . — +աջ կը նշանակէ քաջ վնասոր . — Բարէ , լոր կը նշանակեն բարի կամ չար ժործեր :

227. Հ. ի՞նչ կամոն կայ արդի հայերէնի համար ածականներու գոյականաց հետ համաձայնութեան :

Պ. Արդի հայերէնի ածականաց համաձայնութեան կամոնը շատ պարզ է . ածականը միշտ կը գրուի գոյականէն առաջ , և կը մնայ անփու

վիսխ , ինչպէս , բարե հայր , բարե հօր , բարե հօրմէ .
հնաղանդ որդի , հնաղանդ որդւոյ , հնաղանդ որդւով .
հաւատաբէմ ծառայ , հաւատաբէմ ծառայի , հաւատաբէմ
ծառայէ , հաւատաբէմ ծառայիւ :

Այսպէս կըսուի նաեւ , շար մարդոց , հջբ թագա-
ւորներու , +աջ զինուորներով . Երկու մարդ , Երկու մար-
դու , Երկու մարդով . առաք զինուորով , “ո՞յ օրուան ,
իներու կարգէ :

228. Հ. ի՞նչ հոլով կ'ուղեն ածականք :

Պ. Ոմանք՝ արական , ինչպէս՝ Արժանի պատ-
ժոյ , Հմուտ որսոյ : Այք՝ բացառական , ինչպէս՝
Հոգերէ աղատ . Անձկութենէ զերծ : Ոմանք եւս՝
գործիական , ինչպէս՝ լի ոսկւով :

229. Հ. Զկրնա՞ր ածականը գրուիլ գոյականէն
ետքը :

Պ. Ածականք կրնան ի հարկի կամ ըստ վա-
յելութեան դրուիլ նաեւ գոյականէն ետքը , Ե-
թէ գոյականն եղակի ուղղական կամ հայցական է :

Զոր օրինակ , կրնանք ըսել , բարե հայր , և , հայր
բարի . ՔՃ Աստուած , և , Աստուած ՔՃ . հջբ իշխան ,
և , իշխան հզը . հաւատաբէմ ծառայ , և , ծառայ հաւա-
տաբէմ , Եթէ հոմութիւն չծագիր ասկէ :

230. Հ. ի՞նչ գիտելիք կայ Անորոշ ածականաց վրայ :

Պ. Անորոշ ածականնէյ , Ք , “ման+ , էւրուտնէւր” ,
և , Երբ գոյականաբար կ'առնուին . կ'ուղեն բա-
ցառական , և Երբեմն սեռական հոլով խնդիր :

Զոր օրինակ , Յակոբայ ուրիներէն , կամ , ուրիսոց մին .
Անացէ , կամ , անոնց իւրաքանչիւրը . Ալակերուներէն ո-
մանք :

231. Հ. Մի բառին վրայ ի՞նչ դիտողութիւն կայ :
Պ. Մի , որ թուական անուն է և կը ցուցնէ
միութիւն , կը գործածուի շատ անգամ , թէ հին
և թէ մանաւանդ արդի հայերէնի մէջ , իրբեւ ա-
նորոշ ածական , ցուցնելու որեւիցէ անհատ անձ
կամ իր . այս վերջին նշանակութեամբ կը գրուի
նաեւ ճ : Մի , իրբեւ թուական , կը գրուի գոյա-
կանէն առաջ . իրբեւ անորոշ ածական՝ դոյակա-
նէն ետք :

Զոր օրինակ , Ղրկեց Թ զինուոր , Տուի նմա Փ դա-
հեկան , կը նշանակեն Թ թուով զինուոր , Թ թուով
դահեկան : Ղրկեց զինուոր Փ , կամ , զինուոր ճ . Տուի
նմա դահեկան Փ , կամ , դահեկան ճ , կը նշանակեն
որեւիցէ զինուոր կամ դահեկան : Այս վերջին մտօք
կրնայ շատ անգամ Փ զանց առնուիլ . ուստի կրնայ ըս-
ուիլ լոկ , Ղրկեց զինուոր . Տուի դահեկան (*) :

232. Հ. Հարկի Է թուական ածականաց տալ յոքնա-
կի գոյական :

Պ. Հարկի չէ տալ թուական ածականաց յոքնա-
կի գոյական , ուստի կ'ըսուի , հինգ հոգի , տասը
մարդ , եօթանասուն զինուոր . Հարիւր դահեկան ,
և , փոխանակ , հինգ հոգիներ , տասը մարդիկ ,
եօթանասուն զինուորներ , Հարիւր դահեկաններ :

(*) Այս է հայերէնի մէջ զբեթէ ընդհանուր կանոն : Ոմանք
սովորութիւն ըրին , որիշ արդի գաւառական հայերէնի մը
նմանութեամբ , անխտիր գոյականէն առաջ զնել է , եւս եւ որ ու-
զործածել կարեւոր հարկ չէ : Ըստ մեզ , չէ անորոշ ածականին
այս զործածութիւնը ոչ միայն շփոթ , այլ եւ անախործ է ական-
չաց : Երբեմն կարճ պարբերութեան մէջ կը հանդիպի տասը Ք ։
Չըլլանք կապիկ .

Բայց գոյականները թուականաց հետ կրնան նաեւ դրուիլ յոքնակի , եթէ տեսնուի հարկ :

233. Հ. ի՞նչ գիտելիք կան Ստացական ածականներու վրայ :

Պ. Արդի հայերէնի մէջ “ գիրը կ'աւելնայ է՞ ստացականի գոյականին վերջը , ու գիրը՝ ո՞ւ ստացականի գոյականին վերջը .

Զոր օրինակ , ի՞մ տունս , ո՞ւ տունդ , ի՞մ տուներս , ո՞ւ տուներու . միւս ստացականաց , Դր , Յեր , անոր , իւր , անոնց , երենց , գոյականներուն վերջը կը դրուի և (ն) գիրը . ուստի կ'ըսենք , Դր տունը , Յեր տունը կամ տուները , անոր , անոնց , իւր , երենց տունը կամ տուները :

234. Հ. Ստացականները միշտ կը դրուի՞ն , թէ կրնան նաեւ զանց առնուիլ :

Պ. Իմ , ո՞ւ , անոր , իւր , կրնան զանց առնուիլ . ուստի կ'ըսուի շատ անգամ , տունս , տունդ , տունը , փոխանակ , ի՞մ տունս , ո՞ւ տունդ , անոր կամ իւր տունը (*) :

(*) Ոմանք նաեւ , Դր , Յեր , անոնց կամ երենց , ստացականները զանց ընելով կ'ըսեն . Տուներու , փոխանակ Դր տունը կամ տուները , Տուներու , փոխանակ Յեր տունը կամ տուները . Նաեւ կը հոյովին այն ծերով . տուներուու , տուներնէս , տուներովինս , տուներնուու , տուներնէդ , տուներովինդ , տուներնուն , տուներնէն , տուներովինն : Այս ծեր մեզ խորթ կը թուի եւ օտար , ուստի եւ իբրև կանոն չենք ընդունիր մեր քերականութեան մէջ : Այս խորթութենէ ազատելու համար լաւ կը համարինք Դր , Յեր եւին , ստացականները զործածելով ըսել , մեր տանը կամ տուներուն , մեր տունէն կամ տուներէն , մեր տունով կամ տուներով , եւն . այս արդարեւ աւելի պարզ է եւ ընական հայերէնին :

235. Հ. ի՞նչ գիտելիք կայ Յուցական ածականի վրայ :

Պ. Այս , այդ , այն , Յուցական ածականի գոյականին վերջը մենք կը յաւելունք յօդ (ը) . այս տունս , այդ գործը , այն երկիրը . բայց գաւառներէն ումանք զանց ընելով այս յօդը՝ կ'ըսեն . այս տուն , այդ գործ , այն երկիր : Այսպէս զանց կ'ըսեն նաեւ ստացական ածականաց գոյականներուն յօդը , և կ'ըսեն . իմ գործ , քո գրիչ , մեր երկիր , ձեր տուներ :

Յ Օ Դ

236. Հ. Յօդով և առանց յօդոյ անուանց մէջ ի՞նչ տարրերութիւն կայ :

Պ. Յօդով անուն մը միշտ որոշեալ բան մը , այսինքն այս ինչ կամ այն ինչ ծանօթ անձը կամ իրը , կը ցուցինէ . իսկ առանց յօդոյ անունն ունի ընդհանուր կամ ճանական նշանակութիւն :

Զոր օրինակ , սա օրինակներուն մէջ , Եղբօրս տունը , փլած տունը , տունը զոր գնեցի , ո՞ւն բառն յօդով է , քանզի կը ցուցինէ որոշեալ տուն . նոյնպէս , Հացը կերաւ , կը նշանակէ կերաւ այս ինչ հացը . բայց երբ կ'ըսեմ , Տուն շինեց , տան տիկին , ամէն տուն , իւրաքանչիւր տուն , հաց կերաւ , ո՞ւն բառը կը նշանակէ որ և իցէ տուն . հաց կը նշանակէ մտու հը հաց :

237. Հ. ի՞նչ կը կոչուին յօդով բառ մը և անյօդ բառ մը :

Պ. Յօդով բառը կը կոչուի որոշեալ անուն . անյօդը կը կոչուի անորուն կամ ճանական մուս առանուած :

անուն : Աերի լերջին օրինակներուն մէջ պահ ա-
նորոշ է , հայ՝ մասնական մտօք առնուած (*) :

Ե Բ . Դ Ա Ա

Աշակերտը յաջորդ հրահանգներուն մէջ ցուցնեն ա-
ծականները , եւ որոշեալ կամ անորոշ անունները :

46. Հրահանգ

Երբ հոգին է գինով թաթախ , կ'ըսէ Սենեքա ,
անսուրը է և ապականեալ . որպէս զի մնայ անսրատ ,
պարտի կենալ ժուժկալ : Հայելի է , որոյ պայծառու-
թիւնը կը պղտորի գինուոյն անսուրը չողիներէն : Արբե-
ցելոց մեծ մասն է ապուշ : Արբեալք չեն յիշեր վաղիւ ,
ինչ որ ըրին երեկ , որպէս թէ կորուսած էին ի սպառ-
ուշ և հանճար : Զկայ գրեթէ բնաւ խտիր ի մէջ արբ-
եալ մարդոյ և մեռելոյ . միոյն մարմինն է ի դագաղի ,
միւսոյն միտքը մարմիոյն մէջ իրրե ի տապանի : Մին
անմասն է զգայութենէ , քանզի շունի շունչ . միւսն
ունի դեռ շունչ , բայց և այնպէս է անզգայ : Որք մի-
անգամ կու տան զանձինս արբեցութեան՝ լինին ծոյլ ,
կ'ելնեն անագան անկողնէ , քանզի չեն ննջեր երբէք
խաղաղ քնով : Միշտ յուղեալ անմարսութենէ՝ կը տես-
նեն ահաւոր երազներ : Պիտուակոս օրէնք դրաւ կըկին
պատժով պատու հսուել յանցաւոր գինովները . մի ան-
գամ՝ յանցանաց համար զօր գործեցին , երկրորդ ան-
գամ՝ արբեցութեան համար որ կը տանի զմարդ գոր-
ծելու ամէն զեղծում , ամէն ոճիր :

(*) Յօդի այս յապատումը ոչ միայն համաձայն է քերակա-
նական ընդհանուր օրինաց , այլ եւ կը բառնայ մեր արդի հայերէնի
դանդաւութիւնէն մեծ մաս մը .

47. Հրահանգ

Փաստաբան ոմն օր տարաժամ (ժամանակէ առաջ)
մահուամբ ելաւ աշխարհէ՝ նշանաւոր էր պաշտօին մէջ
ոչ այնչափի իւր բանիբուն (ճարտասան) խօսողութեամբ
(լեզուանութիւն) որչափ կծու և ծազրող բնութեամբ
որ կու տար նմա մինչեւ այպանել և նախատել երբեմն :
Մի զարմանաք , եթէ ըսեմ թէ նա էր սապատողն . կը
զգուշանար սակայն չտալ առիթ իւր արուեստակիցնե-
րուն խայտառակել իւր խեղութիւնը , և ոչ ժողովուր-
դէն ոք կը համարձակէր կոչել զնա սապատողն , քանզի
ամէն մարդ կը վախնար նորա կծու լեզուէն : Այս շնա-
բարոյ փաստաբանն օր մը կը պաշտօպանէր անիբաւ դատ
մը , և մինչ մօտ էր յաղթահարուիլ հակառակ կողման
փաստաբանէն , սկսաւ կծանել , հեգնել այս վերջինն ,
և , այնչափ թշնամանք կուտեց անոր գլուխը , որ երբ
ելան դատարանէն , մարդն աճապարելով կեցուց սապա-
տող փաստաբանն և ըսաւ նմա ճոխութեամբ . « Փաս-
տաբան , կը ներեմ քեզ այսօր , բայց գիտցիր որ եթէ
յանդգնիս նախատել զիս ուրիշ անգամ այսպէս , կ'ուղ-
ղեմ զքեզ : » Փաստաբանն ըսաւ զայս ակնարկելով ա-
նոր ողին (կունակին) ծոռութիւնը , և սապատողը որ
չէր սպասեր լսել զայս՝ ամշցաւ այնպէս , որ մնաց պա-
պանձեալ , և մեկնեցաւ դատարանէն գլխակոր , ամօ-
թահար :

48. Հրահանգ

Աշակերտը յաջորդ հրահանգներուն մէջ ցուցնեն
բաղդատական ցուցական եւ ստացական ածականներ :

Մի է Աստուած , հաստիչ և խնամող տիեզերաց ,
ամենազօր և անհաս : Արեգակն չէ Աստուած , բայց

կրնայ համարուիլ Աստուծոյ յատակագոյն պատկերը :
Պայց առութիւն նորա կը լուսաւորէ զաշխարհ, չեր-
մութիւն նորա կու տայ կենդանութիւն երկրի արդեանց
(քերք) : Զարմանանք անոր վրայ իրեւ արարածոյ որով
կամեցաւ Աստուծած ցուցնել զիւր կարողութիւն, բայց
չմատուցանենք նմա պաշտօն : Կմա միայն որ է նոյն ինքն
իմաստութիւն և բարութիւն՝ կը վայելեն երկրագու-
թիւն, գոհութիւն և գովիտ : Ըրաւ զերկինո իւր ձե-
ռամբ, և սահմանեց աստեղաց գնացն իւր մատուցնե-
րով : Տուաւ ծովու սահման ընդ որ չկրնար անցնիլ նա,
և քոնութիւնք հողմոց կիջնեն ակնարկութեամբ կամոց
նորա : Աը սարսէ զերկիր և կը դողացունէ զոզքո երբ
կարձակէ իւր գրատումը : Աքանչելի է իւր բոլոր ճա-
նապարհաց մէջ, և անոր իմաստութիւնն այնչափ առա-
ւել է քան զմերն, որչափ անոր անսահման զօրու-
թիւնն ի վեր է քան զտկարութիւն մեր : Անոր անբաւ
բարութիւնը կը փայլի իւր բոլոր գործերուն մէջ : Ալ-
բարութիւնը կը փայլի իւր բոլոր գործերուն մէջ : Ալ-
բիւր է առաւելութեան և կեդրոն կատարելութեան :
Երջանկութիւնն յաստիս (այս աշխարհի վրայ), ինչ-
պէս նաեւ ի հանդերձելումն, կը կայանայ ի կատար-
րեալ միաբանութեան մեր կամաց նորայոյն հետ, և ու-
եալ ամէն բարիք են զաղիաղիուն (խախուս, դիւրա-
քեկ) և խարուսիկ :

49. *Zruhuliq*

Մտաւոր ձիրք հարստութիւններ են Արարչին գանձն բղիսեալ : Արարիչն կու տայ ամենուն իւր բաժինն ըստ իւր հաճութեան : Տուած է քեզ իմաստութիւն , լուսաւորած է միտքդ , մօտեցիր տդիտին կրթելու համար զնա , իմաստոյն՝ բռն քու օգտիդ համար : Ցիմարութիւնն աւելի գոռոզ է քան ճշմարիտ իմաստութիւնն . իմաստունը կ'երկայի յաճախ , և անոր կամքը

կը փոխուի , երբ կը ճանչնայ իւր սխալը . անմիտնէց յամառ , երբէք չյերկուանար (չտարակուսիր) . գիտէ ամէն րան , բաց իւր տղիտութենէն : Մին (իմաստունը) կզգայ իւր թերութիւններն , և այս խորհուրդը կը պատրաստէ զնա ներել ուրիշներուն տկարութիւնը . միւսն (անմիտը) կը նայի իւր մտքին անձուկ առուին , և կը հիանայ մանր մանր խիմերուն վրայ զորս կը գտնէ այն առուին յատակը , և կարծէլով թէ մարդարիտ են՝ կը ցուցնէ զնոսա պարծանօք , կորզելու համար մարդոց գովեսաը : Իմաստունն մտադիր է միշտ կատարեալ ընելու զիւր միտու , կը ջանայ մանաւանդ զարդարել զնա հմտութեամբք որ կարեն լինել օգտակար ընկերին , և այսպէս կը ստանայ փառք հաստատուն և անանց :

50. *Zruhsułq*

Փուրիսս Եղեսինոս , ստրուկ ի ծնէ , ազատուելէն
ետքը ստացաւ ագարակի փոքր , որ փռթով և մշակու-
թեամբ եղաւ այն երկրին ագարակներուն շահնեանա-
գոյնը (*): Այս յաջողութիւնը որ անոր աշխատութեան
և համբերութեան արդիւնքն էր , և որ արժանի էր
դրացիներուն յարդանաց , շարժեց ընդհակառակն սաս-
տիկ նախանձ անոր գէմ : Աշխատաէր հողադործը կը
բամբասուէր թէ կախարդ էր , և իրբեւ դիւթ կոչուե-
ցաւ յատեան գատառորաց : Թշնամիք նորա կը խնդա-
յին և կը համարէին զնա կորուսեալ անյօս : Դատաս-
տանի ժամադրեալ օրը Փուրիսս Եղեսինոս եկաւ ան-
վեհեր իւր կնոջ հետ որ էր կին զօրեղ և պնդակազմ
(բարեկազմ) , հագուած ըստ պատշաճի : Ենթել տւ-ո

(*) Գայ մասնիկը կը յարի ածականին վերջը նաեւ փոխանակ բառին, ցուցնելու համար յարաբերութեամբ զերադրական այս նշանակութիւնն ունի հոյ ւ-հիւ-ւ-հիւ բառը, փոխանակ բառ-լու ւ-հիւ ւ-հիւ-է: Այս զործածութիւնն յատուկ է հայերէնին:

աւ նաեւ իւր գէր և առողջ եզերն , արօր , բահ , բրիչ , և ուրիշ ամէն կահ և կազմած մշակութեան . յետոյ դառնալով դատաւորներուն , « Ահա , սոքա են , » ըստ , « յուռութք և բժժանք (կախարդանք) որովք պտղաբեր կ'ընեմ ագարակս : » Աւելի բան ըստաւ , և արձակուեցաւ միաձայն հաւանութեամբ դատաւորաց , լեցով մեծամեծ գովեստներ , և տարուեցաւ յաղթանակաւ իւր առունը : Խսկ անսամօթ դատախազք նորա ոչ այլ ինչ շահեցան իրենց վաս ամբաստանութենէն , եթէ ոչ ամօթ և նախատինք : Փուրիսս Եղեսինոս գործեց և ծաղկեցուց իւր ագարակն անդուլ անդադար աշխատելով , և ըրաւ զայն երկապատիկ աւելի քան գառաջինն պտղաբեր :

51. Հրահանգ

Ֆրէնտ , Անդղիոյ թագաւորին կնոջ բժշկապետն որ էր անդամ Անդղիոյ խորհրդարանին , սաստկութեամբ հակառակելուն համար նախարարաց , անհաճոյ եղաւ արքունեաց , և ամբաստանուելով իրեւ մատնիչ՝ դրուեցաւ Լոնտոնի աշխարակը : Իրը վեց ամիս ետքը նախարարաց գլխաւորն հիւանդանալով կոչեց բժիշկ , որ էր Ֆրէնտի բարեկամներէն , Միտ անուն , և որ հիւանդը զննելէ ետքը ըստաւ . « Ճանչցայ հիւանդութիւնք , և կը խոստանամ բժշկել զքեզ , բայց չեմ՝ գրեր դեղը , մինչև չտաս հանել բանտին բարեկամն ֆրէնտ : » Նախարարը տեսնելով որ հիւանդութիւնը կը ծանրանար , աղաշել տուաւ թագաւորին չնորհել աղատութիւն ֆրէնտի : Հրամանը տրուեցաւ , և հիւանդը կը կարծէր թէ Միտ պիտի սկսէր դարմանը . բայց Միտ չտաւ յանձն , մինչև ֆրէնտ զրկուեցաւ իւր տունը : Ան ատեն Միտ դարմանեց հիւանդը որ բժշկուեցաւ ախտէն յետ ոչ բազում աւուրց : Յետոյ Միտ երթա-

լով իւր բարեկամին տունը , տուաւ նմա իրր հինգ հազար կինէ քանզի Միտ դարմանած էր ֆրէնտի հիւանդներն անոր բանտարկութեան ժամանակ , և թէպէտ շատ ընդդիմացաւ ֆրէնտ , Միտ յաջողեցաւ հաւանեցունել զնա ընդունել արծաթը :

52 Հրահանգ

Զկայ յիմարութիւն աւելի հասարակ քան սնապարծութիւնը , թէպէտ չկայ ծաղրելի քան զայն : Սնապարծը կը սկսի նախ դնել զանձն հաւասար այլոց . այս մեծ յարգը իւր վրայ յառաջ կ'երթայ տակաւ , մինչեւ կը սկսի նա համարել զինքն բարձրագոյն քան զայլս , և եթէ ոք համարձակի հակառակել նմա յայսմ , կը վիրաւորէ սնապարծը սաստիկ , և կը բամբասուի անկէ իրրե թշնամի . ո՛չ նմա միայն , այլ և ճշմարտութեան և արդարութեան : Այս տկարութենէ ազատ մնալ դժուարին է , վասն զի ամբարտաւանութիւնը կու տայ մեզ կարծել թէ անսխալ աղբերէ կու գոյ մեզ յարգը զոր ունինք մեր վրայ , թէ՝ քան զայլս շատ աւելի լաւ գիտենք ինչ է արժանաւորութիւն , և թէ՝ չենք կուրացեալ նիւթական շահերէ և նախապաշարումներէ : Ուստի ո՛րչափ վիշտ է մեզ տեսնել հանսպազօր որ մարդիկ կը դատեն զմեզ այնպէս՝ որ անիրաւ կը թուի մեզ : Սակայն գովեստն այնպիսի շնորհէք է զոր չէ հնար կորզել բռնի : Ով որ կը ցանկայ գովութեան՝ պարտի զարդարել զանձն հանդերձիւ խոնարհութեան և համեստութեան : Եթէ կը զայրացունէ իւր դատաւորներն բարձրափութեամբ , և մեծամուռթեամբ , ստուգիւ կը կորուսանէ իւր դատը :

53. Հրահանգ

Եթէ մանրացուցիւ նայիս , կը տեսնես որ բնութիւնն այնչափ աւելի կը յաճախէ իւր փոյթը , որչափ աւելի իւր գործերը կը փոքրկանան : Տես , ի՞նչպէս կը զարդարէ չնշենագոյն միջամին զրահը ոսկւով , կուպուտակաւ , ծիրանւով , մարգարիտով և պէսպէս նարօտիւք : Տես ճամկաւոր (գոյնզգոյն) ոստայնը որով կը կազմէ պիծակներէն ոմանց թիւերը : Տես աշաց բազմութիւնն , այն շրջահայեաց թագը , որով պսակած է ճանձին գլուխը : Որչափ աւելի յառաջացաւ մանրացոյն , այնչափ աւելի կեանք տեսնուեցաւ ամէն տեղէ : Փոքրագոյն հիւլքը երեւեցան բնակեալ աշխարհներ : Ջրոյ ամէն կաթիլ փոխուեցաւ ի ծով ձկնաւէտ , և բուլոր այս էութիւնք , մինչև ցայժմ՝ անձանօթք , ունինք գործարաններ որոց փոքրագոյն մասունք , ամքող մարմեյն համեմատութեամբ , եթէ այնպիսի ; որպիսի են մեծագոյն անասնոց մասունք իրենց մարմեյն համեմատութեամբ : Ինչպէս մեծամեծքն , նոյնպէս փոքրագոյնք ունինք իրենց պիտանութիւնն , իրենց բնական ազդումներն , իրենց սովորութիւններն , իրենց պատեհ բազմերը . կը շարժեն , կը պահպանեն զիրենք , յառաջ կը բերեն սերունդ : Այն աշխարհ այնպէս ճշմարիտ է , այնպէս հին , ինչպէս մերն (մերինք) , աշխարհը որ ունի թերեւս խոնարհագոյն քան զինքն ուրիշ աշխարհներ , որք անոր համար են այնպիսի , որպիսի է նա մեզի համար :

Կ Գ . Գ Ա Ա

ԴԵՐԱՆԱԿԻՆ

ՅՈՒՐԱԲԵՐԱՆԱՆԻՆ Վ.Բ. Յ ՄԱՍԿԱԽՈՐ ԳԻՏԵԼԻՔ

238. Հ. Ի՞նչ է Յարաքեսկամին գլխաւոր պաշտօնը :

Պ. Յարաքեսկամին գլխաւոր պաշտօնն է դիմաւոր բայով ցուցնել բանի մը մասնաւոր յատկութիւնը , կամ պարագան , կամ վիճակը , և այլութեամբ առաջարկութեամբ :

Երկիր է մոլորակ որ կը բառակ էւր սանացնին եւց 24 ժաման մէջ մ անդամ , և կը բառակ , աբեժական շարքը 366 օրուան մէջ :

Մեծ է այն մարդը որ էեւէ սանիւլ իւր ըլլան :

Մարդը որ էբքէ սովորութեամբ երեխ պիտի կախուի վաղիւ :

Երկինք անհուն միջոց է որ կամուկն յնուեան անիւալութեամբ է իւնին նուրակներով և աբեժակներով :

Ցունը զր հասա պարհեանք եւ չնչ պիտի վաճառուի այսօր :

Ուր է վերաբիուն շր էուէլ ուսէք այս ամառ :

Այս օրինակներուն մէջ նօտր գրով նշանակուած մասերը , որ միջանիեալ նախագահութիւններ են յարաքերականով , կը ցուցնեն յարաքերականներուն այս ինչ մասնաւոր պարագան կամ վիճակիւ :

239. Հ. Աւրիշ ի՞նչ ձեւ կը նայ առնուլ յարաքերականով միջանիեալ նախագահութիւններ :

Պ. Այսպիսի նախադասութեանց յարաբերականը կրնայ զանց առնուիլ, և դիմաւոր բայը վոխուելով ու կամ այ ընդունելութեան՝ դրուիլ յարաբերակայէն առաջ^(*):

Այսպէս կ'ըսենք, Այս տունը մնայ ճարտարապետը. Նոր շնուռած տունը. Վաղաճին. Փլան աշտարակը. փոխանակ ըսելու, Ճարտարապետը որ չինց այս տունը, Տունը որ նոր չինուեցաւ, Զին որ էլ լոյնէ, Աշտարակը որ էլ:

(*) Ըստ մեզ այս ծերը, այսինքն միշանկեալ նախադասութեան բայց փոխել ընդունելութեան, պարու է գործածել զգուշութեամբ, նախ վասն զի՞խօսքն ընդհանրապէս կը մժանայ եւ կ'երկարի. այսպէս լաւ է վերի՞ցինակներուն առաջինը. Այս լեռու ուրեմն ունենալու բարձրութեան մասին այսպէս, թողով այսպէս, քան յարաքերականին բայն ընդունելութեան փոխելով ըստ. Խոր մեռած ունենալու գործութեան մասին այսպէս սա, Եթէնք առանա մէջ և որ կ'ադէն այս առաջի լուսաբարեկ բենց առաջներու և բերաւածերու, լաւ է թողով այսպէս, քան, ըստի միւս ծեսով, Եթէնք անդ սաստինե եւնա հայտներու և ուշակեաներու միւնքաւ անդուն անձաւ մէջ և. եւս առաւել սա օրինակը, Եթէն առաջ և, որ չ բարու յար առաջեց իր 24 ժման գի առաջ, և իւ դաստիա ուրեմն լուր 366 որուած էլ, մոլու եւ զըռուարձրունելի կ'ըլլայ, եթէ փոխենք այսպէս. Եթէ 24 ժման գի առաջ էւր առաջնի լուր նույնը, և 366 որուած էլ ուրեմն լուր առաջնի լուր է. Ցայտնի է թէ յարաքերական ծեւն աւելի պարզ, հակիրճ եւ վայելու է, եւ համաձայն լուծման կարգի որ մեր լեզուն, թէ հնոյն եւ թէ նորին, ընտական կարգն է.

Երկրորդ, որպանիստիւ ու եւ Շընդունելութիւնը չունին հայեցին ներկայ, անկատար, կատարեալ եւ ապառնի ծեւ, այն ծեւին տակ շատ անզամ չիմացուիր Թէ ընդունելութեամբ այս ժամանակ-ներուն ո՞րը հասկեալու ննջ, Զոր օրինակ, երբ կ'ըսեմ. Այս տունը շինող մարզը կը մեռնի. յայտնի չէ Թէ ուու ընդունելութիւնն իրը ներկայ առնուելու է Թէ իրբեւ անկատար. Կամ կատարեալ կամ ապառնի, այսինքն Մարդը որ էւ պահ այս տունը, Թէ որ էւ մաւր, կամ ցնչ կամ ուրու մաւր, կը մեռնի.

ՀՅՈՒՍԻՆԾ Թէ, ցնեմ միջանկեալ նախաղասութեան բայց ներգործական է, եւ յարաբերականն ուղղական, բայց կրնայ փոխութիւնը

240. Հ. Միջանկեալ նախադատութեան բայլ եղբ
կրնայ փոխուեի , “ ը ընդունելութեան :

Պ. Եթէ միջանկեալ նախադասութեան բա-
յը ներգործական է, և յարաբերականն՝ ուղղա-
կան, բայց կրնայ փոխութի ու բնդունելութեան :

Զոր օրինակ , նախընթաց թուոյն սա օրինակը . Մեծ է այն մարդը որ էլքտ սանձել իւր լեզուն , կըր-նանք փոխել այսպէս , Մեծ է իւր լեզուն սանձել էլք-տաղ մարդը . և սա , Երկինք անհուն միջոց է որ կամ-էլքէ յինքեան անթիւ լուսաւորներ իրենց մոլորակնե-րով և արբանեակներով , կրնանք փոխել այսպէս , Եր-կինք անթիւ լուսաւորներ իրենց մոլորակներով և ար-բանեակներով յինքեան ամենուն անհուն միջոց է :

241. Հ. Եթէ միջանկեալ նախադասութեան բայր չէղո՞ք է :

ու ընդունելութեան : Եթէ յարաբերականն հայցական է , բայտ մեզ պէտք չէ ամենեւին այն փոփոխութիւնն ընել , եւ հնտեւապէս խորթ է սա ծեւը . Այս տունը զօր հասաւ պարզեւած է ինձ՝ պիտի վաճառիք այսօր , փոխել այսպէս . Հաւիս ինձի պարզեւած տունը պիտի վաճառուի այսօր . եւ կամ սա . Ո՞ւր դրիք վերարկուն զոր կարել տուի այս ամառ , փոխել այսպէս . Այս ամառ կարել տուած վերարկուս ո՞ւր դրիք . Ասոնք թրբերէն լիզուի ծեւեր են , օտարամուտ , իրեւ պատառարյած բոյսեր մեր լիզուին վրայ վակած : Այս կարգէն են սա ծեւերը . Գնած հանդերձնիս , կերած հացերնիդ , կորուսած ժամանակներնուն մեծ մասը , եւայլն , որ ըստ մեզ ոչ միայն խորթ են , այլ եւ , ինչպէս ըսինք , չեն բնաւ հայերէն . Ասոնց պարզ եւ բնական ծեւն յայտնի է . Հանդերձը զոր զնեցինք , Հացը զօր կերաք , Անձ մասն իրենց ժամանակին զոր կորուսին , եւայլն :

ո՞ կամ ա՞ ընդունելութեան . ընդհանրապէս ո՞ ընդունելութեան՝ եթէ յարաբերականին բայց կը ցուցնէ գործողութիւն , ինչպէս կ'ըսենք , Վաշն ձին , փոխանակ , Զին որ և Հայք . ա՞ ընդունելու . թեան՝ եթէ միջանկեալ նախադասութեան բայց վիճակ ցուցնող չէզգոր է . ինչպէս , Մեռու մարդը , Բնած զինուորը . փոխանակ ըսելու , Մարդը որ Քառա . Զինուորը որ Բնած :

242. Հ. Եթէ միջանկեալ նախադասութեան բայց կրաւորական է :

Պ. Եթէ միջանկեալ նախադասութեան բայց կրաւորական է , կը փոխուի ա՞ ընդունելութեան , ինչպէս Ալբի օքինակներուն մէջ սա օքինակը , Մարդը որ իբրեւ ոպանող Յնուեցաւ երեկ պիտի կախուի վաղիւ , կրնանք փոխել այսպէս . երեկ իբրեւ ոպանող Յնուեցած մարդը պիտի կախուի վաղիւ : Նոյնպէս կ'ըսենք , Կորուուծ ոչխարը . Կորուուծ հանդերձը . փոխանակ , Աչխարը որ Կորուուցաւ . Հանդերձը որ Կորուուցաւ :

ԵՊ. Գ. Ա. Ս

Վարժապետներն կը խնդրուի լաշորդ հրահանգներուն մէջ ուղղել աղակերտաց ուղարքութիւնն այն նախադասութեանց որ յարաբերականով եւ դիմառոր քայլս բացատրուած են ; եւ կրնային բացատրուիլ ընդունելութեամբ տուանց յարաբերականի , բայց չէին լինիք այնպէս յստակ եւ վայելուզ , որպիսի են յարաբերականուն , եւ դիմառոր քայլս , ինչպէս պիտի տեսնուի յաշորդ հրահանգնին երկրորդ ձեւնեն :

54. Հրահանգ

Փարսսի աշուարակը որ Յնուեցաւ հրահանգայ երբարբերէ կը համարուէր իբրեւ մին եօթն հրաշնկերտաց աշխարհի : Այսու անուամբ կոչուեցան ուրիշ աշտարակներ որ Յնուեցան յետոյ Նախադասուած առաջնորդելու հարգաւուած : Փարսսի աշտարակն էր մեծանիստ , չորեքկումի , սպիտակ մարմարիննէ , բազմայարկ : Վերջին յարեն ուներ տանիստ որոյ վրայ կը վառէր խարոյկ մեծ զոր նաւավարք կրնային տեսնել ի հեռուստ : Ճարտարապետն որ յօթնեց աշտարակին Ֆրանքիւը և հոգ ուսրաւ անոր շինուենան կը կոչուէր Սոստրատէս : Յանկալով սեպհականել ինքեան ուսոյապայ այս օգտակար գիւտին մառքը . և Համարդակելով կցել իւր անունը թագաւորին անուան , խորհեցաւ ոս հանձարեղ հնարքը . արտաքին ծեփին վրայ որ կրնար նօթագիւ յետ ժոհանակաց՝ զրեց թագաւորին անունը մեծ գովեստիւ . իսկ ծեփին տակ գրումնց մարմարինի վրայ ուրիշ արձանագիր մը , այնու ոչս որ գար մի յետոյ , երբ ծեփին հետղնետէ կեզեւ եելով թօթափեցու խապատ , անհետ եզաւ Պտղումնաց

յիշատակը , և կը տեսնուէր միայն սա գիրը մեծամեծ տառերով . « ՍՈՍՏՐԱՏԵՍ ԿՆԻԴԱՅԻ ԱՌ ԴԻՍՆ ՓՐԿԻՉԱՍ ՅՈԳՈՒՏ ՆԱԽԱՐԿՈՒԹԵԱՆ : »

Նոյն ուրիշ ձեռով

Պարզմեայ Եղբայրուէրի հրամանաւ շնուռած դարսէ աշխարհէ կը համարուէր իրեւ մին եօթն հրաշակերտաց աշխարհի : Նաւորդոց առաջնորդելու նպատակու յերայ շնուռած ու բչ աշխարհիներ կոչուեցան այսու անուամբ : Փարոսի աշտարակն էր մեծանիստ , չորեքլուսի , սպիտակ մարմարիոնէ , բազմայարկ : Վերջին յարկն ունէր վրան նաև աշխարհ հեռուսին ուենել կորող ըլլալու առ մեծ իւրայի վառելու բանին : Աշխարհին նրանին յօրինող և շնուռնետուն նոյն դարտարապետը կը կոչուէր Սոստրատէս : Յանկալով սեպհականել ինքեան առյապայ այս օգտակար գիւտին փառքը , և չհամարձակելով կցել իւր անունը թագաւորին անուան , խորհեցաւ սա հանճարեղ հնարքը . յետ ժամանակաց նօթափելի արդարէն ծեփին վրայ գրեց թագաւորին անունը մեծ գովեստիւ , իսկ ծեփին տակը գրոշմեց մարմարիոնի վրայ ուրիշ արձանագիր մը , այնպէս որ , դար մը ետքը , երբ ծեփն հետզհետէ կեղեւելով թօթափեցաւ իսպառ , անհետ եղաւ Պտղոմեայ յիշատակը , և կը տեսնուէր միայն սա գիրը մեծամեծ տառերով . « ՍՈՍՏՐԱՏԵՍ ԿՆԻԴԱՅԻ ԱՌ ԴԻՍՆ ՓՐԿԻՉԱՍ ՅՈԳՈՒՏ ՆԱԽԱՐԿՈՒԹԵԱՆ : »

55. Հրահանգ

Անդիւեան կղզեաց մեծ մասին աւազուտ ափանց վրայ կան անտառք ժանտախնձորենոյ : Այս ծառը կու տայ պտուղ որ մեծութեամբ , ձեւով , գունով և հոտով նման է Եւրոպայի գեղեցկագոյն խնձորներուն չանալարհորդք որ չեն գիտեր թէ այս պտուղն , որ

այնպէս գեղեցիկ կ'երեւի , ունի սոսկալի թոյն՝ կ'ուտեն երբեմն անկէ , և ոչ սակաւք լինին զոհ այս անզգուշութեան : Ծառին բոլոր մասերն են այնպէս թունալից , որ անձրեւի շիթք որ անոր տերեւներէն կամ սոտերէն քամուելով կ'իջնեն , եթէ կաթեն ըստ դիպաց մարդու մորթին վրայ , կը ծնուցանեն պալար : Կ'ըսուի թէ ոդն անգամ որ կը չնչուի այս ծառին մօտ՝ վարակեալ է մահացու գործեօք , և թէ՝ ով որ կը ննջէ այս ծառին հովանուոյն տակ՝ չկրնար արթննալ շատ անգամ : Բայց բարեբախոտութեամբ բնութիւնը դրած է վեասուն մօտ նաեւ դարմանը : Գրեթէ ամէն տեղ ուր կը բուսնի ժանտախնձորենին , կը բուսնին անոր կից նաեւ սպիտակ նոճիք , որ իրենց ոստերը կը խառնեն թունաւոր ծառին ոստերուն , և հոյզը որ կը մզուի (կը քամուի) սպիտակ նոճուոյն տերեւներէն՝ արագ և սառյգ անգեղեայ է միւսին թունաւորիչ աղդեցութեան : Այս նոճուոյն տերեւը ծամեն անգամ բաւական է , և հարկ չէ ջանալ մկել հիւթը :

56. Հրահանգ

Կան մարդիկ որ կամելով ծածկել իրենց ծուլութիւնը՝ Երսեն . « Բնութիւնը զլացած է մեզ քանքարներ զորս տուած է այլոց առատութեամբ . միթէ յանցանք է մեզ այս : » Այսպիսեաց կրնայ տրուիլ սա պատասխանը թէ լնկերութեան մէջ չկայ գրեթէ գործ որ , բարւոք կատարուելու համար , պահանջէ քան զսովրականն աւելի քանքար : Կենաց հասարակ պաշտօներուն համար բաւական է հանճարոյ այն բաժինը որ ինկած է ամէն մարդու , եթէ մարդն աշխատի մշակել այնչափը : Մեծամեծ ձիք են իրը պատուական քարեր որ հաճոյ կը թուին աչաց , բայց չեն կարեւոր պիտոյ (բացարձակապէս հարկաւոր) մարդոց երջանկութեա-

Նը ։ Համարդակ բանն, ըստ հուկառակն, կրնայ համարուիլ
նման գրամոյ որ կ'անցնի առհասարակ, և որոյ պէտքն
է հանապազորդ։ Մեծամեծ հանձարներու, ինչպէս
նաեւ չքնաղ գեղեցկութեան տէր մարդոց ամենեւին
պոյթ չէ թէ մարդիկ ինչ արդողութիւն կու տան ա-
նոնց, այնպիսիք հիացում միայն կը փնտռեն։ Օգտա-
կար ընելով զիրենք հասարակաց ստանալ մարդոց ոչ-
քը, թեթեւ և սորոին է յաշն նոցա անոնց փափաքն
է ձգել իրենց վրայ շլացեալ և ապշեալ հայեցուած-
ներ։ Այս է պատճառ որ գեր ի վերց ձրից տէր մար-
դիկ չեն սիրողք ճշմարիտ օգտի օգտակար են հասա-
րակաց թէ ոչ չէ նոցա փոյթ։ Անոնց համար ճշմարիտ
օգուտ այն է որ մարդիկ մեծարեն զնոտ և սիրեն
իրեւ չնաշխարհիկ (գերբնական) արարածներ։

57. *Zruhsułiq*

Անապատական ոմն որ անուանի էր սրբութեամբ՝
մոտաւ Նպարավաճառի մը խանութ։ Նպարավաճառը
պատուելու համար սուրբը՝ հանեց անոր ամանով մեզր։
Այն ինչ բացաւ սուրբն ամանը, ձանձերու բազմու-
թիւն մը եկաւ ամանին վրայ։ Նպարավաճառն առաւ
հովահարը և սկսաւ քչել ճանձերն։ Անոնք որ ամանին
բերանն էին՝ փախան դիւրաւ։ բայց աւելի շատակերք
որ ամանին մէջ ինկած էին՝ մեղրով շաղախեալ չկրցան
թռչել։ Անապատականն յափշտակուած կը դիտէր տե-
սարանը լրութեամբ։ Հուսկ ուրեմն սթափեցաւ իրեւ-
ի քնոյ՝ հառաչելով։ Նպարավաճառն հարցուց անոր
հառաչելուն պատճառը զարմացմամբ։ «Ոյս ամանն,»
ըստաւ անապատականը, «աշխարհս է, և ճանձերն են
անոր բնակիչներն»։ Այն ճանձերը որ կեցան ամանին
բերանը՝ կը նմանին իմաստնոց որ, չափ դնելով իրենց
ցանկութիւններուն, չեն միմիր յիմարաբար ի խորս

հեշտութեանց , այլ կը քերին միայն առ ափամբք (քո-
վերէն կ'անցնին) : Անոնք որ դիմեցին ամանին մէջ՝ օ-
րինակ են այն մարդոց որ կը թողուն իրենց կրից եր-
թալ սանձարձակ , և կու տան զիրեննք տնիստիր ամէն
հեշտութեան : Երբ մահուան հրեշտակը բազմելով թե-
ւերը՝ սլացեալ գայ երկրիս վրայ , մարդիկ որ կը գըտ-
նուին աշխարհիս ամանին բերանը՝ դիւրու պիտի սլա-
նան դէպ յերկնաւոր հայրենիս . մինչ անոնք որ լինե-
լով դերի իրենց կրից՝ գտնուին ընկդմեալ հեշտու-
թեանց թունաւոր ամանին մէջ , պիտի սուզին (ընկըդ-
մին) եւս քան զեւս , և իյնան գահավէծ յանդունդ
կորստեան :

U.S. GOVERNMENT

F U. 3

243. Հ. Բայցերուն ո՞ր մասն իբր գոյտկան կամ
ածական կը գործածուին :

Պ. Բայերուն աներեւ ոյթը կը գործածուի
իբրեւ գոյական, եզակի միայն, և կը հոլովի այս-
պէս. Ռւտել, ռւտելոյ, ռւտելով. լսել, լսելոյ,
լսելով. կամ արդի հայերէնի ձեւով, Ռւտել, ռւ-
տելու, ռւտելէ, ռւտելով, և :

Խակ ընդունելութիւն անցելոյն հին ձեւը, Եաւ,
կը գործածուի նոյնպէս իբրեւ գոյական թէ եղա-
կի և թէ յօդնակի, այսպէս . Մեռեալ, մեռելոյ,
մեռելով . Մեռեալք, մեռելոց, մեռելովք, Ի՞ւ :

ԱՅԼ ԵԽ ԱՅԼ ԲԱՑԵՐՈՒԻ ԽՆԴԻՐՆԵՐ

244 · Հ. Ի՞՞նչ հոլով խնդիր կուզեն կրառական
բայերը :

Պ. Երբ ներգործական բայ մը կը փոխուի
կրաւորականի , ներգործականին սեռի խնդիրը
(հայցականը) կըլլայ կրաւորականին տէր բայի
(ուղղական) , և տէր բային կը դրուի բացառա-
կան , զսր օրինակ , Հայր կը սիրէ պէտին . Ուրին կը
սիրուի հօգին :

245. Հ. Ի՞՞նչ ի՞նդ-ի՞ր կ'ուղե՞ն զա՞նա՞ել և գնել բայց :

Պ. Վահանեւ և ժնել բայերը կ'ուզեն սեռա-
կան հողով խնդիր, զոր օրինակ, Քանո՞յ (քանի՞ն)՝
գնեցիք այս տունը : — Եղայյու գնեց զայն երեսուն
հազար դաշնեկաննէ : Քանո՞յ, վաճառեցիք ձեր արտը : —
Մեր արտը վաճառեցինք վեց հարիւր տասն սուկայ : Այս
իւղը կրնար վաճառուիլ մեծաբնիք, և տրուիլ աղ-
քատաց :

246. Հ. Ի՞՞նչ հոլով կը դրուի Տարի բառը Տարիք
ցուցնելու համար :

Պ. Աեռական հոլով. զոր օրինակ, բանի
դաշտան է այս պատանին: — Այս պատանին տասը
դաշտան է: Հայրս մեռաւ վաթսուն դաքանան: (*)

247. Հ. Ի՞նչ գիտելիք կայ Երթամ՝ բային վրայ։
Պ. Երթամ բայը, թէսէտ չէզոք է, ճանա-

(*) Տարիի կրնայ ցուցուիլ նաեւ Թուականին վրայ աւելցունելով - 4-ը . (→.) Կամ - 4-ը (Աթ.) , այսպէս . Այս մարդն ունեածոյէ , բայց էտակաւին ուժեղ եւ առողք . Հայրս մեռաւ կ-թած-4-ը :

պարհ ը առը կ'ուզէ հայցական . զոր օրինակ . դա ցէք ձեւ հանապահուս :

248. Հ. Ի՞նչ հոլով կը դրուին Ճամանակի տեսողութիւն և Զափ ցուցնող անուններ :

Պ. Ժամանակի տեղողոթիւն և Զափ ցուցնող աշնուներ կը գրուին հայցական հոլով . զսր օրինակ , Աշխատեցան Երկու բէն (օր) և Երկու էլլէք : Ո՞ւստի ժամանակ կը տեւէ այս գործը : — Այս գործը կը նայ տեւել Երեւ տիս : Նոյնպէս կ'ըսուի . Գայցինք Երկու մզն . Գնեցի առաւ ուստի ցորեն . Տուր ինձ բայց մը ջուր . Խւրաքանչիւր խմեց ար ուշ գիւնի : Ասոնք պատասխան են ո՞ւստի ժամանակ , ո՞ւստի աեղ , ո՞ւստի , ուստի հարցմանց :

42 · 400

፩ በ የ ተ ተ

249. ζ. ή ηξ ή θεονηρός

Պ. Նախդիք կը կոչուին, շ. է. յ., առ., ըստ,
ընդ., ց. որ այլեւայլ հոլով խնդիր առնլով այլեւ-
այլ իմաստ կու տան :

է , կամ ձայնաւորով սկսող բառէ առաջ՝ հին լեզուին տրականով կը ցուցնէ դադարում , իսկ առանց ոի հայցականով կը ցուցնէ շրջում , այսպէս է դան , է +ալս+է , կը նշանակէ՝ տան կամ քաղաքին մէջ (դադարում) . է դրան , է +ալս+ , կը նշանակէ՝ դէպ ի տունը , դէպ ի բաղարը :

Ն, ընդհանրապէս կը գրուի հայցականի վրայ,

զառաւուն, զառաղաւ, զաւ, կը նշանակէ՛ տունը, քաղաքը, ան (անիկա) :

Ն բացառականով կը նշանակէ բանի մը վրայով. շանէն, պատրին, կը նշանակէ՛ տանը, քաղաքին վրայով:

Ն գործիականով կը նշանակէ բոլորաիքը, պատաս, զբանական, քաղաքին, բանակին բոլորաիքը: Առ, որական խնդրով կը նշանակէ՛ ո՞ւն. առ բարեւութին, թագաւորին քովը:

Առ, հայցականով կը նշանակէ՛ գէպ ի մէկը. Առ բաժանուն, առ Աստուած, առ հայրէնն, գէպ ի թաւգաւորը, գէպ Աստուած, գէպ հայրենիքը:

Առ, գործիականով, կը նշանակէ՛ մէկուն կամ բանի մը ժամանակը, առ Սովորնէն, առ Հոնչովան, Սողոմոնի, ջրճեղեղի տաենը:

Ճնդ, որականով կը նշանակէ՛ հետը. Ճնդ Աստուած, ճնդ նմա. Աստուածոյ հետ, անոր հետ:

Ճնդ, գործիականով կը նշանակէ՛ տակը. Ճնդ հովնեա, ճնդ պաշտպանութեանի:

Ճնդ, որականով կը նշանակէ՛ համեմատ (Կօրէ), ճնդ կորէ, ճնդ հրամանէ. կարողութեան, հրամանին համեմատ (*):

Ն, հայցականով, երբեմն նաեւ մինչւ բառով կը նշանակէ՛ մինչեւ. ցայծ, կամ, մինչւ ցայծ, մինչեւ հիմա. ցատկանեան, մինչեւ յաւիտեան:

(*) Այս նախդիրներն տրուած օրինակներուն համեմատ կը գործածուին առ այժմ ըստ պիտոյից արդի հայերէնի մէջ:

Կ Ե. Պ Ա. Ս

Մ Ա. Կ Բ Ա. Յ

250. Հ. ի՞նչ գիտելիք կայ արդարեւ և յերանէ մակայիներուն վրայ:

Պ. Արդարեւ կը նշանակէ առողջիւ. յերանէ ունի երանութիւն ի նշանակութիւն. զոր օրինակ, Արդարեւ մեծէ կորուստը. Յերանէ պատժուեցաւ (*):

251. Հ. ի՞նչ տարբերութիւն կայ արդեւ և մինէ մակրայներուն մէջ:

Պ. Արդեւ և մինէ հարցական մակրայ են, և հարցական խօսքի մէջ կը մոտեն շատ անգամ: Արդեւ, կը գործածուի ընդհանրապէս, երբ հարցունովն անգէտ է և կ'ուզէ տեղեկանուլ. Գիտէք արդեւ: Մինէ, կը գործածուի ընդհանրապէս ոչ թէ տեղեղեկութիւն առնոյ համար, այլ իրբեւ ձեւ. Մինէ չեմ կարող:

252. Հ. ի՞նչ տարբերութիւն կայ թերեւ և քայցե մակրայներուն մէջ:

Պ. Թերեւ կը ցուցնէ տարակոյս կամ հաւանականութիւն. քայցէ, կը ցուցնէ երկիւղ, և կը նշանակէ աւայ նէ: Ապաշխարէ, ներեւ թողութիւն ըլլայ քեղ. Ապաշխարէ, քայցէ պատժուիս: Առաջինը կը նշանակէ, Ապաշխարէ, քանզի յայ նէ թողութիւն ըլլայ քեղ. երկրորդը կը նշանակէ,

(*) Ոմանք յերանէ սովոր են զործածել փոխանակ արդարեւի. եւ այս, ինչպէս կը կարծենք, արդինք է անուշագրութեան:

Ապաշխարէ , ողա նէ ու կը պատժուիս , կամ , ուշ
լոյ նէ պատժուիս :

153. Հ. Ի՞նչ մասնաւոր գործածութիւն ունի հա-
նաւանդ մակրայլ :

Պ. Մանաւանդ կը գործածուի վայելլութեամբ
բազդատութեան մէջ , գլխաւորապէս երբ բազ-
դատութեան ելլոներն բայի աներեւոյթ են , ինչ-
պէս . Կընարեմ հանաւանդ մեռնել քան ուրանալ (*) :

Կ Բ. Դ Ա. Ս

Շ Ա. Վ. Կ Ո. Պ

254. Հ. Ի՞նչ գիտողութիւն կայ Հան չէ , ունչէ , և
որոշեաբ շաղկապներուն զրայ :

Պ. Վան չէ , ունչէ , ևն Պատճառական շաղկապ ,
և կը ցուցնեն թէ նախագասութիւնը նախընթա-
ցին պատճառը կը յայտնէ . զոր օրինակ , Այս մար-
դը կախուեցաւ Հան ոսպանով էր : Գետինը թաց
է , ունչէ անձրեւ եկաւ . Որոշեաբ , Ապացուցական
շաղկապ է , և կը ցուցնէ թէ նախագասութիւնն ա-
պացոյց է միւս նախագասութեան , զոր օրինակ .
Որոշեաբ կախուեցաւ , ոսպանով էր : Անձրեւ եկած
է , որոշեաբ գետինը թաց է (**) :

255. Հ. Ի՞նչ է երբ և մնա շաղկապներուն տարբե-
րութիւնը :

(*) Ամանը յանդ բառը կը գործածեն այս մտօր :

(**) Փոխանակ Հան չէ կամ ունչ շաղկապին որոշեա-
բելք շատ անզամ սխալ իմաստ կ'ելլէ :

Պ. Երբ , կը կապէ երկու գործ որ յաջոր-
դած են իրարու , զոր օրինակ , երբ լուցին զայս
թագաւորէն , գացին :

Միւս , կը ցուցնէ երկու գործ , որոց մին կը սկսի
այն միջոցին որ միւսը կը կատարուէր . Միւսնա կը
խորհէր զայս , Աստուծոյ հրեշտակը երեւեցաւ
նմա . Աշակերտները գողացան զնա , մնա մեք ի քուն
էլնը :

Կ Բ. Դ Ա. Ս

58. Հրահանգ

Յաջորդ հրահանգներուն մեջ աշակերտք միտ դնեն
վերոլիշեալ կանոններուն :

Տանուաէր ոմն ելաւ առաւօտուն վարձել մշակներ
յիւր այգին , և իւրաքանչիւր մշակի հետ սակ արկա-
նելով օրը մին մի դահեկան՝ զրկեց զնոսա յայգին :
Երկրորդ ժամուն մօտ ելաւ դարձեալ հրապարակ , և
տեսնելով զայլս որ կը կենային գատարկ , ըսաւ և նո-
ցա , « Գացէք և դուք յայգին , և ինչ որ արժան է՝
տար ձեզ : » Գացին և նոքա : Տանուաէրն ելլելով
դարձեալ վեցերորդ և իններորդ ժամուն մօտ՝ ըրաւ
նոյնպէս : Տետասաններորդ ժամուն մօտ դարձեալ ել-
լելով՝ տեսաւ ուրիշներ անգործ , և ըսաւ անոնց : « Ըն-
դէ՞ր կը կենաք զօրն ողջոյն գատարկ : » Մշակներն
ըսին , « Վասն զի (ոչ , որովհետեւ) ոչ ոք բռնեց զմեզ
ի վարձու : » Տանուաէրն ըսաւ անոնց , « Գացէք և
դուք յարգին , և ինչ որ արժան է՝ կ'առնուք : » Երբ
երեկոյ եղաւ , այդւոյն տէրն ըսաւ իւր վերակացուին :

« Կոչէ միակներն , և տուր անոնց վարձքը՝ սկսելով յետիններէն մինչև առաջիններն : » Երբ եկան մետասաններորդ ժամիններն , առին մէն մի գահեկան : Գալով առաջիններն որ կը կարծէին առնուլ աւելի , առին նոյնպէս մէն մի գահեկան . և երբ առին , կը տրտնջէին տանուտեառնէն և կ'ըսէին . « Այդ յետինքդ գործեցին մի ժամ , և հաւասար ըրիր զնոսա մեղ որ կրեցինք օրուան ծանրութիւնը և տօթք : » Պատասխան տուաւ տանուտէրն անոնց միոյն և ըսաւ . « Ընկեր , չեմ զրկեր զքեզ . ո՞չ ապաքէն մի գահեկանի սակ արկիր ընդ իս . ա՛ռ զքոյդ և գնա . եթէ կամիմ , կու տամ'այս յետիններուն այնչափ որչափ քեզ , միթէ չունի՞մ իշխանութիւն յիմսու ընել ինչ որ կամիմ : Զարէ քու աչը , վասն զի ես բարի' եմ : »

59. Հրահանգ

Յիսուս վեց օր յառաջ քան զջամփին եկաւ Յեթանիա ուր էր Ղաղարոս մեռեալն զոր Յիսուս յարոյց ի մեռելոց : Եւ ըրին հոն նմա ընթրիս : Մարթա , քոյր Ղաղարու , կը կենար ի սպասու , և Ղաղարոս էր Յիսուսի հետ բազմեալներէն մին : Իսկ Մարիամ , միւս քոյր Ղաղարու , առնլով լիտր մի նարդոսի իւզ աղնիւ և մեծագին՝ օծեց Յիսուսի սոսուներն և հերով գլխոյն կը մաքրէր , և տունը լի եղաւ իւզոյն հոտէն : Աշակերտներէն մին , Յուդա Խակարիովտացի , որ պիտի մատներ զնա՞ ըսաւ , « Ընդէ՞ր այդ իւզը չվաճառուեցաւ երեք հարիւր գենարի որ տրուէր աղքատաց : » Զայս ըսաւ , ոչ զի աղքատաց համար փոյթ էր նմա , այլ վասն զի զող էր և ինք ունէր արկզը , և ինչ որ Կիյնար հոն՝ կը կրէր :

60. Հրահանգ

Մանուկ հողատէր մը իրը քսանամեայ (քսան տարուան) մեծատուն յոյժ , տէր մեծ ամեծ արտերու և ագարակներու , կը բնակէր Հնդկաստան : Էր սա այնպէս սէդ և բուռն , որ կրնար բերել կործ անումն և աղէտ ինքեան և իրեններուն : Բարեկամներէն ումանք ջանացին իմացունել խրոխտ պատանւոյն թէ անոր մեծագոյն զօրութիւնն էր ոչ թէ հարստութիւնն և ընդարձակ կալուածներն , այլ իւր ծառայութեան մէջ գտնուածմարդոց սէրը : Այս իմաստուն խրատը , փոխանակ ուղղելոյց մանուկ հողատէրը , կը շարժէին անոր բարկութիւնը խրատուաց վրայ : Իմաստուն մը , խորհելով զգաստացունել զոռող երիտասարդն առանց գրգռելոյց նորա ցասումն իրեն դէմ , հնարեց ճարտրակի (առներան) խաղն , ուր թագաւորը , թէպէտ պատուականագոյն , չկրնալելնել ի ճակատ կամ պաշտպանել զանձն առանց օգնութեան զօրականին և հպատակներուն : Ընչեղ պատանին որ էր ի բնէ հանճարեղ՝ առաւ խրատ այս գեղցիկ գիւտէն , փոխեց իւր վարքը , և այնպէս առաւ մօտալուտ չարեաց առաջն , ի չնորհակալութիւն այս երախտեաց՝ թողուց հնարագիւտին ընտրել իւր հատուցումք : Իմաստունը ինդրեց որ , ըստ թուոյ խորչից խաղի ատախտակին , այն տարուան հունձէն տրուէր նմա ցորենահամա՝ կրկնապատեկլով ամէն անդամ հատերուն թիւն սկսեալ առաջին խորչէն մինչև վաթուուն և չօրորդքը : Մանուկ հողատէրն համեցաւ չնորհել նմա ինդիրնէիսկ և իսկ առաջ հաշուոյ և քննութեան : Բայց յետոյ հաշուով յայտնի եղաւ թէ Հնդկաստանի ընդարձակ երկրին բոլոր հունձը բաւական չէր լուու պայմանը զօր յանձն առած էր հողատէրը : Իմաստուն ի դէպ համարեցաւ յայնժամ զգացունել պատանւոյն , թէ ո՛ր

չափ կարեւոր է մեծամեծաց խորշել իրենց առընթերա-
կաներէն , և զգուշանալ որ նոցա մեծանձնութիւնը չը-
նեն մարդիկ առիթ զեղծման :

61. Հրահանգ

Ուէսդմինսդէրի վարժարանին մէջ երկու դասեր
բաժնուած էին իրարմէ վարագուրիւ միայն , զոր մա-
նուկ աշակերտ մը , տասը տարուան , պատուեց ըստ
դիպաց : Պատանին , ի բնէ հեղ և երկչոտ , կը դողար
երկիւղէ պատժոյն զոր անշուշտ պիտի ընդունէր խըս-
տաբարոյ տեսչէն : Երիցագոյն աշակերտներէն մին , ե-
րեքտասանամեայ պատանի , հանդարտեցուց խռովեալ
ընկերն՝ խոստանալով նմա իւր վրայ առնուլ յանցան-
քը և կրել պատիժը . և եղաւ իսկ այնպէս : Տարիներ
անցան , երկու աշակերտք որ ելած էին դպրոցէն՝ ի չափ
հասեալ , եղան , մին՝ երեսուն , և միւսն՝ երեսուն և
երեքամեայ , և Անդզիոյ քաղաքական պատերազմին ժա-
մանակ յարեցան երկու հակառակ կուսակցութեանց :
Մին եղաւ խորհրդարանին կողմը , և միւսն յարեցաւ
թագաւորական կուսակցութեան : Յետ երկուստեք յա-
ջողուածոց և ձախողութեանց , բախսոը նպաստեց հան-
րապետականաց , որ ձերբակալ ըրին արքունի բանակին
բոլոր սպաները : Գատաւորներ սահմանուեցան դատել
պարտեալներն , և երկչոտ աշակերտն որ քաղաքական
պաշտօններ կատարած էր՝ եղաւ այն դատաւորներէն
մին : Յանցաւոր կարծեցելց յանկին մէջ որ հրատարակ-
ուեցաւ՝ կարգալով զանուն իւր դպրոցի բարերարին ,
զոր դպրոցէն հետէ տեսած չէր , հարցուց և տեղեկա-
ցաւ թէ արդարն իւր բարերա՛րն էր նա առ որ կը
զգար զանձն երախտագէտ , և առանց յայտնելոյ ումեք
իւր խորհուրդը՝ գնաց փութով լոնտոն , և բարեխօ-
սելով բարձրագոյն իշխանութեանց , պատեց իւր բա-

րեկամն մահապարտութեան պատժէն զոր կրեցին
թշուառ ընկերք նորա :

62. Հրահանգ

Լոնտոնի մէջ լինէր հանգանակութիւն ի նազաստ
դարմանոցի մը որ էր այն քաղաքին երեւելի հաստա-
տութիւններէն մին : Նուիրակը որոց յանձնուած էր
դրամն հաւաքելու պաշտօնը՝ կու գան փոքր տուն մը
որոյ դրունք բաց էին , և ամուրի ծեր մը որ տանու-
տէրն էր՝ գաւթին մէջ կը յանդիմանէր սաստիւ իւր
սպասաւորը , որ անհոգութեամբ կրակը նետած էր
վառած լուցկի մը որոյ միւս ծայրը կարէր լինել պի-
տանի : Նուիրակներն , յետ լինելոյ ունկնդիր այն չնչին
վիճին և սաստիկ յանդիմանութեան , մտնելով ներս
գրեթէ անյօս՝ մօտեցան ամուրի ծերունոյն , որ ի-
մանալով նոցա գալստեան պատճառը՝ նուիրեց իսկոյն
400 ոսկի : Յնուիրակը որ ականատես եղած էին կռուին՝
յայտնեցին իրենց զարմացումն այս առատածեռնու-
թեան վրայ : « Յետին խնայութեան հետ այսչափ ա-
ռատութիւն զարմացո՞ւց զեղ , բարեկամք , » ըստ
ծերունին : « Յս կը խնայեմ , այո՛ , վասն զի առատ եմ .
և առատ եմ , վասն զի կը խնայեմ . առանց միոյն պի-
տի չինէր միւսը , եւ ես պիտի չինէի երջանիկ : » Ա-
ռատածեռնութիւն կը սպասուի անկէ միայն որ գիտէ
իւր հաշիւը :

63. Հրահանգ

Առաջին գաղափարք զորս կ'ունենանք ընկերի մը
վրայ դպրոցի մէջ՝ չեն չնջուիր մեր յիշողութենէն : Հին
ուսումնակցէ մը բաժնուելէ ետքը , երբ կը հանդիսկինք
նմա , կը դատենք զնա ըստ գաղափարին զոր տուած է
նա մեղ ի պատանեկութեան :

կը մեծարենք զնա կամ կ'արհամարհենք , կը գովենք
կամ կը պարսաւենք , կը սիրենք կամ կ'ատենք ըստ կա-
նուխ տպաւորութեանն զոր՝ թողած է նա ի յիշողու-
թեան մերում : Թերեւս դէաք և տարիք փոխած են նո-
րա բնութիւնը , սակայն տպաւորութիւնը զոր գամ մի
ըրած է նա է ի մեզ՝ կը մնայ անջինջ , և թօթափել վա-
ղեմի ազդումը գրեթէ անհնար է մեզ : Զանացէք ու-
րեմն , ով մանկունք , ձեր մատաղ հասակէն տալ մար-
դոց , մանաւանդ ձեր հասակակցաց , բարւոք կարծիս
ձեր վրայ :

Հ. Դ. Ս

ԱՌԱՆՑԵԱԼ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

256. Հ. Բառերը քանի տեսակ են իրենց կազ-
մութեան կողմանէ :

Պ. Բառերն իրենց կազմութեան կողմանէ
կրկին են , Պարզ և Բաղադրաալ :

257. Հ. Ո՞ր բառերն են Պարզ , և ո՞ր բառերը
Բաղադրաալ :

Պ. Պարզ կը կոչուին այն բառերը որ յաւել-
ուած չունին , և կը կոչուին նաեւ արմատ . ինչ-
պէս՝ կար (կարողութիւն) , ծով , գլուխ , սէր ,
պարզ կամ արմատ բառեր են . բաղադրեալ են
կար , ծովայն , զօրաէլուի , որդեւէ :

258. Հ. Քանի տեսակ են բաղադրեալ բառք :

Պ. Բաղադրեալ բառք են կրկին , Ածացեալ
և Բարդ :

259. Հ. Ո՞ր բառերը կը կոչուին Ածացեալ :

Պ. Ածացեալ կը կոչուին այն բառերը որ ու-
նին իրենց սկիզբը կամ վերջը գիր կամ մասնիկ
որ անոնց նոր նշանակութիւն կու տայ . ինչպէս
վերը յիշուած ակար և ծովայն բառերը :

260. Հ. Ածանցեալ բառերուն սկզբան կամ վեր-
ջի գիրը կամ մասնիկն ինչ կը կոչուի :

Պ. Ածանցեալ բառերուն սկզբան կոմ վեր-
ջի գիրը կամ մասնիկն կը կոչուի Ածանցական գիր
կոմ մասնիկ . ուստի վերոյիշեալ տկար բառին
սկզբան ո գիրն է ածանցական գիր , և ծովային
բառին վերջը կցուած այն մասնիկն է նոյնպէս ա-
ծանցական մասնիկ :

261. Հ. Ո՞րչափ ածանցական մասնիկ ունի հա-
յերէնը :

Պ. Հայերէնն ունի շատ ածանցական մաս-
նիկներ , սովորականներն են՝ ան , որժ , առ , որ
բառին սկիզբը կցուելով՝ կու տան բառին ձեռա-
կան նշանակութիւն , ինչպէս ակար կը նշանակէ կա-
րողութենէ զուրկ . նոյնպէս անկար , անզօր , անմիտ
կը նշանակեն կարողութենէ , զօրութենէ , մորէ
կամ իմաստութենէ զուրկ : Ժխտական զօրութիւն
ունին նաեւ ոժ կամ ոժ և առ մասնիկներն . ուս-
տի կըսուի , ոժգոյն , ոժկամակ , այսինքն՝ այն որ
գոյն , կամք , չունի . առերախտ , որ երախտիք
չճանչնար ; առահարկ , այն որ հարկէ կամ տուրքէ
աղատ է :

262. Հ. Բառերուն վերջը կցուող սովորական
ածանցական մասնիկներ որո՞նք են :

Պ. Բառերուն վերջը կցուող սովորական ա-
ծանցական մասնիկներն են .

ակն և այն որ կը ցուցնեն բանի մը վերաբերեալ, ինչպէս, մարմնակն, մարմնոյ վերաբերեալ. մարդկայն մարդու վերաբերեալ:

առ, կտրած կամ սպառած կը նշանակէ, ինչպէս, ականջոս, ականջը կտրած. աղգաս, աղգը, ցեղը սպառած.

առեա, որ կը ցուցնէ առատութիւն, ինչպէս, ծաղկաւեա, գինաւեա:

առոր, կը նշանակէ ունեցող կամ կրող, ինչպէս, զօրասոր, ժագասոր:

եայ, ելքն, է, կը ցուցնէ այս ինչ նիւթէ կամ բանէ շինուած, ինչպէս, ծաղկեայ, փշեայ. հողեղն. արծաթէ, պղնձէ:

եւ, որ կը նշանակէ բան մը շատ ունեցող, ինչպէս, հանճարեւ, զօրեւ, մաղեւ:

նի, որ պտուղներու վերջը դրուելով կը նշանակէ այն պտուղներուն ծառը, ինչպէս, խնձորենի, անասնոց անուններուն վերջը կցուելով կը նշանակէ այն անասնոց մորթը կամ միսը, ինչպէս, առիւծնի, առիւծու մորթ. խողնի, խողի միս:

եան, կը նշանակէ այս ինչ՝ ընտանեաց կամ աղանդոյ անդամ. ինչպէս, Մամիկոնեան, եպիկուրեան:

ացէ կամ եցէ, կը ցուցնէ այս ինչ՝ երկրի կամ քաղաքի բնակիչ, ինչպէս, ասիացէ, կորնթացէ:

ին, ան, նուազական մասնիկ են, ինչպէս, հացին, նաւատի:

առ, որ կը նշանակէ վարակեալ, ըմբռնեալ, ինչպէս, նախանձոս, հիւանդաս:

առն, որ ող մասնկան զօրութիւն ունի, ինչպէս, շարժուան խօսուան:

առու, որ կը ցուցնէ առատութիւն, բազմութիւն, ինչպէս, աւազուար, տղմօսար:

աց, անոց, արան, արան, որ կը ցուցնէ տեղ, բանի մը յատուկ տեղ, ինչպէս, դպրոց, գործանոց, գործարան, ծառասովան:

263. Հ. Հայերէն բառերուն մեծ մասն ինչպէս է:

Պ. Հայերէն բառերուն մեծ մասն է ածանցական, այս և ուրիշ շատ մասնիկներէ կազմեալ, ինչպէս, աղտեղի, արժանի, խորին, խոտորնակ, աղդոս, ծերանի, յեղյեղունի, գունապան, փախառաս, և ամէն առան և առենան վերջաւորեալ բառ: Այս մասնիկներուն շատերով կրնանք նոր ածանցեալ բառեր շինել:

264. Հ. Ո՞ր բառերը կը կոչուին Բարդ:

Պ. Բարդ կը կոչուին այն բառերը որ կը կազմուին երկու պարզ բառէ, ինչպէս, զբախւուի, որդեսէր, բառանակուր, ծարպարախոս, երկայնաբառընի, և առաջարկուածնի:


265. Հ. Հայերէն բարդութեան վրայ ինչ կարեւոր գիտելիք կայ:

Պ. Հայերէն բարդ կազմով բառերուն մին է ընդհանրապէս ինդիր միւսին. զոր օրինակ, շրանքւուի բարդին առաջին բառը զբէ՛ է յատկացուցիչ երկրորդին, այսինքն էլեմենտ բառին: Որդեսէր բարդին առաջին բառը որէէ, է սեռի ինդիր երկրորդին, այսինքն սիրեմ բային զօրութիւնն ունեցող ուր բայանուան: Գողանակուր բարդին առաջին բառը էալան, է իրը բացառական բնութեան խընդիր երկրորդին, այսինքն կրաւորական սագէմ բային զօրութիւնն ունեցող հուր բայանուան: Ճար-

բարդին առաջին բառը հարդար , է մսկայ
երկրորդին , այսինքն խօսիմ չեղաք բային զօրու-
թիւնն ունեցող իսու բայանուան : Երկայնաբազուկ բար-
դին առաջին բառը երկայն , է ածական երկրոր-
դին , այսինքն՝ բազուկ անուան , որ է իբր գոր-
ծիական խնդիր երկայն ածականին :

Այսպէս զօրագլուխ է՝ հըստի զըրաց . որդեսէր է՝
որ մէրէ զըրեմ . գազանակուր է՝ կերեւլ է ժաղանաց .
ճարտարախօս է՝ որ իսու հարդար . երկայնաբազուկ
է՝ բաղկառ երկայն :

ՅԱԿԵԼՈՒՄ



Մինչեւ ցարդ խօսեցանք քերականուրեան Առաջին
եւ երկրորդ մասին վրայ , այսինքն ի վերայ ննուրեան
եւ այլ եւ այլ փոփոխմանց Մասանց բանի առանձին
առանձին , եւ ապա Համաձայնուրեան օրինաց վրայ՝
ընդհանրապէս , եւ արդի հայերենի սովորական կարե-
ւորագոյն կանոնաց՝ ի մասնաւորի : Կը մնայ մեզ այժմ
ընելով յաւելուած մը խօսել քերականական կանոնաւոր
եւ զարտուղի կարգին ; կամ , ուրիշ բառերով ըսենք ,
քերականական ձեւերու վրայ , կցելով համառօտ նրա-
նակ մը կրկին , քերականական եւ տրամաբբանական
ուժման վրայ , եւ կարճ տեսուրին մը զկետաղրու-
թենէ . յաւելուած՝ որ ոչինչ ընդհատ կարենոր է քան
բուն քերականուրինն իւր Առաջին եւ երկրորդ մա-
սերով : Այսպէս կը յուսանք քէ տուած լինիմք մեր
արդի լեզուին վրայ ամբողջ գրուրին մը :

Հ Բ · Դ Ա Ս

Յաջորդ նրանանգին մեջ խօսքին կարգը ճշդիւ քերականական է :

64. Հրահանգ

Փոքրիկ թաղն (այս անուն) տեսաւ նոր օրինակ չի-նութեան յանձնին իւր առաքինի աւագերիցուն, որ չհամարելով բաւական մատակարարել նիւթական հացն աղքատաց, բացած էր ձրի դպրոց ուր կը թափէր կը թութեան գանձն ի հոգիս իւր մանուկ թեմականաց: Յարդարիչ ոմն ուղեաց (ուզի, ճաճբայ), աղքատ և մի միայն յոյս իւր բաւական մեծ գերգաստանին, հիւանդացաւ թանձիւ որ կը սպառնար տեւել երկար, և թողուլ նօթի կինը և երեք մանուկներն: Թաղին աւագերէցը տեսնելով մարդն յուսահատեալ, դրաւ ի մտի անձամբ կատարել հիւանդին գործը, որպէս զի անոր թոշակը չզեղչուէր ամսագլխուն: Բայց սէրն է հազորդական: Աշակերտք աւագերիցուն ուղեցին նմանել իրենց վարդապետին: Վարդապետն և աշակերտք աշխատեցան անխոնջ երկու օր խտաշունչ օդով. երիցադոյն աշակերտք կը քէչին սայլակը որով սովորութիւն է կրել հող և քար. իսկ կրտսերազ ոյնք կը տարածէին քարերն ուղեցն վրայ, և կը վերցունէին աւելորդը: Անցորդք որ կը կենային դիտել այս նորաձեւ գործաւորներն, իմանալով գործին նպատակը՝ կը մեկնէին խանդաղատեալ: Երբ գործը կը դադարէր երեկոյին, աւագերէցը կը կոչէր մանուկ գործաւորներն ի սեղան: Քազը ուրախութիւնը որ կ'երթայ միշտ զհետ բարեգործութեան կը տիրեր բոլոր այն մանուկ սիրտերուն մէջ, և ի վախճանի վերջին ընթրեաց, որոշուեցաւ միւսանդամ

Ա.

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

Հ Ա Ս

266. Հ. Ի՞նչ է Քերականական կարգ:

Պ. Քերականական կ'ըսուի խօսքին կարգը, երբ խօսքին մասերը գրուած են այն կարգաւ զոր կը պահանջէ քերականութիւնը:

267. Հ. Ի՞նչ է խօսքին կարգը զոր կը պահանջէ քերականութիւնը:

Պ. Քերականութիւնը կը պահանջէ որ խօսքին մասերը գրուին խորհելով բնական կարգաւ, այսինքն՝ գրուի նախ գործողը, այն է աէր բային իւր մասերով, և ապա բայը նոյնպէս իւր մասերով, միշտ գլխաւոր բառը երկրորդականէն, զոր օրինակ, գոյականն՝ ածականէն, իննդրառուն ինդրէն առաջ, Զոր օրինակ. Դիմուն մէծ, հարաւայ, եկաւ յերտառողէ ուժանել զՄողմնն: Այս օրինակին մէջ խօսքին կարգը քերականական է, վասն զի խօսքին մասերը գրուած են իրենց բնական կարգաւ. նախ գրուած է Տէր բային, « Դիմուն, » իւր մասերով, « մէծ, հարաւայ. » յետոյ բայը, « եկաւ, » նոյնպէս իւր մասերով, « յերտառողէ, ուժանել զՄողմնն: »

մկնել՝ գործը, եթէ մարդը չգտնէր կատարեալ առողջութիւն յաջորդ ամսուն(*):

268. Հ. Միշտ այս կարգաւ կը դրուին խօսքին մասերը :

Պ. Խօսքին մասերը կրնան դրուիլ նաեւ տարբեր կարգաւ, և կամ, կրնայ խօսքին այս ինչ կամ այն ինչ մասը պակաս կամ աւելի ըլլալ, և անստեն խօսքը կ'ըլլայ յեւսուր և ոչ քերականական (**):

269. Հ. Քանի՞ կերպով խօսքին կարգը կ'ըլլայ ձեւաւոր :

Պ. Խօսքին կարգը կ'ըլլայ ձեւաւոր երեք կերպով, արտոնդութեամբ, զեղմամբ, եւ առնադրութեամբ, և ասոնք կը կոչուին քերականական ձեւեր :

(*) Եւրոպայի քաղաքներէն եւ գիւղերէն շատերուն մէջ կան մասնաւոր քարծուրներ որոց գործն է յարնարել (շտկել) փողոցներն ի դիրութիւն կառաց եւ անցորդաց :

(**) Արդի հայերէնը սովորութեամբ առած է Թուրքերնի կարգը որ քերականական կարգին հակառակն է. բայց յորմէ հետէ սկսաւ գրուիլ արդի հայերէն, հին հայերէնին եւ եւրոպական լիզուներու ազդեցութեամբ արդէն բաւական փոխուած է Թուրքերնի կարգը, եւ հետզհետէ կ'առնու լիզուն քերականական կարգ որ բնական կարգն է հայ լիզուին, ինչպէս նաեւ յունարէնին, լատիներէնին եւ արդի եւրոպական լիզուաց :

Հ Գ. Դ. Ա. Ս

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Յ Կ Ա Ն Զ Ե Կ Ք

Ա Ր Տ Ո Ւ Ղ Ո Ւ Թ Ի Ւ Ն

270. Հ. Ի՞նչ է Արտոնդութիւն :

Պ. Արտոնդութիւնն է խօսքին մասերուն շեղումն իրենց բնական կարգէն, զոր օրինակ, երբ բայց դրուած է տէր բայցիէն, կամ իննդիր մը իւր խնդրառուէն առաջ: Զոր օրինակ, Քան զի՞ յառաջադրուն է ուրեւ ճը. Մեր հանողազրութ հացը ուրեւ Ձ՞ւ: Այս օրինակներուն մէջ արտուղութիւն կայ. Ըստ քերականական կարգի կ'ըսուի. Ա-րէւ ճ է ի՛ջնէ յառաջ ուն զի՞: Ճուր Ձ՞ւ հանողազրութ հացը:

271. Հ. Հմարկ է քերականական կարգը պահել միշտ, թէ ներելի է զարտուղել:

Պ. Արտուղութիւնը, ինչպէս նաեւ միւս ձեւերն, զեղումն է աւելացդրութիւն, են ոչ միայն ներելի, ոյլ և շատ անդամ հարկաւոր, թէ իմաստին պատշաճութեան և թէ վայելչութեան համար: Բայց միշտ պարտ է ջանալ որ շարադրութեան կարգն ըլլայ որչափ հնար է քերականական :

272. Հ. Ի՞նչ է Զեղում:

Պ. Խօսքի մը առաջին մասին մէջ յիշուած մի կամ աւելի բառեր զանց կ'առնուին խօսքին յաջորդ մասին մէջ, և այս է Զեղում. զոր օրինակ, իրաւախոհ եղիր ոսոխիդ հետ մինչդեռ ի ճանապարհի ես անոր հետ. գուցէ մատնէ զքեղ ոսոխն

դատաւորի , և բարեկանութեան բահճի : Այս օրինակին վերջին մասը , և բարեկանութեան գեղշեալ է . ամերողը պիտի ըլլար , և դատաւորը նաև չեւ դահճի : Զաքէս կուզեր տեսնել զթիսուս , բայց չեւ կարող տեսնել վա բազմութենէն :

273. Հ. ի՞նչ է Առելադրութիւն :

Պ. Առելադրութիւն կը կոչուի , երբ խօսքին մասերէն մին , ինչպէս , տէր բայի կամ ինդիր , կրկնուած է . զոր օրինակ , կինը զոր տուիր ինձ՝ առ տուաւ ինձ պաղէն և կերայ : Այս օրինակին մէջ առ գերանունն , իբր տէր բայի , աւելորդ է : Աւելադրութիւնն ընդհանրապէս պարսաւելի է , բայց երբեմն ազդուութիւն կու տայ խօսքին , ինչպէս այս օրինակին մէջ :

274. Հ. Ուրիշ ի՞նչ քերականական ձեւ կայ :

Պ. Կայ ուրիշ ձեւ մը որ կը կոչուի բակառութիւն , երբ երկու բառ կը համաձայնին իրարու հետ ըստ հնասովն միայն , և ոչ ըստ ձեւոյն . զոր օրինակ , երբ եղանակի հաւաքական անուան մը բայը կը դրուի յոքնակի . ինչպէս , Բոլոր իսրայէլ հեթոյնն անոր ետեւէն . Հնաղանդեցուցին զբանան , բայց չկորուսին վասար իսպառ . Տասը հարդ բորոտ կը ինայն հեռուն :

275. Հ. Այս չորս ձեւերէն ո՞ն է աւելի սովորական :

Պ. Աւելի սովորականներն են արտօւղութիւն և զեղչումն :

Հ. Դ. Պ. Ա

Յաջորդ հրահանգներուն մեջ աշակերտք միտ դնեն այս ձեւերուն :

65. Հրահանգ

Փոքրիկ առուն կոռոգէ ծաղկաւէտ դաշտ մի : Կը խաղայ յառաջ կոյս երփին երփին մարդագետիններու մէջ մանուածապատ ըրջանօք , սողոսկելով մեղմով ծաղկանց միջոցներէն և հազիւ հեռանալով այն հեշտակի տեղերէն : Այն ինչ կը թողու նա դաշտը , կը թափէ իւր ջուրերն ահագին ապառաժներէ վար : Փոխանակ քաղցր զեփիւսին որ կը խաղայ երբեմն անոր խաղաղ ալեաց վրայ , խստաշունչն հիւսիսի , միախուցեալ իւր խոր անձաւններէն , կը խոռովից վէտ վէտ անոր բիւրեղեայ երեսը : Յառաջ տանելով առուն իւր գնայն արտգութեամբ՝ կը հասնի մեծ քաղաքի մը դուռը , կը հոսէ անոր հոյակասպ շինուածներուն առջեւ , յետոյ կ'ելլէ դուրս , և կը կորուսի գարձեալ ծաղկաւէտ արօտներու մէջ : Ի ճանապարհին կը հանդիսի խաղաղ գիւղերու , և կոռոգէ հարուստ այգիններ : Յետ սակաւու կը գտնէ զինքն լքեալ ահեղ ամայութեան մէջ կանաչուգեղ պուրակ մը կ'ելլէ անոր առջեւ , առուն կը մտնէ անոր հիւսիսակի հովանուոյն տակ , բայց կը թողու և զայն վաղվաղակի՝ երթալ ոռոգել աւագուտ դաշտ մի , մինչեւ կը կլանէ զնա ովկիսանուն , և կու տայ վախճան անոր անհարթ ընթացից : Այս է պատկերն որով իմաստուն մը կ'ընծայեցունէ մեզ կենաց ընթացքը զոր կը կատարէ մարդ աշխարհի վրայ , երթալով մերթ զուարձալի և ծաղկազարդ շաւիններով , և մերթ դժուարին և գրեթէ անկոս ճանապարհօք , մինչեւ կը հասնի ի դրունս յաւիտենականութեան ուր կը գտնէ հուսկ ուրեմն հանդիսաւ :

66. Հրահանգ

Դիոն, Սիրակուսայի իշխանը, աքսորուելով ապերախտ ժողովրդենէն, ապաւինեցաւ Մեդարա քաղաքը, ուր կ'իշխէր Պրէոդոս : Օր մը Դիոն ստիալուելով երթալ գանգատել իշխանին անիրաւութեան մը համար, գնաց պալատը, և խալբեց խօսել իշխանին հետ : Բայց ազնուական աքսորեալն չգտաւ ընդունելութիւն ըստ արժանի իւր պատույն : Երկար սպասել տալէ ետքը, ըսել տուաւ նմա իշխանը թէ չէր կրնար ընդունել զնա այն օր, քանզի շատ զբաղեալ էր : Բարեկամք Դիոնի որ անոր հետ էին՝ զայրացան որ այնպէս վարուեցաւ Պրէոդոս այն նշանաւոր մարդուն հետ, որ իւր իշխանութեան ժամանակ սովոր էր ցուցնել մարդասիրութիւն անոնց որ կը դիմէին առ նա : Բայց Դիոն, առանց բնաւ գանգատելու, ըստ հանդարտութեամբ : « Բարեկամք, թերեւու կ'ընէի և ես նոյն բանը, մինչ էի միահեծան ի Սիրակուսա : » Այս նշանաւոր մարդն յաջողեցաւ յետոյ ազատել զիւր հայրենիս Դիոնեսիսու բռնաւորէն որ կը հարստահարէր չարաչար զՍիրակուսայիս, և հաստատել միւսանգամ անդորրութիւնը և հանդարտութիւնը, բայց սպասնուեցաւ դառվ կալիպազս անոն Աթենացիէն որ Դիոնի հիւրը և բարեկամն էր : Իսկ Դիոնեսիս բռնաւոր արտաքսուելով Սիրակուսայէ, առանձնացաւ ի Կորնթոս, ուր եղաւ մանկավարժ և մեռաւ յաղքատութեան :

67. Հրահանգ

Մրտենին տեսնելով որ քան զնա նախամեծար կը համարուէր վարդն, նախանձեցաւ : Յայտնելու համար իւր ցասումը, սպասեց մինչեւ մեկնեցան իւր սոսիմին վրայ զարմացողք : Յայնժամ մօտենալով վարդին՝ ըստաւ .

« Դու կը գովուիս, ով վարդ, իրրեւ թագուհի ծաղկանց, բայց այս պատիւը կը վայելէ մանաւանդ ինձ : թող անուշահոտութիւնը որ կը բուրէ ծաղիկներէս, չես գիտեր որ սպիտակ են ծաղիկներս, և տերեւներս՝ միտ կանաչ : Արդ, աշխարհ ամենայն կը վկայէ թէ սպիտակն և կանաչ են գոյներուն գեղեցիկը և պատուականը : » « Քու առաւելութիւններդ չեմ ուրանար, » ըստ վարդը մրտենւոյն, « Բայց իմ գոյնս կը հիացունէ ամեն սչք, և իմ հոտո հաճոյագոյն է քան գոյոյդ : » « Այս, կ'ընդունիմ, » կրկնեց մրտենին, « Բայց դու փուշեր ունիս, և այն անմիտք որ քան զիս աւելի կը մեծարել զերել՝ շատ անգամ կը զգլան, որս ըլլալով քու խալերայ խայծիդ : » « Փուշերս, » պատասխանեց վարդը, « կ'արգելուն ըիրտ ձեռուըներ որ թերեւս կը նսեմացունէին պայծառութիւնս . և եթէ բաժնելու համար զիս բունչս հարկաւոր է զգուշութիւն, այս հարկը երկարատիկ կ'ընէ իմ յարգս : » « Ես, » ըստ մրտենին « առանց ընդդիմութեան կը թողում որ շօշափեն զիս մարդիկ : » « Ահա, » ըստ վարդն, « այս է որ կը նուսղեցունէ քու յարդդ . աշխատութիւնն է որ հեշտական կ'ընէ հանգիստը : » Ինչպէս վարդ, նոյնակէս ուսումն և կրթութիւն ունին իրենց փուշը . սորվէ քաղել զնոսա, եթէ կամիս ճաշակել նոյցա հոտը :

68. Հրահանգ

Անգվիսի բժիշկ մը, տժդոհ Լոնտոնի արքունի բժշկական նեմարանէն որ մերժած էր ընդունել զնա անդամ, հարեցաւ խնդրել վրէժ ձեմարանէն հանճարեղ կատավլ մը : Ձեմարանին քարտուղարին գրեց նամակ յառան գաւառացի բժշկի մը, որպէս թէ բժիշկն հիանդ մը դարմանած էր անլուր իմն եղանակաւ : « Նամատի մը, » կ'ըսէր նամակը, « իյնալով կոտ-

բեց զմին ի սրունից : Գտնուելով ըստ գիտաց այս արկածին տեղը , միացուցի բեկեալ անդամին երկու մասերը , և պնդով պատելէ ետքը՝ կապեցի առասանով , և կապանքը թրջեցի կալրոյ ջրով : » «Նաւաստին , » կ'ըսէր խորամանկ բժիշկը , «արագ արագ զգաց գեղին զօրութիւնը , և յետ սակաւ միոյ սկսաւ վարել սրւնն ինչպէս յառաջ : » Բժշկին այս պատմութիւնը դիպեցաւ այնպիսի ժամանակ , որ Պարքէյ հրատարակուծ էր գիրք մը կալրոյ ջրոյն հրաշալի զօրութեան վրայ , գիրք մը որ մեծ համբաւ հանեց և բժիշկներն երկպատակեց իրարմէ : Նամակին լուրը շարժեց ճեմարանին անդամներուն ուշադրութիւնը . հաւատ ընծայուեցաւ նամակին պատմութեան , և ծանր վճճեր եղան նաւաստուցն ապաքինութեան վրայ : Պիտի հրատարակուէր անդամ վիճարանութիւնն այն կարծեցեալ բժշկութեամ վրայ , մինչ երկրորդ նամակ մը եկաւ գարձեալ յանոն գաւառացի բժշկին , որ կ'ըսէր քարտուղարին . Առաջին նամակին մէջ մոռացայ յիշել թէ նաւաստուցն բեկեալ ոտն էր փայտէ : » Խորհրդաւոր նամակին խոլը շուտ եկաւ յայտ , և ոչ սակաւ զուարձացուց լունոնի գաւառկապորտներն ի հենգն բազմահմուտ ճեմանին :

69. Հրահանգ

Տունկերուն ոստերը և տերեւները կ'առուն գիշերը նոր կերպարան , այլ ազգ երեւոյթ քան զոր ունին ցերեկ , և թէպէտ այս չէ միեւնոյն մէն տնկոյ վրայ , հասարակ է սակայն ամենուն : Այս խոփոխութիւնը որ կրնայ կոչուիլ « Քուն անկոց , » կ սկսի ընդ երեկս , և կը դադարի այգուն երբ կը ծագէսրեգակը : Անուանի բուսաբանն Ախննէ եղաւ առաջինոր գտաւ տնկոց քունը : Ախննէ օտար բուսաբանէ մընդունած էր սերմեր ծառէ մը որ կը կոչուի ներքինն և որ էր

դժուարագիւտ այն ժամանակ : Այս սերմանք զորս ցանեց Ախննէ՝ բուսան և աճեցան և տուին ծալիկ : Իրիկուն մը մինչ լապտեր ի ճեռին դնաց Ախննէ այց առնել իւր պարտիզին օտար բցսերուն , գնաց նաեւ յիշեալ ծաղիկներուն . տեսնելով սակայն թէ այն ծաղկունք , որ առաւոտուն այնպէս զուարձացուցած էին զնա մինչեւ մոռցունել նմա աշխատութիւնը զոր կրած էր ի դարմանել զնոսա , չկային ի միջի . զարմացաւ Ախննէ և տիրեցաւ : Կոչեց պարտիզպանը , և յանդիմանեց զնա իրեւ անհոգ և անհաւատարիմ , քանզի գողցուած համարեցաւ տունկերը : Ախննէ մեկնեցաւ լի թափծութեամբ , և ի վազիւն կը դանդաղէր երթալ ածուն , չնորոգելու համար երեկոյեան կոկիծը . ստիպուեցաւ սակայն երթալ : Ի՞նչ եղաւ զարմանքը , երբ տեսաւ տունկերն հոն . թուեց և գտաւ զնոսա ամրող : Դրաւ ի մոի երեկոյին դարձեալ ելլել յայցելութիւն՝ իմանալու համար երեկի աւուր գաղտնիքը : Կու գայ արդարեւ Ախննէ , և կը դանէ տունկերն հոն , բայց ընկողմանած և ծածկուած իրենց տերեւներովն այնպէս՝ որ կը թուէր թէ չկային : « Ներքիւններս կը ննջե՞ն , » գոչեց Ախննէ , և որովհետեւ մեծ մարդոց խօսքը չկորսուիր , այս զարմանալի երեւոյթը կոչուեցաւ « Քուն տնկոց :

70. Հրահանգ


Թուչնարանի մը մէջ ուր կային ազգի ազգի թըռչունք՝ գրուեցաւ սոխակի բոյն մը , և թուչնարանին տէրը չէր մոռնար ամէն օր շինել ճանճերէ և որդերէ խիւս , որ սիրելի կերպակուրն է սոխակներուն : Սոխակը չկրնար հանդուրժել արգելուած մնալ վանդակի մէջ . ուստի մեռաւ նախ վարուժանը (արուն) , յետ նորա և մարին (էքը) . Ֆնաց միայն ծագ մի որ աղաղակաւ կը մուրար կեր : Կերն էր յիշեալ խիւսը որ կը կենար հոն

ամանով պատրաստ : Դեղձանիկ մը նոյն թռչնարանին մէջ լսելով որք սոխակին աղաղակը , և որ զարմանալին է , հասկնալով թէ անոր կերակուրը բոլորովին տարրեր էր իւր կերակրէն , ի գթոյ առ որք թռչնիկն՝ որոշեց տալ նմա իւր կերը : Բայց դեղձանիկը կը գարչի որդերէ , ուստի ստէպ ստէպ մօտենալով ամանին ուր էր ճանձի և որդան խիւսը՝ նողկալով կը դառնար ետ : Այսպէս շատ անդամ ամանէն առ ճագն , և ճագէն յամանն երթալէ և գալէ ետքը , գութն յաղթեց զզուանաց . առաւ կտցով մաս մը խիւսէն և տարաւ ստիպաւ առ թռչնակն , յետոյ գնաց լուալ կտուցը : Ամէն անդամ կու տար երեք կտուց կեր՝ իւրաքանչիւր անդամ տալով միջոց , և միջու լուալով կտուցը : Բաւական ժամանակ ետքը կու տար գարճեալ երեք կտուց կեր , յայտնի ընելով թէ բուռն առնելով անձին կընէր զայս զզուանաց համար զոր կը զգար այն նողկալի կերակրէն , և չմոռնալով երբէք լուացումը : Փոքրիկ սոխակը սնաւ այսպէս , հասաւ ի չափ , և կը սիրէր իւր դայէկիկը . բայց երբ մեծցաւ , նաեւ կը թռթուէր : Դեղձանիկը որ այնպէս խնամ տարած էր նմա ցորչափ էր սոխակը բուռնին մէջ , այսուհետեւ սկսաւ ծեծել զնա և փետել , մինչեւ հարկ եղաւ հանել սոխակը թռչնարանէն՝ պահելու համար անոր կետնքը :

71. Հրահանգ

Հատերուն ծանօթ է կարապ , մաշկոտն հաւուց մեծ խմբին թագաւորը : Այս թռչնոյն սովորական տարրը ջուրն է . ուստի կարապը կ'ապրի գետերու , ծովակներու , լիճերու և մեծամեծ աւազաններու վրայ , պարտէղներու մէջ , բայց իւր բոյնը կը դնէ ի ցամաքի : Մինչ մարին կը թխսէ ծուերը , մատգիր է իւր մայրական պարտուց այնպէս՝ որ կը մոռնայ իւր ցեղին հա-

մար կարեւորագոյն գործը , որ է օծանել վետուրները ճարպով մարմնոյն , որպէս զի ջուրը չանցնի մարմնոյն : Սակայն չվրիպիր անոր հսկողութենէն ինչ որ կրնայ վնասել ձուերուն , և եթէ կը տեսնէ թշնամի , կը յարձակի անոր վրայ սաստկութեամբ : Ճանապարհորդ մը գանուելով Քամչադքա փոքր գետոյ մը անմարդի ափանց վրայ , տեսաւ կարապի բոյն մը : Մարին նստած էր հանդարտութեամբ ի թուիս : Յանկարծ վերցուց նա գլուխը , և ուղղեց հայեցուածը դէպ ի գետեզը : Մարդն եւս նայելով այն կողմը տեսաւ աղուէս մը որ լողալով կու գար դէպ ի բոյնը : Բնական իմն աղդմամբ որ չէր ընդհատ մարդու հանճարէ՝ կարապը խորհեցաւ թէ աւելի ասահով պիտի ըլլար յաղթութիւնը , եթէ իւր սովորական տարեր վրայ կուուէր թշնամոյն հետ : Ուստի աճապարեց ծածկել ձուերը խոտերով և խոխրենով , թողուց բոյնը , և բուռն զօրութեամբ ընկղմելով գետոյն մէջ , ելաւ դուրս աղուիսուն մօտ : Խսկոյն սկսաւ կոխւը . բայց կարապն այնպէս ճարտար վարուեցաւ իւր թեւերով , որ աղուէսը չկրնալով զդէմ ունել՝ ընկղմեցաւ ուժաթափի : Յայնժամ քաջասիրտ հաւը ճեղքելով ջուրը զարմանալի արագութեամբ եկաւ բոյնը , և նստաւ ասահով և աներկիւդ իւր ձուերուն վրայ :



Պ. կրնանք գիտնալ Դիմանոր բայերէն : Խօսքի կամ պարբերութեան մը մէջ այնչափ նախադասութիւն կայ , որչափ գիմաւոր բայ կայ : Զոր օրինակ . 71 հրահանգին առաջին պարբերութեան մէջ չըս նախադասութիւն կայ , վասն զի չըս դիմաւոր բայ կայ :

Շատերուն ծանօթ է կարապ , մաշկոտն հաւուց մեծ խմբին թագաւորը . | այս թռչնոյն սովորական տարրն է ջուրը . | ուստի կարապը Կառլէ գետերու , ծովակներու , լիճերու և մեծամեծ աւազաններու մէջ , | բայց իւր բոյնը կը դնէ ի ցամաքի :

281. Հ. Նախադասութիւն մը քերականօրէն լուծելու համար ի՞նչ ընել պէտք է :

Պ. Նախադասութիւն մը քերականօրէն լուծելու համար պէտք է ցուցնել .

4. Իւրաքանչիւր բառի բնորդինը , այսինքն ըսելթէ բառն ինչ մասն բանի է , անուն թէ դերանուն , բայ թէ մակրայ , եւ .

Պէտք է ցուցնել .

2. Փոփոխութիւնները զոր կրած է բառը . այսինքն , ըսելթէ ինչ հոլով և թիւ է բառը , ուղղակա՞ն թէ սեռական կամ բացառական , եւ . եղակին թէ յուրնակի . եթէ բառը դերանուն է , ինչ դէմք , առաջին թէ երկրորդ կամ թէ երրորդ . եթէ բայ է , ըսելթէ ինչ տեսակ բայ է , ներդորձակա՞ն թէ չէզոր , եւ . նաեւ ինչ եղանակ , ժամանակ , թիւ և դէմք :

Պէտք է ցուցնել .

3. Բառին պաշտօնը , զոր օրինակ՝ թէ բառը

Բ.

ԼՈՒԾՈՒՄՆ



ՀԵՅ. Դ. Ա. Ա

276. Հ. Ի՞նչ է լուծում :

Պ. Լուծում է խօսքը իւր մասերուն բաժնեւլով ցուցնել անոնց բնութիւնը և յարաբերութիւնը կամ կազն իրարու հետ :

277. Հ. Քանի՞ տեսակ է լուծումը :

Պ. Լուծումը երկու տեսակ է , 1. Քերականական և 2. Տրանսպանական :

Ա. ԼՈՒԾՈՒՄՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

278. Հ. Ի՞նչ է քերականական լուծում :

Պ. Քերականական լուծումն է նախադասութեան մը բաժանումն իւր մասերուն :

279. Հ. Ի՞նչ է նախադասութիւն :

Պ. Նախադասութիւնն էլուսուի խօսք մը որ գիմաւոր բայ մը ունի յայտնի կամ լուելեայն . զոր օրինակ , դու հարուստ ես , ես՝ (եմ) աղքատ : Այս խօսքին մէջ երկու նախադասութիւն կայ , քանզի երկու դիմաւոր բայ կայ , (դու) ես՝ յայտնի . (ես) ես՝ լուելեայն :

280. Հ. Ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ խօսքի կամ պարբերութեան մը մէջ քանի՞ նախադասութիւն կայ :

տէր բայի է թէ խնդիր, ստորոգելի թէ բացա-
յայտիչ :

4. Եթէ նախադասութիւնը զեղչեալ է, պէտք
է զեղչեալ մասն ամբողջացունել, և ապա լուծել:

Հ Զ · Դ Ա Ս

ՕՐԻՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

Շաբարուան ծանօթն է կարառ, մաշնուն հասուաց մշտ իւժին նո-
ժառարը :

Կարառ . Գոյ. եղ. ուղղ. տէր բայի է բային .
Ծանօթն . Ած. եղ. ստորոգելի կարառին .

Շաբարուան . Ած. գոյականարար առնուած, յոք.
տրական շար բառին . խնդիր ծանօթն ածականին .

Ե . Եակ. բայ, սահմ ներկ. եղ. Գ. դէմք է բային .

Թափառութ . Գոյ. եղ. ուղղ. բացայայտիչ կարառ
բառին .

Խճին . Գոյ. եղ. սեռ. իսուհի բառին, յատկա-
ցուցիչ նախառ բառին .

Մէժ. Ած. իսուհի բառին յատկութիւնը կը ցու-
ցընէ .

Հասուաց . Գոյ. յոք. սեռ. հաս բառին . յատկա-
ցուցիչ իսուհի բառին .

Մաշնուն . Ած. եղ. կը ցուցնէ կարապ թունոյն
տեսակին մասնաւոր յատկութիւնը .

Այս նունան սովորական բարբն է ջուրը :

Տուր . Գոյ. եղ. տէր բայի է բային .

Առաջական . Ած. բարբ բառին .

Թունան . Գոյ. եղ. սեռ. նունան բառին . յատ-
կացուցիչ բառին .

Այս . Ցուցական ած. թունոյն .

Ե . Եակ. բայ, սահմ ներկ. եղ. Գ. դէմք է բային .

Ջուր . Գոյ. եղ. ուղղ. ստորոգելի թուր բառին :

Ուսուր կարառը կ'ապրէ ջերերու, ձավակներու, լիճերու և
մշտառն առաջաներու վրայ պարտեզներու մեջ :

Ուսուր . Շաղկապ .

Կարառը . Գոյ. եղ. ուղղ. տէր բայի կ'ապրէ բային .

Կ'ապրէ . բայ չէզոք, Բ. լծորդ . ապրէմքն, սահմ
ներկ. եղ. Գ. դէմք .

Վրայ . Նախադրութիւն .

Գերերու, ձավակներու, լիճերու, առաջաներու . Ամէն-
քը գոյ. յոք. սեռ. էեր, ձավակ, լիճ, առաջան բառե-
րուն, և խնդիր վրայ նախադրութեան, և անով
մէկտեղ բնութեան խնդիր կ'ապրէ բային :

Մշտառն . Ած. առաջան բառին .

Պարտեզներու . Գոյ. յոք. սեռ. պարտեզ բառին,
խնդիր մշտառ նախադրութեան, և անոր հետ մէկտեղ
բնութեան խնդիր կ'ապրէ բային :

Բայս է-ը բայնը կը դնէ նա և յամագէ :

Նո . Եակ. դեր. Գ. դէմք, եղ. ուղղ. լուելեայն
կ'իմացուի փոխանակ կարառ ին, տէր բայի կը դնէ
բային .

Աը թնէ . բայ ներգ . Ա . լծոր . զարտ . թնէ բայէն ,
սահմ . ներկ . եղ . Գ . դէմք .

Բայն . Գոյ . եղ . հայց . սեռի խնդ . և թնէ բային .

Ի շամանէ (հին հայերէն ձեւ , կը նշանակէ ցա-
մաքի վրայ) , է՝ նախդիր . շաման , գոյ . եղ . տրակ . :
Ի շամանէ (ցամաքի վրայ) , բնութեան խնդիր և թնէ
բային :

ՀԵ · ՊԱՌ

Զ. ԿՈՒԾՈՒՄՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ

282. Հ. Ի՞նչ է Տրամաբանական լուծում :

Պ. Տրամաբանական լուծումն է բաժնել երկայն
խօսք մը կամ պարբերութիւն մը իւր նախադա-
սութիւններուն , և ցուցնել անոնց բնութիւնը և
յարաբերութիւնը , այսինքն՝ ըսել թէ իւրաքան-
չիւր նախադասութիւն ի՞նչ տեսակ է , և ի՞նչ կա-
պակցութիւն ունի միւսներուն հետ :

283. Հ. Քանի՞ տեսակ նախադասութիւն կայ :

Պ. Երկու տեսակ նախադասութիւն կայ , Գլո-
խառոր և Միջանիեալ :

284. Հ. Ի՞նչ է Գլխառոր և Միջանիեալ նախադա-
սութիւն :

Պ. Գլխառոր կը կոչուի այն նախադասութիւ-
նը որ կախում չունի ուրիշ նախադասութենէ .
Միջանիեալ կը կոչուի այն նախադասութիւնը որ կա-
խում ունի գլխառոր նախադասութենէ մը : Զոր
օրինակ , յաջորդ պարբերութեան մէջ որ չորս նա-
խադասութենէ կը բաղկանայ՝ երկու նախադա-
սութիւնը Գլխառոր են , և երկուք՝ Միջանիեալ :

Գիտեմ—թէ առաքինութիւնն ինքնին նախամեծար
է քան զհարստութիւն . | այն որ կը խոտորի առաքի-
նութենէ՝ | կը վրիպեցունէ զանձն երանութենէ :

Առաջին գլխառոր նախադասութիւնն է , ֆէտէ,
որմէ կախում ունի առաջին միջանկեալ նախա-
դասութիւնը , առաջինունիւն նախամէծար է + ան զհարս-
տութենէ :

Երկուրդ գլխառոր նախադասութիւնն է , այն
և երեստցունե զայն երանութենէ , որմէ կախում ունի
Երկուրդ միջանկեալը , որ կը խոտորի առաջինունիւնն է :

285. Հ. Միջանկեալ նախադասութեան պաշտօնն
ի՞նչ է :

Պ. Միջանկեալ նախադասութեան պաշտօնն
է ամրողացունել գլխառոր նախադասութեան բա-
ռերէն միայն իմաստը . զոր օրինակ , վերի օրինա-
կին մէջ , թէ առաջինունիւնն ինչնին նախամէծար է + ան զհա-
րստութեն , որ միջանկեալ նախադասութիւնն է ,
կամբողջացունէ ֆէտէին (կամ , մանաւանդ էակտն
բային հետ միայետև ֆէտոցը ստորագելոյն) իմաս-
տը . որ կը խոտորի առաջինունիւնն է , որ նպանողէս միջան-
կեալ նախադասութիւնն է , կամբողջացունէ այն
տէր բայիին իմաստը :

286. Հ. Ի՞նչ է միջանկեալ նախադասութիւնը
գլխառորին հետ կապողը :

Պ. Միջանկեալ նախադասութիւնը գլխառո-
րին հետ կապողն է գրեթէ միշտ շողկապ մը կամ
յարաբերական գերանունն : Վերի օրինակին մէջ
առաջին միջանկեալ նախադասութիւնը կը կապուի
գլխառորին հետ թէ շաղկապով . երկուրդ միջանկ-
եալը կը կապուի որ յարաբերականով :

287. Հ. Գլխաւոր նախադասութիւնը քանի տեսակ է :

Պ. Երբ խօսքին մէջ երկու կամ աւելի գլխաւոր նախադասութիւն կայ , առաջինը կը կոչուի թայարձակ զիշառո՞ . միւսներն՝ Յարաքերական զիշառո՞ : Այսպէս վերի օրինակին մէջ առաջին գլխաւոր նախադասութիւնը , հետեւ , է բացարձու գլխաւոր . երկրորդը , այն կը գլխաւոր է զանյ երանութենէ , է յարբերակն գլխաւոր (*) :

288. Հ. Միջանկեալ նախադասութիւնը քանի տեսակ է :

Պ. Միջանկեալ նախադասութիւնը եւս երկու տեսակ է . Որոշին միջանկեալ , և Մեկնին միջանկեալ :

289. Հ. Ի՞նչ է Որոշին միջանկեալ նախադասութիւն :

Պ. Որոշին միջանկեալ նախադասութիւն այն է որ էապէս հարկաւոր է խօսքին , այնպէս որ , եթէ այն նախադասութիւնը վերնայ , խօսքին իմաստը կը վնասուի . այսպիսի են վերի օրինակին չնունի նախանդար է +ուն հնարապանիւն , և , որ և եռորդի առաջինութենէ . եթէ ասոնք վերնան , խօսքը չտար իմաստ :

290. Հ. Ի՞նչ է Մեկնին միջանկեալ նախադասութիւն :

Պ. Մեկնին կը կոչուի այն միջանկեալ նախադասութիւնը որ լոկ իբր մեկնութիւն է , և եթէ

վերնայ , խօսքին իմաստը չայլայիիր , զոր օրինակ . Առաքինութիւնք , որ զբան և հոգուայ , կը գեղեցկացունեն և կ'ազնուացունեն մարդուն սիրաց : Այս օրինակին մէջ , միջանկեալ նախադասութիւնը , որ պար և հոգուայ , Մեկնին է . ուստի եթէ թողուի , խօսքին իմաստը չեղծանիր կամ փոխուիր :

291. Հ. Նախադասութիւն մը քանի ձեւ կրնայ ըլլաւ :

Պ. Թի՛ գլխաւոր և թի՛ միջանկեալ նախադասութիւնը կրնայ լինել , Լի , Զերշեալ և Ծածկեալ :

292. Հ. Ի՞նչ է լի նախադասութիւն :

Պ. Լի կը կոչուի նախադասութիւնը , երբ անոր էական մասերն , այսինքն՝ տէր բային և ստորոգելին յայտնի են . զոր օրինակ , Ես էմ հարդ մահականուա . այս նախադասութիւնը է կամ աբբան է , քանզի տէր բային , և , և ստորոգելին , աբբան , յայտնի են :

293. Հ. Ի՞նչ է Զերշեալ նախադասութիւն :

Պ. Զերշեալ կ'ըսուի նախադասութիւն մը տրամաբանօրէն , երբ անոր էական մասերէն մին , այսինքն՝ տէր բային կամ ստորոգելին , նաեւ բայլը լուելեայն կ'իմացուին . զոր օրինակ , Ես հարդ մահականուա : Ես նու երեսուն դարուան : Այսանացեալ ես . — Զեմ : Ես երեսմ այսօք : Հաղու՝ դու : Այս նախադասութիւնները զեղչեալ են . առաջնոյն մէջ պակաս է տէր բային . երկրորդին մէջ ստորոգելին . երրորդին մէջ տէր բային և ստորոգելին միանդամայն . չորրորդին մէջ բայը : Այս նախադասութիւնները կը լրանան այսպէս . Ես եմ մարդ մահկանացու . Ես նա երեսունը կամ այլ երեսուն տարուան . Ամուս-

(*) Կ'ըսուի յուրաքանչ զլխաւոր , վասն զի իմաստով յարաբրութիւն ունի բարեւէ զլխաւորին հետ :

նացեալ ես դու . — Զեմ է ամառանցեալ . Ես երթամ
այսօր , վաղիւ երթան դու :

294. Հ . Ի՞նչ է Ծածկեալ նախադասութիւն :

Պ. Ծածկեալ կ'ըսուի նախադասութիւն մը ,
երբ այնպիսի բառ է որ նախադասութեան զօ-
րութիւն ունի , առանց յայտնի ունենալու տէր
բայի , բայ և ստորոգելի : Ծածկեալ նախադասու-
թիւններ են Աջարիանեանք , այս և ոչ բառերը . զոր
օրինակ . Բա՛նէ , ընդէր շանսացի քեզ . Տեսա՞ր
զնա . — Այս : Բա՛նէ , դրուած է փոխանակ եւը-
ես ես . Այս , է փոխանակ Տեսայ վա :

295. Հ . Նախադասութեան էական մասերը , տէր
բային , ստորոգելին և բայլ ի՞նչ կը կոչուին :

Պ. Տէր բային (որ և ենթակայ կ'ըսուի) և
ստորոգելին կը կոչուին նախադասութեան եղուն-
ռը . բայլ որ է էական բայլ՝ կը կոչուի կապ :

296. Հ . Նախադասութեան եղները քանի կերպ
կրնան ըլլալ :

Պ. Նախադասութեան երկու եղբերն եւս
կրնան ըլլալ , Պարզ կամ Բաղադրեալ , Լոկ կամ Բազ-
մանան :

297. Հ . Ե՞րբ Պարզ է տէր բային կամ ենթա-
կան , Ե՞րբ Բաղադրեալ :

Պ. Տէր բային կամ ենթական Պարզ է , երբ
ժ բառ է . զոր օրինակ , Պետրոս կ'ելլէր : Բաղադրեալ
է , երբ Երևան կամ առելի բառ է . զոր օրինակ ,
Պետրոս և Յաղացանէն կ'ելլէին :

298. Հ . Ե՞րբ Լոկ է տէր բային և Ե՞րբ Բազմանան :

Պ. Տէր բային Լոկ է , երբ յաւելուած , այ-
սէնըն՝ աժական , կամ ինդիր կամ բացայայտիչ :

կամ միջանկեալ նախադասութիւն մը չունի , ինչ-
պէս է վերի օրինակներուն մէջ . տէր բային Բազ-
մանան է , երբ այնպիսի յաւելուած մ'ունի , զոր
օրինակ , Մէջն Պետրոս էր կայսր Ռուսաց : Պետրոս
Ա . Կայսր Ռուսաց , կոչուեցաւ մէծ . Զօրալարք Ավետ-
իստրէ առին անոր տէրութիւնը . Աղեքսանդր Ար-
յանեց Դաբէնէ , էր արքայ Մակեդոնացւոց :

299. Հ . Ե՞րբ Պարզ է ստորոգելին :

Պ. Ստորոգելին Պարզ է , երբ մի բառ է .
զոր օրինակ , Գաւիթ էր հավիտ . ստորոգելին Բա-
զադրեալ է , երբ երկու կամ առելի բառ է . զոր օ-
րինակ , Գաւիթ էր Տարբարէ և Բագանար :

300. Հ . Ե՞րբ Լոկ է ստորոգելին և Ե՞րբ Բազմա-
ման :

Պ. Լոկ է ստորոգելին , երբ յաւելուած
այսինքն՝ ածական , ինդիր կամ մակրայ չունի .
ինչպէս է վերի երկու օրինակներուն մէջ . ստորո-
գելին Բազմանան է , երբ այնպիսի յաւելուած մը
ունի . Գաւիթ էր հովիս աղբար , և եղաւ Բագանար
Խորայէլ . Գաւիթ էր պատանի Երան սունեց զաղինի :

301. Հ . Տրամաբանական լուծման մէջ ենթակա-
յին և ստորոգելոյն յաւելուածներն ի՞նչպէս կը
նկատուին :

Պ. Տրամաբանական լուծման մէջ ենթակա-
յին ստորոգելոյն բոլոր յաւելուածները բուն
ենթակային և ստորոգելոյն հետ միանգամայն կը
նկատուին իրեւ ենթակայի և ստորոգելի : Զոր օ-
րինակ սա օրինակին մէջ , Դաշտաբէ և Բագան-
ար Խորայէլ , եղաւ այս ըստ Պետրոս Առաքածոյ , ըստ Քե-
րականութեան Դաշտին միայն է ենթակայ կամ տէր

բայի , և այր է միայն ստորոգելի . բայց ըստ տրամաբանական լուծման , դասին , իւր յաւելուածովը , մարդու և նահասոր խորացել , է ենթակայ , և այր , իւր յաւելուածովն , ըստ սրբին Աստուծոյ , է ստորոգելի .

Հ. Բ. Պ. Ո. Ս.

ՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱՅԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

Առաջինական մէժարոյ է , կամ ԱԵՇԱՐՈՅ է առաջինական :

Այս նախագասութիւնն է բացարձանի հիմասոր , քանզի առաջին է և չունի կախումն ուրիշ նախագասութենէ : Ենթական է , առաջինական , պարզ և լոկ , վասնզի մի բառ է և է առանց յաւելուածոյ Բայն է : Ստորոգելին է , մէժարոյ , պարզ և լոկ , քանզի մի բառ է և չունի յաւելուած :

Արքանիւ և առաջինական մէժարոյ և յանհալի են :

Այս նախագասութիւնը բացարձակ գլխաւոր է : Ենթական է , արքանիւ և առաջինական , բաղադրեալ , քանզի երկու բառ է , բայց ըն է , քանզի յաւելուած չունի : Բայն է , ին : Ստորոգելին , մէժարոյ և յանհալի , բաղադրեալ է , քանզի երկու բառ է , և լոկ է , վասն զի յաւելուած չունի :

Մոռայ անդառա մի ճնշն , և պեսայ ձերունի ո՞ն պատռուական :

Երկու նախագասութիւն կայ այս օրինակին մէջ . Մոռայ անդառա մի ճնշն , նախագասութիւն բացարձակ գլխաւոր և զեղչեալ . զեղչեալ է , վասն զի երերէն մին , այն է՝ ենթական , ես , լուելեայն կ'իմացուի : Այս ենթական , ես , է պարզ և լոկ , քանզի մի բառ է և յաւելուած չունի : Բայն է , եղա (մոռայ , կը նշանակէ , մանող եղայ) : Ստորոգելին է , մանող . պարզ է , վասնզի մի բառ է . բաղմամասն , քանզի ունի յաւելուած , որ է , անդառա մի ճնշն :

Ես պեսայ ձերունի ո՞ն պատռուական :

Է նախագասութիւն յարաբերական գլխաւոր . քանզի պարբերութեան մէջ առաջին նախագասութիւնը չէ . միանգամայն զեղչեալ է , քանզի ենթական որ է , ես , լուելեայն կ'իմացուի : Այս ենթական , ես , է պարզ և լոկ , քանզի մի բառ է և յաւելուած չունի : Բայն է , եղա , (մեսայ կը նշանակէ՝ ուեսող եղայ) : Ստորոգելին է , մանող . պարզ է , քանզի մի բառ է , բայց բաղմամասն , քանզի ունի յաւելուած , որ է , ձերունի ո՞ն պատռուական :

Էր նա ուարմ Ապողընէ , ըր կը պաշտէր է մէնենին որ նուիրեալ եր այն Աստուծոյն :

Այս պարբերութեան մէջ կայ երեք նախագասութիւն :

Եր նու ժուրմ Աղոստակ :

Նախադասութիւն բացարձակ գլխաւոր, քանզի պարբերութեան մէջ առաջին է : Ենթական է, նու, պարզ և լոկ, քանզի մի բառ է և չունի յաւելուած : Բայն է, եր: Ստորոգելին է, ժուրմ. պարզ քանզի մի բառ է, բազմամասն՝ քանզի ունի յաւելուած, Աղոստակ յատկացուցիչը :

Զոր կը պաշտեր է ժհենէ :

Նախադասութիւն մեկնիչ միջանկեալ. միջանկեալ՝ քանզի առաջին նախադասութենէն կախում ունի, և մեկնիչ՝ քանզի առաջին նախադասութեան իրերւ մեկնութիւն է, և եթէ վերնայ, առաջին նախադասութեան իմաստը չվնասուիր : Այս նախադասութիւնը զեղչեալ է, քանզի լուելեայն կ'իմացա ի ենթական, նու, որ է պարզ և լոկ, քանզի մի բառ է և չունի յաւելուած : Բայն է, եր, (կը պաշտեր կը նշանակէ պաշտոն եր): Ստորոգելին է պաշտոն. պարզ է, քանզի մի բառ է . բազմամասն՝ քանզի ունի յաւելուած բնութեան խնդիրն, է ժհենէ :

Որ նուելեալ եր այս աստվածոյն :

Նախադասութիւն որոշիչ միջանկեալ. միջանկեալ է, քանզի կախում ունի նախընթաց նախադասութենէն, որոնէ, քանզի նախընթաց նախադասութեան հնէնա բառին միտքը կ'որոշէ կամ կ'ամբողջացունէ, այնպէս որ, եթէ այս նախադասու-

թիւնը վերնայ, նախընթաց նախադասութիւնը կը մնայ թերի: Այս նախադասութեան ենթական է, որ պարզ և լոկ, քանզի մի բառ է և չունի յաւելուած : Բայն է, եր: Ստորոգելին է, նուելեալ. պարզ՝ քանզի մի բառ է, բազմամասն՝ քանզի ունի յաւելուած, բնութեան խնդիրն, այս աստվածոյն :

Ուն պարուան եր :

Նախադասութիւն բացարձակ գլխաւոր: Այս նախադասութիւնը զեղչեալ է, քանզի ենթական և ստորոգելին կ'իմացուին լուելեայն: Ենթական է, նու. պարզ և լոկ, քանզի մի բառ է և չունի յաւելուած : Բայն է, եր: Ստորոգելին է, նուուկ որ լուելեայն կ'իմացուի . է պարզ, քանզի մի բառ է. բազմամասն՝ քանզի ունի յաւելուած, ուն պարուան: Այս զեղչեալ նախադասութիւնը կը լրանայ այսպէս, իբ նու ուն պարուան նուուկ:

Բայն է, իսբեցէր զի՞ :

Այս օրինակին մէջ երկու նախադասութիւն կայ: Բայն է, նախադասութիւն բացարձակ գլխաւոր, ծածկեալ. ունի սա նախադասութեան զօրութիւնը, եղան էմ ես: Ես, ենթակայ, պարզ և լոկ, քանզի մի բառ է և չունի յաւելուած : Բայն է, եւոր (խաբեցիր, է փոխանակ եւոր իսբող): Ստորոգելին է, իսբող. պարզ՝ քանզի մի բառ է. բազմամասն՝ քանզի ունի յաւելուած սեռի խնդիրը զի՞ :

Գ.

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ

302. Հ. Ի՞նչ է կհսադրութիւն :

Պ. կհսադրութիւն է զատել խօսքի կամ պարբերութեան մը անդամներն իրարմէ մասնաւոր նշաններով որ կը կոչուին Վեր :

303. Հ. Ի՞նչ է Պարբերութիւն :

Պ. Պարբերութիւն կը կոչուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախադասութիւններէ որ կը կոչուին Անդամի պարբերութեան . և կապուած են իրարու հետ իրբեւ թհոռնթիւն , կամ Հակադրութիւն , և կամ Հետեւութիւն : Զոր օրինակ ,

Ենէ կայ բան մը որ կը յայտնէ մեկ մեր տկարութիւնը , այն վիճակն է յորում կը գտնուինք մեր ծնընդենքն իսկ և իսկ յետոյ :

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ կը խնդրեն հարստութիւն . բայց և այնպէս երջանիկ հարուստներ կը գտնուին դուն ուրեք :

Մեր թագաւորը բարի է և մարդասէր . առ կը բնանք պաղատել անոր գթութեանը :

Այս երեք պարբերութեանց առաջնոյն անդամները կապուած են իրարու հետ թհոռնթեամբ . երկրորդին անդամներն Հակադրեալ են իրարու . երրորդինը՝ Պատառ կամ Հետեւութիւն են :

304. Հ. Ա՞ր խօսքը պարբերութիւն չէ :

Պ. Ըստ քերտկանութեան պարբերութիւն չէ երկայն խօսք մը ուր նախադասութիւններն ամենեւին կախում չունին իրարմէ , այլ իրարու քով շարուելով կու տան ընդհանուր իմաստ մը . զոր օրինակ , սա խօսքը :

Առողջութիւնն է լոկ անուն , կեանքն է սոսկ երազ , փառքն է երեւոյթ միայն , զուարձութիւնք և հեշտութիւնք չեն բայց վոանգաւոր զրոսանք :

305. Հ. Պարբերութիւնը քանի՞ տեսակ է :

Պ. Պարբերութիւնը երկու տեսակ է , Պարզ և Բաղադրեալ :

306. Հ. Պարբերութիւնը երբ Պարզ է :

Պ. Պարբերութիւնը Պարզ է , երբ երկու անդամներն եւս են մէն մի նախադասութիւն . զոր օրինակ ,

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ կը խնդրեն հարստութիւն . բայց և այնպէս երջանիկ հարուստներ ո՛չչափ սակաւ են :

307. Հ. Պարբերութիւն մը երբ Բաղադրեալ է :

Պ. Պարբերութիւն մը Բաղադրեալ է , երբ անդամներէն մին կամ երկոքին եւս , կը բաղկանան երկու կամ աւելի նախադասութիւնէ : Բաղադրեալ է սա պարբերութիւնը :

Եթէ մարդիկ ունենային աւելի յարգ արդարութեան վրայ և ճանչնային ճշմարտութեան զօրութիւնը , ոչ միայն ընկերութիւնն աւելի կը մօտենար իւր նախատակին , այլ և առանձնական շահերը կ'ունենային աւելի ասլահով երաշխաւորութիւն :

308. Հ. Հայերէն կէտաղըութեան նշաններն ու
բռնը են :

Պ. Հայերէն կէտաղըութեան նշաններն են
իրենց անուններով . (‘) Բահթ , (‘) Ստորակիտ ,
(‘) Միջակիտ , (‘) Վերջակիտ , (‘) Շեշտ , (‘) Պա-
րսկի , (‘) Երկար , (‘‘) Կայուսում , (—) Գիշ , (‘) Չա-
կակերս , (‘) Փակագիծ , (‘) Ապաժարոց :

309. Հ. Ո՞ւր կը գործածուի Բահթ :

Պ. Բահթ կը գործածուի , 1° Հոն ուր բառ
մը զեղչուած է , զոր օրինակ .

Փրանկներն՝ վայրենի ժողովուրդ , բանջարով , պըտ-
զով , արմատներով և որսով միայն կ'ապրէին : Արե-
գակին , լուսին , աստեղք և գետք էին անոնց աստ-
ուածներն . խոր անձաւներ՝ անոնց մեհեանները . Դըրա-
ուիդ կոչուած քուրմեր՝ անոնց աստեղարաշխները
քժիկները և դատաւորները . փայտակերտ , կաւագործ
հիւզեր՝ անոնց քաղաքները . իսկ անոնց առուտուրն
էր փոխանակութեամբ :

2° Բառնով կը զատուի նախադասութեան մը այն
մասը որ նախադասութեան մը սկիզբը դրուած է ,
և չունենալով դիմաւոր բայ՝ չէ ամրող նախադա-
սութիւն , այլ է խնդիր այն նախադասութեան ,
զոր օրինակ .

Միշտ վարագան և անուուժունեան մէջ ապրելք յանցացած՝
գրի ի մտի երթալ ի Սիկիլիա :

Գործին այնաշէ անհնարին դժուարունիւնները ուեսնելը՝ ի-
մացանք թէ մեր բոլոր ջանքը պիտի լինէր ընդունայն :
Պատրանին ընդ ըւնդ էր հօր անուան՝ սկսաւ թափել ջերմ
արտասուս :

Յեւ լինելոյ հիացմամբ հանդիսաւուն այսպիսէ ուեսարանէ մը
սկսանք նշմարել Կրետէ կղզւոյն լեռները :

3° Յարաբերական գերասնուամբ սկսեալ միջան-
կեալ նախադասութեանց վերջը . զոր օրինակ .

Աստուծոյ մեծագործութեան գահն է բնութիւնը .
այն մարդը որ ճառախոն և իւլամուս է այնո՞ւ կ'ամրառնայ
տակաւ ամենակարողաւթեան ներքին գահը :

Շնչըրին որ իսացական կարողութեամբ սորբին է ուն զշուն և
վատիկն ընդունած է բնութենէ ծիրք գրեթէ հաւասար
խօսողութեան :

Կարմիր ծովը որ կը բաժնէ վլուաբիս ի վլուին Երևանից և
Եփականունէ ունի երեք հարիւր յիսուն մղոն երկայնու-
թիւն և քառասուն մղոն լայնութիւն :

310. Հ. Ո՞ւր կը գործածուի Ստորակիտ :

Պ. Ստորակիտ կը գործածուի զատելու հա-
մար .

1° Նախադասութեան նօյնառեսակ մասերը ,
ինչպէս երիսու կամ աւելի տէր բայի , սեռի խըն-
դիր , ածական ևա , եթէ տառնը և , կամ , բայց , այ-
շաղկապներէն միով կապուած չեն . զոր օրինակ .
Աշխարհի փրայ ըր , իսկառ , վերմ , ցորդ , պինդ , ըսծ ,
էրեւէլ մարմիններ կը գանուին խառն :

Տիւրացիք են արտաեստագիտ , համբերուն , աշխատակիր ,
առիտապուտ և ինայող :

Նենդունիկան , բանառնիկան , սովերմանիկան , ուսուեր և
ուսուերապնան + այն երկրին մէջ լսել չեն տար երբէք իւ-
նեմց անագորոյն ձայնը :

Այս ամբաւ երկրագունդուն իւր երեսին վրայ կ'ընժայեցունէ մեզ լեռներ, յորեր, դաշտեր, ծաղիքներ, այլեր, ջիհեր, հրաբուխներ:

Նա այցելութիւն կ'ընէր գեղջկաց տուներուն. կը տեղեկանայր անոնց քիչնին, ընդունեաց, որուստ, բույսն, ջղղլրուն, կարուսնեան, արց, պարուստ, և սուրել շար բաներու:

Այս փիլիսոփայն կը ճանչնար ուրախութեամբ թէ հոգին կ'ըմբռնէ, կը խորհի, կը ուրախուսի, կը հաստայ, կ'իմաստասիք, կը ճանչնայ, կը խօֆ և կը խորհրդանէ:

Եթէ կարեւոր է որ տղայք չմնան միշտ իւակ՝ այլ մինին կիրթ և վարժ, հարք և դաստիարակք պարտին չատ կանուխ խրասել զնոսա, սողնել, կշռայնել, ուղել, առարել, հրանունէլ և համունել:

2° Բացայայտիչը իւր մասերով բացայայտեաւէն. զոր օրինակ.

Աշխարհիս մեծագոյն տէրութեան, Հասանական ոլորտնեան, վրայ Աստուծոյ գատաստանները թաքուն չեն մեզ:

3° Նախադրութեամբ խնդիրներ որ երկայն են, զոր օրինակ.

Նաւ նորա, յեր լինելոյ ընդ երկար իսպանի հաղոց, թաղուեցաւ ալեաց մեջ:

Տիւրացիք, իրենց ժողովական պարագանեաւ, զայրացուած էին զարգայն մեծ Սեսոստրիս որ կը թագաւորէր յնգիպտոս, և տիրած էր բազում թագաւորութեանց: . . . Սեսոստրիս, իսկաքանչշուանելու համար անոնց ամբարդաստաննենը, դրած էր ի մոտ շփոթել անոնց տուր եւ առն բոլոր ծովերու վրայ:

4° Բայցոդարձութեամբ ըսուած անուն մը, այսինքն՝ կոչական մը, միջարկութիւն մը, զոր օրինակ.

Ահա, արքայ, վրէժիսնդիրներդ քու թշնամիներուդ դէմ: Արժան է, ո'ր գերեակ, որ յայտնեամ քեզ:

5° Կ'ըսեմ, ըստու, պատուիանեց, իրինց, և ասոնց նման բառեր որ ուրիշի խօսք յառաջ կը բերեն, զոր օրինակ.

Ո՞վ է հայրդ որոյ ի խնդիր ելած ես, ըստու ո՞վսունէն: Ոդիսեւս կը կոչուի, պատուիանեց Տելեմոն: Կամ,

Դիցունին ըստու, Ո՞վ է հայրդ որոյ ելած ես ի խնդիր: Տելեմոն պատուիան պուտաս, Հայրս կը կոչուի Ոդիսեւս:

6° Ստորակէտով կը բաժնուին նախադասութիւններ որ կը կազմեն այնպիսի խօսք մը որ պարբերութիւն չէ. մանաւանդ եթէ նախադասութիւններն երկոյն են, զոր օրինակ.

Առողջութիւնն է լոկ անուն, կեանքն է սոսկ երազ, փառքն է երեւոյթ միայն, իսկ զուարձութիւնք և հեշտութիւնք ոչ այլ ինչ են եթէ ոչ վունդաւոր զրոսանք:

Այսպիսի խօսքի մէջ եթէ յաջորդ նախադասութիւնք նախլընթացին կամ տուաջնոյն իրը մեկնութիւն են կամ թուումն մասանց, նախլընթաց նախադասութիւնը յաջորդներէն կը բաժնուի միջակէտով, զոր օրինակ:

Երբ թագաւորաց սիրտը մարդոց ձեռաց մէջ է, քարէ, կարծես թէ ամենայն ինչ կը միարանի ի թիւրել զնոսա. չողոքորթութիւնը կը խարէ, չար խրատուններ կը գրաւեն, չար օրինակներ կը ձգեն զնոսա, գործերուն պէսպիսութիւնը կը ցրուէ անոնց միտքը:

311. Հ. Գործեալ Երբ կը գործածուի Միջակիտ :

Պ. Երբ պարբերութեան մը անդամները բազագրեալ են, այսինքն՝ խրաբանչիւր կամ սմանը կը բազկանան երկու կամ աւելի երկորդական նաև խափառութիւններէ, այս նախագաղատառութիւնը կը զատուին իրարմէ ստորակէտով, իսկ բուն անդամնը պարբերութեան կը զատուին միջակէտով. զոր օրինակ .

Մարդ չկրնար երկար ատեն գժտեալ մնալ անոնց հետ որ համամիտ և համակարծիք են իրեն, հուսկութեան կը հաշտուի . բայց վայրապար կ'աշխատի լինել սիրով և միաբանութեամբ անոնց հետ որոց խորհուրդը և կարծիքն հայտառակ են իրոցն, այսպիսիք կը բաժնուին իրարմէ կանուխ կամ անդամն :

312. Հ. Միշտ այս է բաղադրեալ անդամով պարբերութեանց կանոնը :

Պ. Երբ եմն, մանաւանդ երբ պարբերութեան գլխուոր անդամք չեն իրարու հակոգրեալ կամ իրարմէ հետեւութիւն, այլ լոկ կախում կամ թէութիւն կը ցուցնեն, երկորդական անդամք կամ նախագաղատառութիւնը կը զատուին բութով, իսկ զլիաւորները կամ բուն անդամք՝ ստորակէտով, զոր օրինակ .

Անչ նիւթոյ վրայ և ճառեն՝ ինչ խորհուրդ և ծնանի անոնց մոաց մէջ ինչ զգացմունք և գրաւեն անոնց սիրաը, բոլորը կը նկարագրեն մանր և այնպէս ինչպէս են իսկ :

Եթէ բանաստեղծութիւն, երկրաչափութիւն, աստեղագիտութիւն և բոլոր գիտութիւնք առ հասարակ,

իւրաքանչիւր սակաւ ինչ տարբերութեամբ, կը գիմեն ի կատարումն՝ մինչդեռ ընկերական ուսումն այն ինչ ելած կը թուի որրոցէն, պատճառն այս է՝ որ մարդիկ, յառաջ քան փորձիւ հասու լինելն ընկերական սկզբանց, ստիլուեցան առնուլ ընկերական ձեւ և տալ իրենք իրենց օրէնք և բարոյական կանոններ :

313. Հ. Ե՞րբ կը գործածուի Վերջակիտ :

Պ. Երբ իմաստ մը, թէ պարբերութիւն ըլլայ, այսինքն՝ իրարու հետ աղխախեալ նախադասութեանց շար մը, և եթէ ոչ, կը վերջանայ, այսպիսի իմաստի վերջը կը գրուի Վերջակիտ :

Եթէ մեր նպատակները կամ գիտաւորութիւններն են ուղիղ և անստգիւտ, կրնանք ունենալ մեծ յոյս յաջողելու . և եթէ չյաջողինք, չաջողութեամբ լինիմք ոչ թէ պատժեալ այլ զրկեալ: Բայց երբ մեր նպատակներն են թիւր և չար և յուսացուած յաջողութիւնը կը փախչի մենէ, զրկող և պատժեալ ենք միանդամայն . զրկող ենք, քանզի անիրաւ էր մեր նպատակը . պատժեալ ենք, քանզի չաջողութիւնը որ առառաւելն արտմութիւն կը բերէ ուղղամոին և արդարախոհին, չարին և անիրաւին կը բերէ նաեւ յուսահատութիւն :

314. Հ. Ի՞նչ կը կոչուի վերջակէտիւ վիակուած խօսք մը :

Պ. Խօսք մը որ վերջակէտիւ կը փակուի կամ կը լրանայ՝ կը կոչուի լրացեալ կամ Անրողջ խօսք :

315. Հ. Գրութեան մէջ նոր տողով սկսեալ մասեր ի՞նչ կը կոչուին :

Պ. Գրութեան մէջ խօսքեր կամ պարբե-

բութիւններ որ նոր տողով կը սկսին՝ կը կոչուին
Հատած (բարակրավի) :

316. Հ. Հատած մը քանի՞ լրացեալ խօսք կրնայ
պարունակել:

Պ. Հատած մը կրնայ պարունակել մի և կամ
աւելի լրացեալ խօսք . ուստի և հատածի մը մէջ
որչափ վերջակէտ կայ, այնչափ լրացեալ խօսք կայ :

317. Հ. Ե՞րբ ամենեւին հարկ չէ գործածել կէտ :

Պ. Կէտ դնել հարկ չէ երկու նոյնատեսակ
բառերու մէջ որ, և, կամ, բայց և ուրիշ ասոնց
նման շաղկապով կապուած են, և չունին իրենցմէ
կախեալ մասեր, այսպէս կը գրենք առանց կէտի .

Պատիժը և մոլութիւնն անբաժին են : Քեզ վերա-
բերելոց կորուսոց կամ փրկութիւնը կախեալ է քու
կորսակնէդ կամ փրկութենէդ : Մարդուս կիրքն անոր
վնասակար բայց սիրելի թշնամիներն են :

29. Կրկնուած շաղկապներով կամ մակրայներով
կապուած մասեր չեն ընդունիր կէտ, զոր օրինակ .

Ամենայն ուրեք կը տեսնենք ծաղկեալ նէ՛ Պոմոնայի
պառուղները և նէ՛ Փլորայի ընծայները :

Մի թողուր և ագահութեան և հալարտութեան
ընդ քարշ ածել գքեղ :

30. Կէտ չդրուիր նաեւ ոք, նէ շաղկապով սկսեալ
խօսք մը առաջ որ նախընթաց բային խնդիր է .
զոր օրինակ .

Զենք ախորժիր ոք յանդիմանէ զմեղ ոք, քանի
չենք սիրել ուղղուիլ :

Շողոքորթութենէ կը խարուինք, քանզի կը կար-
ծենք ներիներն այնչափ կոյր են ոք չեն տեսներ
մեր մոլութիւնները :

318. Հ. Ե՞րբ կը գործածուի Շեշտ :

Պ. Շեշտը կը գրուի երբեմն բայերուն հրա-
մայականին, բացասական կամ արգելական մակ-
րայներու՝ որպիսի են ու, ֆ, և կոչականի վրայ :

Գնա՛, գնա՛, աստուածորդի՛դ Պարսից, ահա հայր
քո և աստուած :

Մի՛ սիրէք զաշխարհ, և մի՛ որ ինչ աշխարհի է :

Մի՛ թողուր ո՛չ ագահութեան և ո՛չ հպարտու-
թեան ընդ քարշ ածել գքեղ :

319. Հ. Ի՞նչ է Պարոյի :

Պ. Պարոյին (օ) է հարցական նշան և կը դըր-
ուի այն բառին վրայ որոյ վրայ կ'ինայ հարցումը :

Ուր դրիք զնա : Կը տեսնես, եղբայր, ո'րչափ բիւրք
հաւատացելոց են :

320. Հ. Ի՞նչ է Երիար :

Պ. Երիարը (՛) զարմացական նշան է և կը
դըրուի հոգւոյն կիրքն յայտնող բառերու վրայ :

Մեռաւ, բարէ : Վայ ինձ, եղկելոյս : Բարի՛ հայր :
Աղնիւ որդեակ :

321. Հ. Ի՞նչ է Լախոռու՛ :

Պ. Լախոռուն է երեք կէտ (. . .) և կը գըր-
ուի ուր խօսքը թերի թողուած է դիտմամբ :

Վընդունէի, եթէ . . . :

322. Հ. Ի՞նչ է գիծ :

Պ. Գիծը (—) կը գործածուի նախ հարցման
և պատասխանւոյ սկիզբը, երբ, իւնէ, ըստ, պա-
տասխան քուու, իրնեց բառերը գործածուած չեն :

«Ո՞վ է քու հայրդ, ըստ դիցուհին : »

— «Ողիսեւս կը կոչուի իմ հայրս : »

Երկրորդ՝ փոխանակ փակագծի :

323. Հ. Ի՞նչ է Զակերտ :

Պ. Զակերտը () երկու ստորակէտ է որ կը
գրուի խօսքի մը սկիզբը և վերջը, եթէ խօսքը
կոչում, այսինքն ուրիշ տեղէ առնուած, և կամ
ուրիշի խօսք է, ինչպէս է վերի օրինակը :

324. Հ. Ի՞նչ է Փակագիծ :

Պ. Փակագիծն է երկու կիսաբոլորակ (), և
բուն խօսքէն կը զատէ մի կամ աւելի բառ, կամ
նաեւ ամրող նախադասութիւն մը որ խօսքին
մարմնէն դուրս են, բայց անոր յաւելուած կամ
մեկնութիւն :

Անսուտրիս դրած էր ի մտի, խոնարհեցունելու հա-
մար անոնց (Տիւրացւոց) հպարտութիւնը, խոռվել ա-
նոնց տուրեւառը բոլոր ծովերու մէջ :

325. Հ. Ի՞նչ է Ապաթարց :

Պ. Ապաթարցն է տեսակ մը ստորակէտ ()
որ կը ճատեալ գրի մը տեղ կը դրուի զոր օրինակ.


Մ'արթնցուներ, մ'իմանար, մ'առնուր ։ փոխանակ
մի արթնցուներ, մի իմանար, մ' առնուր :

ՑԱՆԿ

	Երես
Յառաջաբան	9
Ի՞նչ է զերականութիւն, եւայլն	9
Մասն առաջին, ինն մասնակ բանի	11
1. ԱՆՈՒՆ	»
Հողով	14
Հպովմնակ Ա. Բ. Գ. Ե. Ե.	15—21
Գիրերու փոփոխմաց վրայ	22
Զարտուղի հողմնակ	23
2. ՅՕՒ	28
3. ԱՇԱԿԱՆ	31
1. Հասարակ աճականիք	33
2. Թուական աճականիք	36
3. Ստացական աճական	93
4. Ցուցական աճական	44
5. Ասորու աճական	»
4. ԴԵՐԱՆՈՒՆ	44
1. Էական գերանուն	»
2. Ստացական գերանուն	47
3. Ցուցական գերանուն	50
4. Ասորու գերանուն	»
5. Հարցական գերանուն	54
6. Յարաբերական գերանուն	53
5. ԲԱՑ	56

	Եպես	
Եական բայ		59
Ա. Լծորդութիւն		60
Բ. Լծորդութիւն		68
Գ. Լծորդութիւն		73
Ա. Զեւ		74
Բ. Զեւ		79
Գ. Լծորդութիւն		83
Զարտուղի բայեր		88
Միագէմ բայ		94
Բազագրեալ ժամանակ		»
Հարցական ձեւ բայի		97
Բացասական ձեւ բայի		»
6. ՄԱԿԲԱՑ		104
7. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ		106
8. ՇԱՂԱՊ		107
9. ՄԻԶԱՐԿՈՒԹԻՒՆ		»
Մասն երկրորդ, Համաձայնութիւն		113
1. ՏԵՐ ԲՈՅԻ		»
2. ԼՐԱՑՈՒՑԻՉ		118
1. Վերադիր		120
2. Ստորոգելի		124
3. Ինդիր		124
Բացայսիչ և բացայսին		130
Կոչական		131
ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՑ ԳԻՏԵԼԻՔ		138
Գլցական		»
Աժական		139
Յօդ		143
Դերաստէն		151

Բայ	159
ԱՅԼ ԵԽ ԱՅԼ ԲԱՅԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ	160
Նախդիր	161
Մակբայ	163
Շաղկապ	164
Աճանցեալ և բարդ բառեր	170
ՅԱԿԵԼՈՒԱԾ	175
Ա. ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ	176
Քերականական ձեւը	179
Բ. Լուծումն	188
1. Լուծումն քերականական	"
Օրինակը քերականական լուծման	190
2. Լուծումն տրամադրանական	192
Օրինակը տրամադրանական լուծման	198
Գ. ԿԵՏԱՐՈՒԹԻՒՆ	202



2531-2533

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0059653

ՀՀ Ազգային գրադարան



NL0059654

ՀՀ Ազգային գրադարան



NL0059655

